

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — «Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսութեան համար Արցախի հարցը
միշտ պիտի մնայ առաջնահերթ» 445

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — «Համախմբուի՛նք
համահայկական օրակարգի մը շուրջ» 447

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ 448

ՀՈԿՈՒՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

* * * — Արամ Ա. Կաթողիկոս Ամերիկայի Միացեալ Նահանգներու
Արեւելեան Հայոց Թեմէն ներս..... 451

* * * — Արամ Ա. Կաթողիկոս Այնճարի հայկական աւանէն ներս 506

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն
Մատթեոս Աւետարանի (5.1-4) 511

ՔԱՐՈՉԱԽՕՍԱԿԱՆ

ԶԱԻԷՆ ՎՐԴ. ՆԱՃԱՐԵԱՆ — Յոյսով՝ Յոյսին նայիլ 518

ԱՐՄԵՆ ԱԲՂ. ԳԱԼԱՅԾԵԱՆ — «Խաչն կենարար,
որ եղել մեզ փրկութիւն...» 520

ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԷՅԾԵԱՆ — Փա՛ռք Սուրբ Խաչիդ, ալելուիա 523

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — «Եկեղեցին ո՛չ վայր է
եւ ո՛չ ալ կառոյց, այլ՝ հոգեւոր ու բարոյական արժէքներու
կենսագործման առաքելութիւն» 527

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ


ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը
Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին 531

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԷՌՆԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆԵԱՆ, ԷԼՅԱ ՍԱՐԻԲԷԿԵԱՆ —
Հասկ Հայագիտական տարեգիրք (2011-2023, Նոր շրջան, ԺԳ. Հատոր) 533

ԴՐ. ՀԱՅԿ ՍՐԿ. ԻԹԻՒՃԵԱՆ — Մի քանի անձնական տպաւորութիւններ Հասկ Հայագիտական տարեգիրքի վերանորոգման Նոր Շրջանի ԺԳ. հատորոյ (2011-2024) հրատարակութեան առթիւ	538
ՅՕԴՈՒԱԾ	
ՓՐՈՖ. ԴՈԿՏ. ԵՐՈՒԱՆԴ Զ. ԶԱՍՈՒՆԻ — Հայ Եկեղեցին ապագայնացնելու նկրտումը	542
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎԿՈՒԹԻՒՆՆԵՐ	553
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	555
ՃԳՆԱԺԱՄ	556
ՏՕՆԱԿԱՆ	560
ՀԱՅ ԴԱՏ	562
ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	564
ԴՊՐԵՎԱՆՔ	565
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՏԻԱՐԱՎԿՈՒԹԻՒՆ	576
ԼՈՒԻԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ	579
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ	581





ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՄԱԿԳԻՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՂԳ. ՏԱՐԻ 2024

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՅՈՎՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 9-10

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

«ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՐՅԸ ՄԻՇՏ ՊԻՏԻ ՄՆԱՅ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹ»

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Առթիլիասի Մայրավանքէն Յայրապետական օրհնութեամբ, ազգային վառ ապրումներով եւ վերանորոգ հաւատքով, կամքով ու տեսիլքով կ'ողջունենք մեր ժողովուրդի սիրելի զաւակները՝ ի Յայաստան եւ Սփիւռս աշխարհի:

Հայ ժողովուրդը կ'ապրի իր ժամանակակից պատմութեան ամենէն ճակատագրական հանգրուանը: Հայաթափուած Է Արցախը, Հայաստանը կը մնայ ենթակայ Ազրայեյճանի սպառնալիքներուն: Փաստօրէն Հայաստանը առանձին Է, իրաւ բարեկամ չունի: Ահաւոր վտանգներով եւ աննախատեսելի հետեւանքներով լեցուն ներկայ կացութեան դիմաց չենք կրնար, իրաւունք չունինք լուռ մնալու: Հետեւաբար, որեւէ ժամանակէ աւելի, ոյժերու համախմբումը ու մեր ժողովուրդի միասնականութեան ամրապնդումը համահայկական օրակարգի մը շուրջ՝ հրամայական Է ու առաջնահերթ:

* Պատգամ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Արցախի Հանրապետութեան հռչակման 33-րդ ամեակին առիթով, 2 Սեպտեմբեր 2024-ին:

Ձերմօրեն կ'ողջունենք Արցախի նուիրուած ներկայ հաւաքը: Արցախը մեզի համար անցեալ չէ: Եթէ թշնամին Արցախը գրաւելով համոզուած է, թէ Արցախի հարցը լուծուած է, մեր ժողովուրդին համար Արցախի հարցը լուծուած չէ՝ այնքան ատեն որ Արցախի ժողովուրդը վերադարձած չէ եւ իր ինքնորոշման իրաւունքը վերականգնած չէ իր պատմական հողերուն վրայ՝ միջազգային հովանիին ներքեւ: Արդարեւ, Արցախի հայկական պատկանելիութիւնը, պատմականօրէն եւ միջազգային իրաւունքի տուեալներով ամրագրուած, կարելի չէ գէնքի ոյժով լուծուած նկատել: Պատմութիւնը կը վկայէ, թէ պայմաններու բերումով կատարուած գրաւումները միշտ եղած են ժամանակաւոր:

Արդ, մեր ժողովուրդին համար Արցախի հայկական պատկանելիութեան ամբողջական վերականգնումը պետք է դառնայ ամենօրեայ պայքար, նախ՝ ներքին ճակատի վրայ: Այս համազգային պայքարին շուրջ պետք է համախմբուին՝ Հայաստանի պետութիւնը, մեր եկեղեցին, մեր ազգային կառոյցները, Հայաստանն ու Սփիւռքը: Արցախի հայկական պատկանելիութեան վերականգնումի մեր յանձնառութիւնը պետք է նաեւ մեզ մղէ հետեւողական ու ծրագրուած աշխատանքի՝ միջազգային համայնքէն ներս: Պետական, քաղաքական, կրօնական, մշակութային ու ակադեմական շրջանակներէն ներս փաստացի տուեալներով հարկ է շեշտել ու վերաշեշտել Արցախի հայկական պատկանելիութիւնը: Այս գործընթացքին առընթեր, հարկ է մօտէն հետեւիլ շրջանէն ներս տեղի ունեցող աշխարհաքաղաքական պայմաններու հոլովոյթին՝ դիւանագիտական ճկունութեամբ եւ մարտունակ ոգիով, հեռու մնալով գիշումի քաղաքականութենէն: Միաժամանակ անհրաժեշտ է նաեւ Հայոց բանակին հզօրացումը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար Արցախի հարցը միշտ պիտի մնայ առաջնահերթ: Պետական պատասխանատուներուն, կրօնական ներկայացուցիչներուն ու դիւանագիտական մարմիններուն հետ մեր հանդիպումներուն ընթացքին պիտի շարունակենք կարեւորութեամբ շեշտել Արցախի հարցին ամբողջական ու արդար լուծում տալու հրամայականը, ինչպէս նաեւ՝ մեր քաղաքական ու պետական բանտարկեալներուն շուտափոյթ ազատ արձակումը:

Հետեւաբար, սիրելի՛ Արցախի Հայութիւն, Սփիւռք մի՛ դառնար, կառչած մնայ քու դատիդ, հերոսներու արիւնով թրծուած հողիդ, սուրբերու աղօթքով շաղախուած հոգեմտաւոր կառոյցներուդ: Մեր ժողովուրդը կողքիդ է՝ աջակից ու զօրակից պայքարիդ:

Թող Աստուած ամուր պահէ մեր պահանջատիրական պայքարը, հզօր՝ Հայաստանի Հանրապետութիւնը եւ միակամ՝ մեր ժողովուրդը:

**«ՀԱՄԱԽՈՒՄՈՒՄԻՆԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ՕՐԱԿԱՐԳԻ ՄԸ ՇՈՒՐՁ»***

Այսօր 21 Սեպտեմբեր է. Հայաստանի Հանրապետության անկախության օրն է. այլ խօսքով, սովորական օր չէ՛, պետք չէ՛ ըլլայ իւրաքանչիւր Հայու եւ ողջ Հայութեան համար: Մեր պատմութեան ընթացքին Հայաստանի անկախութեան համար պայքարեցանք, ստեղծագործեցինք, նոյնիսկ արիւն թափեցինք այն խոր գիտակցութեամբ, որ անկախութիւնը Աստուածատուր իրաւունք է եւ հետեւաբար, սրբազան արժէք է եւ անոր անվթար պահպանումը ու պաշտպանութիւնը պարտաւորութիւնն է իւրաքանչիւր Հայու:

Այսօր, երբ կը նշենք անկախութիւնը Հայաստանի, հարկ է անդրադառնալ, թէ ի՞նչ է մեր պարտաւորութիւնը ու իրաւունքը անոր նկատմամբ: Այսօր մանաւանդ, երբ կը նայինք անկախ Հայաստանին, կ'անդրադառնանք, որ ան ահաւոր տագնապներով է շրջապատուած, ներքին թէ արտաքին, հեռաւոր թէ մօտաւոր: Տագնապներ, որոնք կրնան խախտել Հայրենիքի անկախութեան հիմերը, նոյնիսկ հարցականի տակ առնելով անոր ինքնանկախ գոյութիւնը: Ծի՛շո՛ է, պետք չէ յուսահատ ու յոռետես ըլլալ. սակայն, իրապաշտ արժեւորումը Հայաստանին պարզած ներկայ կացութեան, մեզ կ'առաջնորդէ իրատեսութեան եւ անկասկած, իրատեսութիւնը մեզ պետք է մղէ հաւաքական կամքով ու գիտակից յանձնառութեամբ պաշտպանելու Հայաստանի անկախութիւնը՝ զայն հեռու պահելով անոր հողային ամբողջականութիւնը ու անվտանգութիւնը խաթարող բոլոր տեսակի մօտեցումներէ, զիջումներէ ու համաձայնագրերէ:

Եկեղեցին բոլոր ազգերու կեանքին մէջ միշտ եղած է անկախութեան կողքին՝ զայն նկատելով իր առաքելութեան Եական տարածքներէն մէկը: Այսպէս եղած է մանաւանդ Հայ եկեղեցին մեր ազգի պատմութեան ընթացքին՝ գործնապէս արտայայտելով իր ամուր կեցուածքը այն բոլոր փորձերուն նկատմամբ, որոնք կրնային խաթարել Հայրենիքին անկախութիւնը: Նայինք մեր անցեալին, որպէսզի կարենանք Հայրենիքի ներկան արժեւորել եւ համապատասխան մօտեցումներ ճշդել՝ անոր անկախութիւնը աւելի ամուր հիմերու վրայ դնելու սրբազան նախանձախընդրութեամբ:

Հետեւաբար, մեր ժողովուրդին միասնականութիւնը համահայկական օրակարգի մը շուրջ՝ ոյժերու համախմբումով եւ մեր հաւաքական վճռակամութեան ամրացումով աւելի քան հրամայական է մեր պատմութեան վճռադրոշմ այս հանգրուանին:

Ա՛յս է պատգամը Հայաստանի Հանրապետության անկախութեան տօնին:

* Պատգամ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին Հայաստանի Հանրապետության անկախութեան տօնին առթիւ, 21 Սեպտեմբեր 2024-ին:

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Յակոբ Չիլինկիբեանին, «Ասպետ»ի կարգի շքանշան
ստանալուն առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Ձեզ, որպէս հարազատ զաւակը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որուն հանդէպ սէր ու նախանձախնդրութիւն ցուցաբերած էք միշտ:

Արդարեւ, քաջատէղեակ ենք երկար տարիներէ ի վեր լիբանանահայութեան ազգային կեանքէն ներս Ձեր ունեցած գործօն մասնակցութեան, թէ՛ որպէս բարերար եւ թէ՛ որպէս ժողովական-անդամ ազգային զանազան մարմիններու, որոնց շարքին յատկապէս՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգատարութիւնը վայելող Թոնց Բոյնի ինսամակալութեան: Դուք նաեւ նախանձախնդրութիւն ցուցաբերած էք մեր Սուրբ Աթոռի մշակութային առաքելութեան նկատմամբ, եւ Ձեր նիւթական ներդրումը բերած մեր ծրագիրներու իրականացման մէջ, որոնց կարգին՝ Կաթողիկոսարանի *Շնորհալի* երգչախումբի 40-ամեակին առթիւ, եւ Տեղեկատուական գրասենեակի բարեգարդման համար վերջերս Ձեր կատարած գոյգ նուիրատուութիւնները:

Արդ, ի գնահատութիւն Լիբանանի հայութեան ազգային-եկեղեցական, կրթական-մշակութային կեանքի բարգաւաճման ի խնդիր Ձեր բերած նիւթական թէ՛ բարոյական զօրակցութեան, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

ԱՍՊԵՏԻ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆ

Այս առիթով Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք նաեւ Ձեր ազնիւ

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

Տիկնոջ՝ Տիկին Սօսիին, որ եղաւ միշտ Ձեր կողքին եւ քաջալեր հանդիսացաւ Ձեզի Ձեզ ազգանուէր ու մշակութանուէր գործունէութեանց մէջ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի, Ձեր Տիկնոջ, զաւակներուն եւ Չիլիկիիբեան ընտանիքի բոլոր անդամներուն շնորհէ քաջառողջ եւ երկար կեանք՝ աստուածային անսպառ բարիքներով լեցուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դռան Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 1-ն Մարտի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԶ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Վազգէն Քինյ. Քեօշկերեանին,

Ծաղկեայ փիլոն կրելու արտօնութիւն ստանալուն առթիւ)

Ընդառաջելով Սպահանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Եպս. Չարեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ԾԱՂԿԵԱՅ ՓԻԼՈՆ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 8-ն Մարտի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԶ.*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Ներսէս Քինյ. Պասիլեանին, Ծաղկեայ փիլոն կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Ատրպատականի թեմի Առաջնորդ Գերապատիւ Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ԾԱՂԿԵԱՅ ՓԻԼՈՆ

կրելու արտօնութիւն՝ յընթաց տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 25-ն Յունիսի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԹԲ.*



ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ՆԵՐՍ**

Արամ Ա. Կաթողիկոս 4-23 Հոկտեմբեր 2024-ին, հովուապետական այցելութիւն տուաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Հայոց Թեմի օրինական իշխանութիւնը վայելող Նիւ Ինկլընտի եւ Միջին Ամերիկայի ծովափերուն՝ մինչ ան անցեալ տարի այցելած էր նոյն Թեմի Միջին Ատլանտեան շրջանի ծովափերուն:

Անթիլիասէն ընկերակցութեամբ Տեղեկատուական Բաժանմունքի Տնօրէն՝ Հոգ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեանի եւ Միջին Արեւելքի միջ-եկեղեցական ու Քրիստոնեայ-Իսլամ Բաժանմունքի Վարիչ՝ Հոգ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանի, Նորին Սրբութիւնը այցելեց Փրաւիտընս (Ռոտ Այլընտ), Ինտիլըն Օրշըրտ, Ուստըր, Ուայթընզփիլ, Պոսթըն, Նորթ Անտովըր (Մէսէչուսէթս), Կրանիթ Սիթի, Կլենվիլ, Ուոքհիլըն (Իլլինոյ), Ռէյսին (Ուիսքոնսին) եւ Տիրպորն (Միչիկըն) շրջանները:

ԺԱՄԱՆՈՒՄ

Չորեքշաբթի, 2 Հոկտեմբեր 2024-ին, Նորին Ա. Օծութիւնը հասաւ Նիւ Եորքի միջազգային օդակայան, ուր դիմաւորուեցաւ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեանի, Ազգ. Իշխանութեան Ատենապետ՝ Գնդապետ Արամ Սարաֆեանի եւ Թեմի խումբ մը Հոգեւոր Հայրերու կողմէ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՉ

Նախքան հովուապետական այցելութեան մեկնարկումը, Արամ Ա. Կաթողիկոս Նիւ Եորքի մէջ ընդունեց բարի գալուստ մաղթելու եկած զաւակները: Այս իմաստով, ան հանդիպում ունեցաւ շրջանի Քահանայ Հայրերուն եւ Նիւ Եորքի Ա. Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան հետ, որ կը գլխաւորէր ծխատէր Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Լազարեան: Ան մօտէն իմացաւ անոնց կատարած աշխատանքներուն եւ ծրագիրներուն մասին, զնահատեց զանոնք



եւ շեշտեց մեր եկեղեցւոյ ու ազգին արժէքներն ու աւանդութիւնները առաւելագոյն չափով մեր ժողովուրդի կեանքին մէջ կենսագործելու հրամայականը: Նշենք, որ վերոնշեալ հոգաբարձութիւնը Դպրեվանքին նուիրատուութիւն մը կատարեց՝ առ ի զօրակցութիւն հոգեւոր սպասաւորներու կազմաւորման առաքելութեան:

Աւելի ուշ, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Կաթողիկոսարանիս երկար տարիներու Բարերար՝ Ռիչըրտ Գարոլանը: Գարոլան ընտանիքը Կաթողիկոսա-



րանի մէկ բաժանմունքի շինութեան բարերարը եղած, հրատարակչական ֆոնտ հաստատած, ընկերային ծառայութեան առնչուած աշխատանքներուն օժանդակած, ինչպէս նաեւ զանազան առիթներով աջակցած է Արեւելեան Հայոց Թեմի ծրագիրներուն: Վեհափառ Հայրապետը իր խորին գնահատանքը յայտնեց Ռիչըրտ Գարոլանին՝ իր գլխաւորած հիմնարկին կողմէ կատարուող շարունակական օժանդակութեանց համար: Իր կարգին, ազնուահոգի Բարերարը խոստացաւ շարունակել իր զօրակցութիւնը թէ՛ Կաթողիկոսարանի եւ թէ՛ Թեմի ծրագիրներուն: Կ'արժէ յիշել, որ Նորին Սրբութիւնը անցեալ տարի Ռիչըրտ Գարոլանը պարգեւատրած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկեան Իշխան» շքանշանով: Առ այդ, ան Տիար Ռ. Գարոլանին փոխանցեց շքանշանի սրբատառ կոնդակը: Հանդիպման աւարտին, Բարերարը ճաշի հիւրը եղաւ Վեհափառ Հայրապետին:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ՓՐԱԽՏԸՆՍԻ ՄԷՋ

Ուրբաթ, 4 Հոկտեմբեր 2024-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախումբով նիւ Եորքէն ուղղուեցաւ Ռոտ Այլընտ նահանգի Փրաւիտընս քաղաքը: Նորին Ս. Օծութիւնը դիմաւորելու եկած էին Ս. Վարդանանց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Գաբրիէլ Քհնյ. Նազարեանն ու ազգային մարմիններու ներկայացուցիչներ: Նոյն օրը երեկոյեան, Նորին Սրբութիւնը ոստիկանական ջոկատներու առաջնորդութեամբ ուղղուեցաւ եկեղեցի, ուր ծխայինները մեծ բազմութեամբ կը սպասէին իրենց Հոգեւոր Հօր:



«Հրաշափառ...»ի արարողությունն էր, Անուշաւան Սրբազան Հայրը ողջունեց Վեհափառ Հայրապետին օրհնաբեր այցելութիւնը եւ վստահութիւն յայտնեց, որ անիկա հոգեւոր վերանորոգութեան նոր էջ մը պիտի բանայ այս եկեղեցւոյ կեանքէն ներս:

Արամ Ա. Կաթողիկոս իր խօսքին սկիզբը բարձր գնահատեց Առաջնորդ Սրբազան Հօր նուիրեալ ծառայութիւնը, ողջունեց Քահանայ Հայրն ու Երեսփոխանական Ժողովը, Ազգ. Վարչութիւնը, եկեղեցւոյ յարակից մարմինները, ինչպէս նաեւ քոյր եկեղեցիներու ներկայացուցիչներու ներկայութիւնը: Ան յայտնեց, որ հովուապետական այցելութեան հոգեւոր խորհրդածութեանց իբրեւ նիւթ ընտրած է Տէրունական աղօթքին մեկնաբանութիւնը եւ իւրաքանչիւր ծուխ այցելութեան ընթացքին աղօթքին առնչուած նիւթի մը մեկնաբանութիւնը պիտի կատարէ. ուստի, խօսեցաւ աղօթքի իմաստին մասին:

Հայրապետական պատգամին յաջորդեց աշահամբոյր, որուն ընթացքին ան առիթ ունեցաւ մօտէն ծանօթանալու եկեղեցւոյ անդամներուն:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԲԱԻ ՎԱՅԵԼՈՂ ՖՐԱՆՔ ՔԱՓՐԻՕ ԴԱՏԱԻՈՐԸ

Շաբաթ, 5 Հոկտեմբեր 2024-ին, նոյն եկեղեցւոյ մէջ, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց դատական ելոյթներով մեծ համբաւ վայելող՝ Դատաւոր Ֆրանք Քափրիոն: Դատաւորը իր ընթացիկ դատական աշխատանքներուն առընթեր, անցնող տարիներու ընթացքին դատական յատուկ պարագաներ, ընկերային



ցանցերու ճամբով, դարձուցած է հանրութեան սեփականութիւնը եւ ունեցած է մեծ թիւով հետեւորդներ: Դատերու նկատմամբ անոր ունեցած արդար մօտեցումներուն առընթեր, Դատաւոր Քափրիօ նաեւ ցուցաբերած է հասկացողութիւն ու զգայուն մօտեցում: Դատական շրջանակներէ ներս ան կը վայելէ մեծ յարգանք:

Հսելով Նորին Սրբութեան այցելութիւնը Փրաւիտընս՝ Դատաւորը փափաք յայտնած է հանդիպում ունենալ անոր հետ: Հանդիպման ներկայ եղան նաեւ Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, Հոգեւոր Հայրեր եւ Ազգ. Վարչութեան անդամներ:

Ան իր բարձր գնահատանքը յայտնեց Դատաւորին՝ դատական հարցերու նկատմամբ անոր ցուցաբերած յաճախ գթասիրտ մօտեցման ու հասկացողութեան համար: Հանդիպման ընթացքին Նորին Սրբութիւնը նաեւ անդրադարձաւ Հայ եկեղեցւոյ պատմութեան ու առաքելութեան:

**ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Շաբաթ ամբողջ օրը, Վեհափառ Հայրապետը յաջորդական հանդիպումներ ունեցաւ եկեղեցւոյ առնչուած մարմիններուն հետ՝ Ազգ. Վարչութիւն, Հոգաբարձութիւն, Տիկնաց միութիւն, շաբաթօրեայ վարժարանի Ուսուցչական կազմ, ինչպէս նաեւ համայնքի քոյր կազմակերպութիւններուն հետ՝ Հ.Յ.Դ., Համազգային, Օգնութեան Խաչ եւ Երիտասարդական:







Հանդիպումներու ընթացքին ան շեշտը դրաւ Սփիւռքի վերակազմակերպման ծիրէն ներս գաղութին վերակենսաւորման հրամայականին եւ նշեց, որ անհրաժեշտ է դուրս գալ աւանդական մտածողութենէ ու գործելակերպէ, որովհետեւ կ'ապրինք արմատական փոփոխութիւններով լեցուն ընկերութեան մէջ ու չենք կրնար անտեսել մարդկային կեանքէն ներս յառաջացող նոր երեւոյթները, մտահոգութիւններն ու զարգացումները: Ան դիտել տուաւ, որ անհրաժեշտ է քայլ պահել անոնց հետ, սակայն միշտ ամուր պահելով մեր ինքնութեան կազմաւորման արժէքներն ու աւանդութիւնները:

Նորին Սրբութիւնը նաեւ այցելեց շաբաթօրեայ վարժարանի աշակերտներուն եւ Փրաւիտընսի մէջ հաստատուած Ազգ. Թանգարան:

Աւարտին, Վեհափառ Հայրապետը մասնակցեցաւ համայնքի մարմիններուն կողմէ կազմակերպուած ընթրիքին:

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ
Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

**«ԿԵԱՆՔԸ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՊԱՐԳԵՒ Է.
ՋԱՅՆ ՀԱՐԿ Է ԱՊՐԻԼ ԱՍՏՈՒԾՈՅ
ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՄԲ»**

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կիրակի, 6 Հոկտեմբեր 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս Ս. եւ Անմահ Պատարագ մատուցեց Փրաւիտընսի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, առընթերակայութեամբ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեանի եւ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեանի:

Նորին Սրբութիւնը օրուան իր պատգամը կեդրոնացուց Քրիստոսի խօսքին վրայ. «Ե՛ս եմ ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը» (Յ՛հ 14,6): Ան հրաւիրեց հաւատացեալները իրենց ուշադրութիւնը կեդրոնացնելու կեանքի ճշմարիտ հասկացողութեան վրայ ու ըսաւ, որ կեանքը, բանական ու ոչ-բանական իմաստով, Աստուծոյ պարգեւն է մարդուն, հետեւաբար, զայն պէտք է ապրիլ Աստուծոյ պատուիրաններուն հաւատարմութեամբ: Մարդկային կեանքին առանցքն ու նպատակը պէտք է դառնայ Աստուած ի՛նք. առանց Աստուծոյ կերպարանափոխիչ ներկայութեան, մարդուն կեանքը կը կորսնցնէ իր նկարագիրը ու նպատակը, շեշտեց Վեհափառ Հայրապետը:

Նոյն երեկոյեան, ի պատիւ Նորին Սրբութեան, տեղի ունեցաւ պաշտօնական ընթրիք, որ Փրաւիտընսի մէջ բնակութիւն հաստատած հայորդիները համախմբեց Հայոց Հայրապետին շուրջ:



Ձեռնարկին հանդիսավարն էր Յակոբ Խաչատուրեան: Հերթաբար խօսք առին Ազգ. Իշխանութեան Ատենապետ՝ Գնդապետ Արամ Սարաֆեան, Ս. Վարդանանց եկեղեցւոյ Հոգաբարձութեան Ատենապետ՝ Լեւոն Աթթարեան, եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Գաբրիէլ Քհնյ. Նազարեան եւ Թեմի Առաջնորդ՝ Անուշաւան Արք. Դանիէլեան:

Սրբազան հայրը իր խօսքին մէջ, յանուն Թեմի Կրօնական եւ Քաղաքական ժողովներուն, որդիական խորին երախտագիտութիւն յայտնեց Նորին Ս. Օծութեան, որ Միջին Արեւելքի այս տազնապալի շրջանին, յաղթահարելով ամէն տեսակի դժուարութիւն, յաշողցուց հովուապետական իր այցելութիւնը՝ ապացուցելով, որ Միջին Արեւելքէն մինչեւ Եւրոպա ու Ամերիկա տարածուող Կրիկիոյ Կաթողիկոսութեան հովանին վայելող թեմերը կը կազմեն մէկ ամբողջութիւն եւ մէկ հօտ: Ըստ այնմ, որպէս անձնդիր հովուապետ, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր հայրական խնամքը անսակարկ կերպով կը տարածէ բոլորին վրայ, միշտ առաջնորդուելով Երկնաւոր Հովիւին օրինակով՝ սիրով եւ զոհողութեամբ: Սրբազան Հայրը խտացնելով իր մտածումները յայտնեց, թէ բոլորս եկած ենք վայելելու Նորին Սրբութեան իմաստութիւնը եւ հարստացնելու մեր կեանքը՝ իր հայրական պատգամներով ու թելադրանքներով եւ ապա բեմ հրաւիրեց Նորին Սրբութիւնը՝ ուղղելու համար իր Հայրապետական ու հայրական Օրհնութեան խօսքը:

Իր խօսքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս անդրադարձաւ երկու գլխաւոր գաղափարներու: Ան շեշտեց, որ մենք համայնք ենք արժէքներու, սկզբունքներու եւ իտէալներու շուրջ համախմբուած, միաժամանակ մենք ընտանիք ենք,



որ զանազան պատասխանատուութիւններով լծուած է ազգին ու եկեղեցւոյ ծառայութեան: Ան յատուկ կերպով գնահատեց երիտասարդներու մասնակցութիւնը Փրակտընսի Հայ համայնքի կեանքին մէջ:

Սոյն հաւաքի գեղարուեստական բաժնին մաս կազմեցին նաեւ այն երիտասարդները, որոնք քանի մը տարի առաջ մասնակցած էին Կաթողիկոսու-



թեան կազմակերպած երիտասարդական ամառնային դասընթացքներուն:

Յատկանշականօրէն, Նորին Սրբութիւնը «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգեւատրեց համայնքի կեանքին մէջ տարիներու ծառայութիւն մատուցած Մակի Նալպանտեանը եւ «Կիլիկեան Ասպետ» շքանշանով՝ Յակոբ Խաչատուրեանը:

«Կիլիկիա» օրհներգով եւ «Ի վեհ բարձանց» Հայրապետական մաղթերգով ընթրիքը հասաւ իր աւարտին:

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՌԻԶԸՐՏ ՀԱՆԻՆԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՀԵՏ**

**«ՎԱՏԻԿԱՆԻ ՀԵՏ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՍԵՐՏ
ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՆՈՐՈԳ ԹԱՓՈՎ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ»**

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կիրակի, 6 Հոկտեմբեր 2024-ի երեկոյեան, Վեհափառ Հայրապետը ընդունեց Կաթոլիկ եկեղեցւոյ Ռիչըրտ Հանինկ եպիսկոպոսի այցելութիւնը: Հանդիպման ընթացքին ներկայ էին Առաջնորդ Սրբազան Հայրն ու եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը:

Նորին Սրբութիւնը ողջունեց եպիսկոպոսին սերտ յարաբերութիւնը Հայ համայնքին հետ եւ անոր մասնակցութիւնը մեր եկեղեցւոյ կազմակերպած ձեռնարկներուն: Ապա, անդրադարձ կատարեց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան



եւ Վատիկանի յարաբերութեան: Յիշելով շուրջ երկու ամիս առաջ Վատիկան կատարած այցելութիւնը եւ ունեցած հանդիպումները Ֆրանսիս Պապին եւ բարձրաստիճան պատասխանատուներու հետ, Նորին Ս. Օծութիւնը շեշտեց, որ միջ-եկեղեցական յարաբերութեանց մէջ ինք յատուկ կարեւորութիւն կ'ընծայէ Կաթոլիկ եկեղեցւոյ եւ հետեւաբար, սպասելի է որ այդ յարաբերութիւնը իր արտայայտութիւնը գտնէ տեղական մակարդակի վրայ: Հենինկ Եպիսկոպոս, որ շուտով պիտի նշանակուի Պոսթընի Արքեպիսկոպոս եւ հաւանաբար մօտ ապագային Կարտինալի աստիճան ստանայ, գնահատանքով արտայայտուեցաւ Հայ եկեղեցւոյ մասին եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ Թեմի Առաջնորդ Սրբազան Հօր եւ Ազգ. Առաջնորդարանին հետ սերտ կապեր կը մշակէ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԾԵՐԱԿՈՅՏԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՐՅԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Երկուշաբթի, 7 Հոկտեմբեր 2024-ին, Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, Նորին Ս. Օծութիւնը ընդունեց Ծերակոյտի ռազմական հարցերու յանձնաժողովի Ատենապետ՝ ծերակուտական Ժագ Ռիտը: Հանդիպման ներկայ էին երեք երեսփոխաններ:

Արամ Ա. Կաթողիկոս անդրադարձաւ Ամերիկեան հասարակութեան մէջ Հայ համայնքներուն ունեցած դերակատարութեան, ինչպէս նաեւ խօսեցաւ Կաթողիկոսութեան առաքելութեան ու Լիբանանի ներկայ կացութեան մասին: Այս ծիրէն ներս ան շեշտեց Լիբանանի մէջ կարելի փութով գինադադար հաստատելու անհրաժեշտութիւնը:





Նորին Սրբութիւնը առիթ ունեցաւ առանձին խօսակցելու ծերակուտական Ռիտին հետ եւ անոր փոխանցելու Լիբանանի առնչուած կարգ մը մտահոգութիւններ:

Ապա, Վեհափառ Հայրապետին այցելեց Փրաւիտընսի Քաղաքապետ՝ Պրէթ Սմայլին:

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՂՕԹՔ՝ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Գլխաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Երկուշաբթի, 7 Հոկտեմբեր 2024-ին, միջ-եկեղեցական աղօթք կատարուեցաւ Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, մասնակցութեամբ նահանգի Ուղղափառ եկեղեցիներու հոգեւորականներուն: Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էին Անուշաւան Արք. Դանիէլեան, Գեղամ Արք. Խաչերեան, Յովակիմ Վրդ. Բանճարճեան եւ Սարգիս Վրդ. Աբրահամեան:

Արարողութեան աւարտին, Նորին Սրբութիւնը իր օրհնութեան խօսքը ուղղեց ներկաներուն՝ շեշտելով միջ-եկեղեցական գործակցութեան անհրաժեշտութիւնը, տեղական մակարդակի վրայ եւս: Ան ողջունեց յաճախակի առիթներով Ուղղափառ եկեղեցիներու ներկայացուցիչներուն հանդիպումները եւ իրենց եկեղեցիները յուզող հարցերու շուրջ կատարուող քննարկումները: Ան յիշեցուց, որ Հայ եկեղեցին, հին դարերէն սկսեալ, յատուկ կարեւորութիւն ընծայած է եկեղեցիներու միջեւ աստուածաբանական երկխօսութեան ու գործակցութեան:



Միջ-եկեղեցական արարողութենէն ետք, ներկաները ճաշի հիւրը եղան եկեղեցւոյ հոգաբարձութեան: Աւարտին, Նորին Ս. Օծութիւնը դարձեալ իր գնահատանքը յայտնեց ներկաներուն եւ թելադրեց նոյն ոգիով ու հաւատարմութեամբ շարունակելու միջ-եկեղեցական գործակցութիւնը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՓՐԻՆԿՖԻԼՏԻ ՄԷՉ

Արամ Ա. Կաթողիկոս եւ իր շքախումբը Փրաւիտընսէն ուղղուեցան ըՍփրինկֆիլտ, ուր Ինտիրն Օրշըրտ շրջանին մէջ կը գործէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին:



Ան եկեղեցւոյ մուտքին դիմաւորուեցաւ տեղւոյն Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Պետրոս Ա. Քհնյ. Շիթիլեանի եւ եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ: Կատարուեցաւ «Հրաշափառ...»ի արարողութիւն, որմէ ետք Նորին Սրբութիւնը իր հայրական խօսքը ուղղելով ներկաներուն՝ առաջին հերթին գոհունակութիւն յայտնեց, որ երկրորդ անգամ ըլլալով կ'այցելէ սոյն եկեղեցին, ապա նշեց, որ Նիւ Եորք իր ուսանողութեան տարիներուն յաճախակի առիթներով այցելած է այս եկեղեցին ու մատուցած Ս. եւ Անմահ Պատարագ: Ան անդրադարձաւ եկեղեցւոյ համայնքին իւրայատուկ նկարագրին՝ որպէս Աստուծոյ տունը, իսկ հաւատացեալները՝ որպէս Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը, ու թելադրեց, որ այս գիտակցութեամբ մասնակից դառնան եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան:

Պատգամէն ետք տեղի ունեցաւ աջահամբոյր, ապա ընթրիք՝ ծխայիններուն մասնակցութեամբ:

Ձեռնարկին յաջորդաբար խօսք առին Սփրինկֆիլտի Հոգեւոր Հովիւը, Ազգ. Իշխանութեան Ատենապետն ու Առաջնորդ Սրբազան Հայրը:

Իր փակման օրհնութեան խօսքին մէջ, Նորին Ս. Օծութիւնը անդրադարձաւ Առաջնորդարան-Ծուխ յարաբերութեան առնչուած շարք մը երեւոյթներու՝ շեշտելով յարաբերութիւնը հետեւողական գործակցութեան վերածելու անհրաժեշտութիւնը: Խօսքը ուղղելով ներկայ համալսարանական երիտասարդներուն՝ ըսաւ, որ ուսումը հարկ է արժեւորել ծառայութեամբ եւ եկեղեցւոյ ու համայնքի կեանքին մասնակցութեամբ:

Յաջորդ առաւօտ, Նորին Սրբութիւնը հանդիպում մը ունեցաւ եկեղեցւոյ հոգաբարձութեան հետ:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ՈՒՍԹՂՐԻ ՄԷՁ

Չորեքշաբթի, 9 Հոկտեմբեր 2024-ի յետմիջօրէին, Արամ Ա. Կաթողիկոս ու իր շքախումբը հասան Ուսթըր, ուր դիմաւորուեցան Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ Վեհափառ Հայրապետին այցելութիւնը համակարգող կազմակերպիչ յանձնախումբին կողմէ՝ գլխաւորութեամբ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Գերպ. Տ. Արտակ Ծ. Վրդ. Արապեանի:

Վեհափառ Հայրապետը եկեղեցի մուտք գործեց «Հրաշափառ...»ի երգեցողութեամբ, ուր ժամանած էին քաղաքի Կաթողիկ եկեղեցւոյ Արքեպիսկոպոսը եւ զանազան համայնքներու Հոգեւոր Հայրեր ու հաւատացեալներ:

Առաջնորդ Սրբազան Հայրը, նախքան Նորին Սրբութիւնը խօսքի հրաւիրելը, յիշեց, որ 1997 թուականին այցելած էր այս եկեղեցին ու վստահաբար այս անգամուան այցելութիւնը եւս օրհնաբեր պիտի ըլլայ շրջանի ժողովուրդին:



Ուստի, Արամ Ա. Կաթողիկոս չղեց իր Հայրապետական պատգամը՝ առաջին հերթին ողջունելով օտար եկեղեցականներու ներկայութիւնը՝ զայն նկատելով միջ-եկեղեցական գործակցութեան շօշափելի արտայայտութիւն: Ան նշեց, որ թէեւ պատմութեան ընթացքին զանազան պատճառներով եկեղեցին բաժնուած է, սակայն եկեղեցւոյ ներքին միութիւնը մնացած է ամուր: Միջ-եկեղեցական շարժումին նպատակն է գործակցութեան ճամբով եկեղեցւոյ միութեան տալ գործնական արտայայտութիւն:



Ապա, շարունակելով «Հայր մեր...» աղօթքին նախադասութիւնն առ նախադասութիւն մեկնաբանութիւնը, ան առանձնացուց «Հայր մեր որ յերկինս ես...»ը ու բացատրեց Աստուածաշունչին մէջ Աստուծոյ գաղափարին զանազան կերպերով ըմբռնումը մարդուն կողմէ ու հաստատեց, որ Քրիստոս եկաւ զԱստուած ներկայացնելու աշխարհին՝ որպէս բոլորին Հայրը: Ապա, զԱստուած մեկնաբանեց իբրեւ սիրող, մխիթարող, ներող ու գուրգուրացող Հայր: Քրիստոսի մարդեղութեամբ, Աստուած որպէս Հայր մօտեցաւ մարդուն եւ երկինքը դարձաւ ներկայութիւն երկրի վրայ, ըսաւ ան:

Աւարտին, ան գնահատեց Առաջնորդ Սրբազան Հայրը, Հոգեւոր Հովիւ Հայր Սուրբը եւ եկեղեցւոյ պատասխանատուները:

Աջահամբոյրէն ետք, եկեղեցւոյ սրահին մէջ ի պատիւ Վեհափառ Հայրապետին տեղի ունեցաւ ընթրիք, որուն ընթացքին Կիրակնօրեայ վարժարանի աշակերտները ներկայացուցին կոկիկ յայտագիր մը:

Աւարտին, Նորին Ս. Օծութիւնը իր գնահատանքը յայտնեց Հայր Արտակին նուիրեալ ծառայութեան եւ կոչ ուղղեց ժողովուրդին իր գործօն մասնակցութեամբ եկեղեցին պայծառացնելու:

Յաջորդ առաւօտուն, Զորեքշաբթի, 9 Հոկտեմբերին, Վեհափառ Հայրապետը Ս. Երրորդութիւնն եկեղեցւոյ սրահին մէջ յաջորդաբար ընդունեց շրջանի պետական երեսփոխաններն ու Քաղաքապետը, ինչպէս նաեւ հանդիպումներ ունեցաւ Հոգաբարձութեան եւ այլ մարմիններու հետ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՌԻԱՅԹՁՆԶՎԻԼԻ ՄԷՋ

Ուայթընզվիլի մէջ Նորին Սրբութիւնը այցելեց Ազգ. Գերեզմանատուն եւ նախագահեց Հայոց Յեղասպանութեան յուշակոթողին առջեւ կատարուած յատուկ արարողութեան: Կոթողը վերջերս բարձրացուած էր ի յիշատակ Հայոց Յեղասպանութեան վերապրողներուն եւ առ ի գնահատանք Ամերիկայի Միացեալ Նահանգներու ժողովուրդին: Սոյն ձեռնարկին ներկայ էին Ուայթընզվիլէն ու Պոսթընէն ժամանած հայորդիներ եւ պատկան մարմիններու ներկայացուցիչներ:

Արարողութեան ընթացքին, Նորին Ս. Օծութիւնը խօսք առաւ ու ըսաւ. «Մենք չենք մոռնար մեր ժողովուրդին դէմ կատարուած 20-րդ դարու առաջին Յեղասպանութիւնը՝ իրագործուած Օսմանեան կայսրութեան կողմէ: Ո՛չ միայն չենք մոռնար զայն, այլեւ արդարութիւն կը պահանջենք: Մենք չենք մոռնար, թէ Հայ ժողովուրդի զաւակները Օսմանեան կայսրութեան սահմաններէն ներս մահ հաշակեցին, իսկ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն ներս կեանքով լեցուեցան. հոն անարդարութիւն տեսան, իսկ հոս՝ արդարութիւն. հոն հալածուեցան, իսկ հոս՝ սիրով ընդունուեցան: Մենք երախտապարտ ենք Միացեալ Նահանգներու ժողովուրդին, որ ընդունեց Յեղասպանութեան վերապրողները եւ լայն կարեւորութիւն-

ներ ընծայեց անոնց՝ վերակազմելու իրենց ընտանիքները եւ վերակազմակերպելու իրենց եկեղեցական ու համայնֆային կեանքը: Այս յիշատակարանը անցեալը յիշելու հրաւիր է եւ միաժամանակ՝ Հայ ժողովուրդին կողմէ Միացեալ Նահանգներուն երախտագիտութեան արտայայտութիւն»: *Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ նաեւ ընդգծեց. «Այս առիթով, Մեր բարձր գնահատանքը կ'ուզենք յայտնել Նախագահ Պայտընին, որ իմաստութիւնն ու քաջութիւնը ունեցաւ, առաջին անգամ ըլլալով Ամերիկայի Միացեալ Նահանգներու պատմութեան մէջ, պաշտօնապէս հանչնալու Հայոց դէմ գործուած Ցեղասպանութիւնը»:*



Ապա, Նորին Սրբութիւնը մեկնեցաւ Ս. Աստուածածին եկեղեցի, ուր պատասխանատու մարմինները եւ քոյր եկեղեցիներու ներկայացուցիչները դիմաւորութեան կը սպասէին: Եկեղեցական արարողութենէն եւ Առաջնորդ Սրբազան Հօր ողջոյնի խօսքէն ետք, ան իր գնահատանքը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Միքայէլ Քհնյ. Տէր խորովեանին, եւ Թեմի վարչութեան՝ անոնց եկեղեցանուէր ծառայութեան համար: Նորին Սրբութիւնը խօսեցաւ «սուրբ եղիցի անուն քո...» նախադասութեան մասին, յատկապէս վերլուծելով սրբութեան գաղափարը՝ զայն նկատելով ո՛չ միայն Աստուծոյ պատկանող երեւոյթ մը, այլ նաեւ՝ Աստուծոյ կողմէ մարդուն տրուած շնորհք մը:

Արամ Ա. Կաթողիկոսին պատգամէն ետք, տեղի ունեցաւ աջահամբոյր եւ ապա եկեղեցւոյ սրահին մէջ՝ ընթրիք, մասնակցութեամբ հաւատացեալներուն: Զեռնարկի ընթացքին յաջորդաբար խօսք առին Առաջնորդ Սրբազան



Հայրը, եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը, Ազգ. Վարչութեան եւ Հոգաբարձութեան ատենապետները:

Իր փակման օրհնութեան խօսքին մէջ, Վեհափառ Հայրապետը առիթ տրւաւ ներկաներուն հարցումներ ուղղելու իրեն՝ մեր ազգին, գաղութին եւ եկեղեցւոյ առնչուած հարցերու շուրջ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊՈՍԹՐՆԻ ՄԷՋ

Ուայթընզվիլ այցելութենէն ետք, նոյն օրը, Նորին Սրբութիւնը եւ իր շքախումբը հասան Պոսթըն: Վեհափառ Հայրապետը դիմաւորուեցաւ Պոսթընի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Գերպ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեանի, Հոգաբարձութեան, կազմակերպիչ յանձնախումբին եւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներուն կողմէ:

Նոյն օրը երեկոյեան, Նորին Սրբութիւնը մեկնեցաւ Պոսթընի Ս. Ստեփանոս եկեղեցի՝ իր Հայրապետական պատգամը տալու, Պոսթընի Հայ համայնքի գաւակներուն հանդիպելու եւ իր հայրական օրհնութիւնը փոխանցելու համար: Վեհափառ Հայրապետը եկեղեցւոյ մուտքին դիմաւորուեցաւ մեծաթիւ հաւատացեալներու, եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին, Հոգաբարձութեան եւ համայնքի պատասխանատուներուն կողմէ: Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ «Հրաշափառ...»ի արարողութիւն: Հուսկ, Առաջնորդ Սրբազան Հայրը խօսք առնելով՝ բարի գալուստ մաղթեց Նորին Ս. Օծութեան եւ ընդգծեց Պոսթընի պատմական գաղութ ըլլալը եւ անոր ունեցած կարեւոր ներդրումն ու դերակատարութիւնը Թեմի Հայ կեանքին մէջ:



Ապա, Արամ Ա. Կաթողիկոս ուղղեց իր Հայրապետական ու հայրական պատգամը: Ան նախ անդրադարձաւ այնտեղ ներկայ Միաբան Հայրերուն եւ շեշտեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ ներկայութիւն եղած է ինչպէս մեր ժողովուրդի կեանքին, այնպէս ալ Պոսթընի Հայ գաղութին մէջ: Անթիլիասը սոսկ վայր մը չէ՛, այլ ծառայութիւն ու առաքելութիւն է, ըսաւ ան: Ապա, բացատրեց «եկեսցէ արքայութիւն քո...» նախադասութիւնը: Նորին Սրբութիւնը կեդրոնանալով յաւիտենական արքայութեան գաղափարին վրայ՝ ըսաւ, որ Քրիստոս իր մարդեղութեամբ երկինքը մօտեցուց երկրին. ան երկիր գալով երկինքի արքայութիւնը բերաւ երկիր եւ մարդուն պարզեց Արքայութեան անդամ դառնալու շնորհքը: Ան անդրադառնալով ներկայ աշխարհի դժուարութիւններուն ու տագնապներուն՝ բաղդատական մը կատարեց աշխարհիկ թագաւորութիւններուն եւ Աստուծոյ արքայութեան միջեւ՝ ըսելով, որ աշխարհիկ թագաւորութիւններուն մէջ կան դժբախտութիւններ, անարդարութիւն եւ մեղք, մինչ Աստուծոյ թագաւորութեան մէջ կան սրբութիւն, երջանկութիւն, սէր եւ արդարութիւն:

Աւարտին, հաւատացեալները մօտենալով աջահամբոյրով ստացան անոր հայրական օրհնութիւնը:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԻՒՐԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ
ՈՒՂՂԱՓԱՌ-ԱՆԿԼԻՔԱՆ ԵՐԿԵՍՈՍՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ**

Հինգշաբթի, 10 Հոկտեմբեր 2024-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Յոյն Ուղղափառ Արքեպիսկոպոսին եւ Ուղղափառ-Անկլիքան երկխօսութեան յանձնաժողովին հրաւերով, Արամ Ա. Կաթողիկոս ներկայ գտնուեցաւ յիշեալ յանձնաժողովի փակման նիստին, Պոսթընի Ս. Խաչ աստուածաբանական ճեմարանին մէջ: Յայտնենք, որ Ուղղափառ-Անկլիքան երկխօսութեան յանձնաժողովը այս հանդիպումին նշեց իր յիսնամեակը: Հանդիսութեան աւարտին խօսք առնելով Ամերիկայի Յոյն Ուղղափառ Համայնքի Առաջնորդ՝ էլփիտոֆորոս Արքեպիսկոպոսը՝ գնահատանքով արտայայտուեցաւ Նորին Սրբութեան մասին: Ան զինք կը ճանչնայ միջ-եկեղեցական ժողովներէն: Արքեպիսկոպոսը իր խօսքին մէջ յիշեց, որ Նորին Ս. Օծութիւնը երկար տարիներու փորձառութեամբ հեղինակութիւն դարձած է միջ-եկեղեցական շրջանակներէն ներս եւ մեծ յարգանք կը վայելէ բոլորին կողմէ: Արքեպիսկոպոսին խօսքէն ետք յաջորդաբար խօսք առին յանձնաժողովի համա-ատենապետներն ու աստուածաբանական ճեմարանի Տեսուչը:

Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ յայտնեց, որ միջ-եկեղեցական շարժումը, ներկայ ժամանակներուն, լուրջ մարտահրաւերներ կը դիմագրաւէ եւ բազմաբեւեռ էքիւմէնիզմը սկսած է նահանջել ու աստուածաբանական երկխօսութիւնները սկսած են առաւել լայն տեղ գրաւել միջ-եկեղեցական աշխարհին մէջ:

Ան պարզեց այս երեւոյթին դրդապատճառները եւ ապա շեշտեց աստուածաբանական երկխօսութիւնները նոր օրակարգով ու մօտեցումով շարունակելու անհրաժեշտութիւնը: Կարեւորութեամբ նշենք, որ Ս. Խաչ ճեմարանի Տեսուչին որոշումով, Նորին Սրբութեան խօսքը պիտի դառնայ միջ-եկեղեցական դասընթացքի ուղեցոյցներէն մէկը:

Հանդիպումը Նորին Ս. Օծութեան համար առիթ հանդիսացաւ վերանորոգելու իր հին բարեկամութիւնը շարք մը Անկլիքան ու Ուղղափառ Եպիսկոպոսներուն ու Փրոֆէսէօրներուն հետ, որոնք մասնակից դարձած են միջ-եկեղեցական հանդիպումներուն:

Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էին Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեան, Գերպ. Տ. Հրանդ Մ. Վրդ. Թահանեան, Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան եւ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:



**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՆԴԻՊՈՒՄ Կ՝ՈՒՆԵՆԱՅ
ԵՐԵՔ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԵՐՈՒՆ ՀԵՏ**

Նոյն օրը, երեկոյեան, Վեհափառ Հայրապետը Պոսթընի մէջ հանդիպում մը ունեցաւ Հիւսիսային Ամերիկայի երեք Առաջնորդ Սրբազան Հայրերուն հետ:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Սուրիոյ եւ Լիբանանի Հայ վարժարաններուն օգնութեան, Նորին Սրբութեան գահակալութեան ՅՕ-ամեակի նշման, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Հոկտեմբերին եւ Նոյեմբերին, երեք թեմերու միջեւ գործակցութեան սերտացման, մասնաւորաբար կրթական, հրատարակչական եւ ծիսական մարզերէն ներս, թեմերը նոր հոգեւոր հովիւներով օժտելու հրամայականին եւ այլ ծրագիրներու մասին:

Վեհափառ Հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց յիշեալ թեմերուն կողմէ մեր ժողովուրդին հոգեւոր, ընկերային ու կրթական կարիքներուն գծով կատարուած աշխատանքներուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ
ՊՈՍԹԸՆԻ ՄԵՉ**

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Վեհափառ Հայրապետը այցելեց Պոսթընի Ս. Ստեփանոս ամէնօրեայ եւ շաբաթօրեայ վարժարանները, ուր ջերմ ընդունելութեամբ դիմաւորուեցաւ Տնօրէնութեան, Ուսուցչական կազմին եւ աշակերտութեան կողմէ: Յիշեալ վարժարաններուն պատասխանատուները Նորին Սրբութեան զեկուցեցին վարժարանին գործունէութեան եւ յառաջիկայ ծրագիրներուն մասին: Նորին Սրբութիւնը բարձր գնահատեց վարժարանի Տնօրէնութեան ու Ուսուցչական կազմին նուիրուածութիւնը եւ շեշտեց անոնց ստանձնած ազգանուէր առաքելութեան կարեւորութիւնը: Ան իր խօսքին մէջ յատկապէս ընդգծեց, թէ Հայ դպրոցը նուիրական այն հաստատութիւնն է, ուր մեր մանուկներուն մէջ կը թրծուի հայկական մեր ինքնութիւնը՝ իբրեւ Հայ եւ իբրեւ քրիստոնեայ: Հետեւաբար, այս գիտակցութեամբ պէտք է Հայ դպրոցին մօտենանք, որովհետեւ մեր ազգի ապագան կախեալ է Հայ դպրոցէն: Աշակերտները փունջ մը ազգային երգերով հակիրճ յայտագիր մը հրամցուցին, ապա Նորին Սրբութիւնը պատասխանեց աշակերտներուն կողմէ ուղղուած հարցումներուն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՈՒ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԵՏ

Վեհափառ Հայրապետը նաեւ հանդիպում ունեցաւ համայնքին մէջ գործող Հայկական կառույցներու ու մարմիններու ներկայացուցիչներուն հետ՝ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մէջ: Նորին Սրբութիւնը իւրաքանչիւր կազմակերպութեան պատասխանատուէն ստացաւ անհրաժեշտ տեղեկութիւններ, գնահատեց մարմիններուն կողմէ տարուող աշխատանքները, իր հայրական յորդորը տուաւ անոնց եւ շեշտեց համագործակցութեան անհրաժեշտութիւնը համայնքի կեանքին մէջ:



ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ «ՀԱՅՐԵՆԻՔ» ԽՄՔԱԳՐԱՏՈՒՆ

Արամ Ա. Կաթողիկոս այցելեց «Հայրենիք» խմբագրատուն, ուր յատկապէս կը պահպանուին Հ.Յ.Դ.ի արխիւները: Նորին Սրբութիւնը այցելեց կեդրոնի զանազան բաժանմունքները եւ ապա հանդիպում ունեցաւ Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէին հետ: Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Հայաստանի, Սփիւռքի եւ յատկապէս Միացեալ Նահանգներու արեւելեան շրջանի առնչուած հարցերուն:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Երիտասարդուիթեան հետ հանդիպում-զրոյցին, որ կայացաւ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մէջ, բարի գալստեան խօսք արտասանեց Գերպ. Տ. Հրանդ Մ. Վրդ. Թահանեան: Բացման խօսքով հանդէս եկաւ Նայիրի Պալճեան, որ մէջբերելով երիտասարդուիթեան դերակատարուիթեան մասին, Վեհափառ Հայրապետին մտածումներէն, կարեւորեց նոր սերունդին գործօն մասնակցութիւնը համայնքային կեանքին մէջ: Հանդիպումը հերթաբար վարեցին Նայիրի ու Քնար Գարաֆեանները եւ Անի Նալպանտեանը:

Նորին Սրբութիւնը պատասխանեց երիտասարդներուն կողմէ իրեն ուղղուած հարցումներուն, որոնք առնչուած էին Հայուիթեան, երիտասարդութեան, Սփիւռքին, Հայաստանին, մեր մշակոյթին եւ եկեղեցւոյ կեանքին: Իր խօսքին մէջ ան շեշտեց երիտասարդուիթեան հետ երկխօսութիւն ունենալու, զայն լսելու եւ Հայ կեանքին մէջ աւելիով ներգրաւելու անհրաժեշտութիւնը: Աւարտին, Վեհափառ Հայրապետը յիշեցուց, որ երիտասարդներուն տեղը մեր գաղութներու կեանքին լուսանցքին վրայ չէ՛ եւ պէտք չէ՛ ըլլայ. անոնց տեղը մեր կեանքի մա՛յր էջին վրայ է: Հայ երիտասարդը, առաւել քան երբեք, պարտաւորութիւն ունի համայնքի եւ եկեղեցական կեանքին մասնակից դառնալու՝ ստանձնելով պատասխանատու պաշտօններ. այսպիսով ան իր ազգային ինքնութիւնը պիտի ձեւաւորէ ու պատկանելիութիւնը արմատաւորէ, շեշտեց ան:

Հանդիպումը փակուեցաւ հսկումի արարողութենէն քաղուած աղօթքներու արտասանութեամբ ու շարականներու երգեցողութեամբ: Ապա, երիտասարդները Արամ Ա. Կաթողիկոսին հետ համախմբուեցան սիրոյ սեղանի մը շուրջ:

ԱՅՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ

Նորին Սրբութիւնը այցելեց Պոսթընի հայագիտական ուսումնասիրութիւններու Ազգ. միութեան թանգարան-մատենադարան, ուր ընդունուեցաւ միութեան գործադիր Տնօրէն՝ Սիլվա Սեդրակեանի եւ անձնակազմին կողմէ: Անոնք Նորին Սրբութեան ներկայացուցին կեդրոնին առաքելութիւնը եւ պարզեցին յառաջիկայ ծրագիրները: Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց կեդրոնին կողմէ տարուող աշխատանքներուն համար եւ կարեւորեց Կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանին եւ այս հաստատութեան միջեւ գործակցութիւն ծաւալելու անհրաժեշտութիւնը: Այս առիթով, կեդրոնի գրադարանը ճոխացնելու նպատակով, ան միութեան նուիրեց Կաթողիկոսարանին կողմէ լոյս ընծայուած շարք մը կարեւոր հրատարակութիւններ:

Ապա, Նորին Ս. Օծութիւնը այցելեց Ամերիկայի հայկական թանգարան, ուր դիմաւորուեցաւ թանգարանի վարչութեան Տնօրէն՝ Միշէլ Գոլիկեանի եւ վարչութեան անդամներուն կողմէ: Անոնք հակիրճ կերպով ներկայացուցին թանգարանի առաքելութիւնը: Յայտնենք, որ թանգարանին մէջ կը գտնուի Կիլիկիայէն հասած եկեղեցական ու ազգապատկան իրեր, ինչպէս նաեւ Ս. Ստեփանոս նախավկային մասունքը: Վեհափառ Հայրապետը գնահատեց տնօրէնութեան բծախնդիր աշխատանքը եւ յաջողութիւն մաղթեց անոնց բոլոր ծրագիրներուն:





ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ԱԶԳ. ԾԵՐԱՆՈՅ

Ազգ. ծերանոցին մէջ Արամ Ա. Կաթողիկոս դիմաւորուեցաւ կեդրոնի Տնօրէն՝ Ուէնտի Սէկրէսթի, վարչութեան ներկայացուցիչ՝ Մանէ Ղազարեանի եւ պատասխանատուներուն կողմէ: Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ եւ տարեցներուն ներկայութեամբ կատարուեցաւ տնօրհնէքի արարողութիւն,



որուն աւարտին «Պահպանիչ...» աղօթքով օրհնեց տարեցներն ու անոնց բնակարանը: Այնտեղ, յատուկ կերպով հանդիպում ունեցաւ եւ իր օրհնութիւնը տուաւ Հայոց Յեղասպանութենէն վերապրած Մարի Վարդանեանին: Ազգ. ծերանոց այցելութեան աւարտին, Նորին Սրբութիւնը իր հայրական օրհնութիւնը տուաւ կեդրոնի տարեցներուն, Տնօրէնութեան եւ պատասխանատուններուն՝ բարձր գնահատելով անոնց նուիրեալ ու ազգային ծառայութիւնը:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԹ ԷՆՏՈՎԸՐԻ ՄԷՉ

Ուրբաթ, 11 Հոկտեմբեր 2024-ին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Լօուրլ շրջանի քաղաքապետարանի մուտքին Հայոց Յեղասպանութեան նուիրուած յուշակոթող-խաչքարին օրհնութիւնը կատարուեցաւ: Հանդիսութեան հերթաբար խօսք առին կազմակերպիչ յանձնախումբի անդամները եւ Լօուրլի նախկին ու ներկայ Քաղաքապետերը: Համայնքի ներկայացուցիչներու կողքին ներկայ էր յուշակոթող-խաչքարի արուեստագէտ՝ Դանիէլ Վարուժան Հեճինեան: Ներկայ Քաղաքապետը ողջունելով Վեհափառ Հայրապետին օրհնաբեր այցելութիւնը՝ անոր յանձնեց քաղաքի բանալին:

Խօսք առնելով նաեւ Վեհափառ Հայրապետը՝ շեշտեց, որ Հայ ազգը իր յիշողութեան մէջ վառ կը պահէ իր նախնիներուն կրած տառապանքն ու դաժան չարչարանքները: Յիշել կը նշանակէ կառչած մնալ արմատներուն ու պատմութեան: Հարկ է յիշել, որ Հայոց Յեղասպանութիւնը 20-րդ դարու առաջին Յեղասպանութիւնն է: Մահուան ենթարկուած Հայ ժողովուրդը Ամերիկայի այս ափերուն վրայ վերածնաւ ու վերակազմակերպուեցաւ, կառուցեց իր եկեղեցին ու համայնքի կառույցները եւ համայնքի կեանքը ծաղկեցուց:





Հետեւաբար, այս յուշակոթողը, թէ՛ ներկայ եւ թէ ապագայ սերունդներուն համար, մեր պատմութեան յուշարարը պիտի ըլլայ, ինչպէս նաեւ՝ յանուն արդարութեան պայքարի կոչ:

Նոյն օրը երեկոյեան, Վեհափառ Հայրապետը այցելեց Նորթ Էնտովըրի մէջ հաստատուած Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, ուր դիմաւորուեցաւ ծխայիններու, ծխատէր՝ Արժ. Տ. Ստեփան Քհնյ. Պալճեանի, Թեմի Ազգ. մարմիններու ներկայացուցիչներուն ու եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ օտար եկեղեցականներու կողմէ:

«Հրաշափառ...»ի արարողութենէն ետք, Անուշաւան Արք. ողջունեց Նորին Սրբութեան օրհնաբեր ներկայութիւնը Նորթ Էնտովըրի մէջ եւ ըսաւ, որ 27 տարի ետք, ահաւասիկ ան դարձեալ եկած է հոգեւոր վերանորոգութեան նոր էջ քանալու՝ այս եկեղեցւոյ շուրջ բոլորուած հայորդիներու կեանքին մէջ:

Վեհափառ Հայրապետը ողջունեց հոգեւորականաց դասը, մասնաւորաբար օտար եկեղեցիներու ներկայացուցիչները եւ շեշտեց, որ եկեղեցին Քրիստոսի խորհրդանշական մարմինն է եւ հետեւաբար, իր էութեամբ եկեղեցին մէկ ամբողջութիւն կը կազմէ: Ան մէջբերելով Քրիստոսի խօսքը՝ «ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունովս, ես հոն եմ» (Մտ 18.20), ընդգծեց, որ եկեղեցին հաւատքով միատեղուած ժողովուրդն է: Ան իր պատգամի աւարտին ըսաւ, թէ եկեղեցին Քրիստոսի առաքելութիւնը կը շարունակէ, ինչպէս կ'ատարած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ մեծ Հայրապետը:

Պատգամին յաջորդեց աշահամբոյր, որուն ընթացքին Նորին Սրբութիւնը առիթ ունեցաւ մօտէն ծանօթանալու Նորթ Էնտովըրի հայորդիներուն:



Ապա, ի պատիւ Կաթողիկոսին, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ընթրիք: Խօսք առին եկեղեցւոյ Հոգաբարձութեան Ատենապետը, Թեմի Ազգ. Վարչութեան համա-ատենապետը, Հոգեւոր Հովիւը եւ Առաջնորդ Սրբազան Հայրը, իսկ կիրակնօրեայի աշակերտները երգով ու պարով ամփոփ յայտագիր մը ներկայացուցին: Նշենք, որ յանուն Նորթ Էնտովըրի եկեղեցւոյ մեծ ընտանիքին, Վեհափառ Հայրապետին նուիրուեցաւ յուշակոթող-խաչքարին մանրապատճէնը:

Իր օրհնութեան փակման խօսքին մէջ Նորին Ս. Օծութիւնը անդրադարձաւ Հայ եկեղեցւոյ իւրայատկութեան: Ան ըսաւ, որ երկար տարիներու միջեկեղեցական իր գործունէութեան ընթացքին, այցելած է զանազան եկեղեցիներ եւ մօտէն ճանչցած է անոնց մտածելակերպը, աստուածաբանական մօտեցումները ու աւանդութիւնները եւ հետեւաբար, առիթ եղած է աւելիով ծանօթանալու մեր եկեղեցւոյ իւրայատկութեան: Հայ եկեղեցին իր աւանդութիւններով, աստուածաբանական մտածելակերպով, Հայ ժողովուրդի կեանքին թէ՛ քաղաքական եւ թէ՛ հոգեւոր բնագաւառներէն ներս ունեցած եզակի դերակատարութեամբ կը պահէ իր ինքնուրոյն դիմագիծը, ընդգծեց Նորին Սրբութիւնը: Իր խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետը ընդհանուր գիծերով ներկայացուց Հայ եկեղեցւոյ իւրայատկութիւնը կազմող երեւոյթները: Վերջապէս, ան գնահատեց համայնքի կեանքին մասնակիցները եւ կարեւորեց քրիստոնէական ու հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութիւնը՝ ամերիկեան այս ափերուն վրայ յատկապէս:

**ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՒ ԸՆԴԱՅՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ**

Կիրակի, 13 Հոկտեմբեր 2024-ին, համայնքի նուիրեալ ընտանիքներէն՝ Կիւզէլեաններու բնակարանին մէջ տեղի ունեցաւ հանդիպում-ընթրիք մը, որուն ներկայ գտնուեցան Վեհափառ Հայրապետը եւ գաղութի զաւակներէն ոմանք: Հանդիպման նպատակն էր Պոսթընի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ ամէնօրեայ վարժարանին ընդլայնման ու արդիականացման ամբողջական ծրագիրը ներկայացնել ու ստանալ Պոսթընահայութեան զօրակցութիւնը: Հանդիպման աւարտին, Մայքըլ Կիւզէլեան ներկայացուց վարժարանին յիշեալ ծրագիրը եւ



յոյս յայտնեց, որ Պոսթընի Հայութիւնը թեւ ու թիկունք կը կանգնի ծրագրի իրականացման: Նշենք, վարժարանի պատասխանատուները առանձին հանդիպում ունեցան Նորին Ս. Օծութեան հետ՝ իմանալու համար անոր տեսակէտը ծրագրին շուրջ: Ան իր անվերապահ զօրակցութիւնը յայտնեց անոնց, միաժամանակ թելադրելով՝ հանգրուանային կերպով վարժարանը մինչեւ երկրորդական կարգի հասցնելու ծրագիր մշակելը:

**ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅ՝
Ի ՊԱՏԻՒ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Պոսթընի մէջ կազմակերպուեցաւ դասական երաժշտութեան յատուկ երեկոյ մը՝ ի պատիւ Վեհափառ Հայրապետին: Նուագախումբը ղեկավարեց ըՍփրինկֆիլտի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Պետրոս Ա. Քհնյ. Շիթիլեան: Նուագա-



խումբը մեկնաբանեց միջազգային եւ հայկական դասական կտորներ: Հանդիսութեան աւարտին, Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Տէր Հայրն ու նուագախումբի անդամները: Հանդիսութիւնը աւարտեցաւ «Կիլիկիա» օրհներգի կատարումով:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ՝

ՊՈՍԹՂՆԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, 13 Հոկտեմբեր 2024-ին, Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մէջ, մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ս. եւ Անմահ Պատարագը մատուցեց Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան: Պոսթընէն եւ շրջակայից արուարձաններէն հայորդիներ հոծ բազմութեամբ ներկայ էին եկեղեցի՝ մասնակցելու Կիրակնօրեայ Պատարագին, լսելու Վեհափառ Հայրապետին Պատգամը եւ ստանալու հայրական օրհնութիւնը:

Իր պատգամի սկզբնաւորութեան, ան բարձր գնահատանքով ողջունեց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, հոգեւորականաց դասը, Ազգ. Վարչութիւնն ու Հայ կեանքէն ներս գործող բոլոր կազմակերպութիւնները՝ անոնց ցուցաբերած խանդավառ ու բեղուն ծառայութեան համար: Ապա, Նորին Սրբութիւնը յատուկ կերպով անդրադարձաւ եկեղեցւոյ ու եկեղեցականի առաքելութեան՝ շեշտելով անոնց ծառայական ներդրումը համայնքի կեանքին մէջ: Ան ըսաւ, թէ հոգեւորականները իրենց ծառայական կեանքով կ'արժեւորեն իրենց առաքելութիւնը: Հոգեւորականին փառքը կը կայանայ ծա-



ուայութեան մէջ: Հայ եկեղեցւոյ հոգեւորական ըլլալ կը նշանակէ ծառայել եւ եկեղեցի ըլլալ կը նշանակէ ծառայական ներկայութիւն դառնալ հաւատացեալի կեանքին մէջ: Այս առիթով, ան յատուկ կերպով անդրադարձաւ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ նախկին Հովիւ՝ Արժ. Տ. Անդրանիկ Ա. Քհնյ. Պալճեանի յիսնամեայ ծառայութեան՝ ըսելով, թէ Տէր Հայրը իր ծառայական ոգիով ներշնչած է սերունդներ ու զանոնք պատրաստած եկեղեցւոյ ու ազգին ծառայութեան համար, ան իր առաքելութիւնը կատարած է խստապահանջութեամբ ու գիտակցութեամբ: Ուստի, բարձրօրէն կը գնահատենք Քահանայ Հօր հովուական երկարամեայ ծառայութիւնը:

Նորին Ս. Օծուիւնը իր պատգամին բնաբան ընտրած էր Յովհաննու Աւետարանին հետեւեալ տողը. «Ե՛ս եմ ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը» (Յհ 14,6): Յայտնենք, որ ան նախորդ Կիրակի խօսած էր «կեանք» բառին քրիստոնէական հասկացողութեան մասին, իսկ այս Կիրակի ան կեդրոնացաւ «ճամբայ» բառին վրայ: Ան ըսաւ, թէ ճամբայ կը նշանակէ մեկնարկ, ընթացք եւ նպատակ: Աշխարհին բացած ճամբաները այլազան են եւ դարձդարձիկ. անոնք մարդ արարածը կ'առաջնորդեն դէպի ժամանակաւոր իրագործումներ եւ երբեմն՝ խաւար կայաններ: Քրիստոս, իր մարդեղութեամբ, մարդուն դիմաց բացաւ ճշմարիտ ազատութեան, մարդուն հարազատ էութեան վերադարձին, իսկական սիրոյ եւ Աստուծոյ թագաւորութեան ճամբան: Ան շարունակելով իր պատգամը՝ յիշեցուց, որ Աւետարանը յստակ կերպով կը պարզէ, թէ Քրիստոս իր կեանքով ու հրաշքներով ցոյց տուաւ մարդը պայծառա-

կերպող ճամբան: Այդ ճամբան կեանքի ու փրկութեան ճամբան է, եւ Քրիստոսի հետեւելու ուխտը կատարած անձը պէտք է քալէ այդ ճամբէն: Ապա, Վեհափառ Հայրապետը անդրադառնալով մեր ազգին դիմագրաւած դժուարութիւններուն՝ ըսաւ, որ պատմութեան ընթացքին յաճախ խաւարը փորձած է տիրապետող ներկայութիւն դառնալ մեր կեանքին մէջ, սակայն Քրիստոսի ոտնահետքերուն հետեւելով՝ մենք կարողացած ենք խաւարը վանել մեր կեանքէն, յաղթել խաւարին տիրապետութեան եւ մեր կեանքը Քրիստոսով պայծառակերպել: Այսօր եւս նոյն հաւատքով, գիտակցութեամբ եւ բռնաբանողութեամբ պէտք է ապրինք մեր կեանքը՝ զայն շաղախելով Քրիստոսի բերած արժէքներով, շեշտեց Նորին Սրբութիւնը:



Աւարտին, Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Գերպ. Տ. Հրանդ Մ. Վրդ. Թահանեան խորան բարձրացուց Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութեան յատուկ առիթով Ամերիկայի հայկական թանգարանէն բերուած Ս. Ստեփանոս նախավկայի սրբազան մասունքը, որով Նորին Սրբութիւնը օրհնեց ժողովուրդը:

Պատարագէն անմիջապէս ետք, սրահին մէջ տեղի ունեցաւ ընթրիք՝ ի պատիւ Նորին Ս. Օծութեան: Յանուն Եկեղեցւոյ Հոգաբարձութեան, խօսք առաւ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւր: Նախ, ան իր որդիական երախտագիտութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ հովուապետական օրհնաբեր այցելութեան համար, եւ Պոսթրնի հայութեան թարգմանը հանդիսանալով՝ յայտնեց, որ Վեհափառ Հայրապետին այցելութիւնը հոգեւոր խանդավառութեան եւ վերանորոգութեան առիթ հանդիսացաւ շրջանէն ներս:

Ընթրիքը գեղարուեստական յարստացուցին Եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանի աշակերտները՝ Հայ ասմունքով ու երգով:

Հուսկ, Արամ Ա. Կաթողիկոս իր հայրական յորդորը ուղղեց ներկաներուն: Ան իր խօսքին սկիզբը ընդհանուր գիծերով ներկայացուց ժամանակակից աշխարհը՝ զայն բնորոշելով արմատական ու յեղափոխական փոփոխութիւններով լեցուն աշխարհ մը, ընկերութեան բոլոր բնագաւառներէն ներս: Ապա, մանրամասնելով յիշեալ փոփոխութիւնները՝ յայտնեց անոնց անդրադարձը

Հայ կեանքին վրայ: Մասնաւորելով իր խօսքը Սփիւռքի ներկայ կացութեան շուրջ, Նորին Սրբութիւնը շեշտեց Սփիւռքի վերակազմակերպումի հրամայականը՝ իր պատկերացումը ներկայացնելով շորս հիմնական կէտերու մէջ՝ ինքնութիւն, գաղութներու վերակազմակերպում, Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց ամրապնդում եւ երիտասարդներու մասնակցութիւն Հայ կեանքին մէջ:



Աւարտին, Վեհափառ Հայրապետը «Կիլիկեան Իշխան» շքաշնանով պարգևատրեց Նուպար Աֆէյեանը: Վերջինս խօսք առնելով՝ յիշեց իր անցեալը՝ Լիբանանը եւ Պոսթընի մէջ տարած աշխատանքը Հայ կեանքէն ներս: Յայտնենք, որ Աֆէյեան զոյգը բարերար հանդիսացած է Ս. Ստեփանոս վարժարանի մէկ շէնքին եւ զանազան պատասխանատուութիւններ ստանձնած է գաղութէն ներս:



Հնթրիքէն ետք, Վեհափառ Հայրապետը իր իշեւանած պանդոկին մէջ ընդունեց Նուպար Աֆէյեանը: Հանդիպման ընթացքին, քննարկուեցան Հայաստանի եւ Սփիւռքի առնչուած շարք մը հարցեր: Աֆէյեան իր պատրաստակամութիւնը յայտնեց Նորին Սրբութեան նպաստելու Սփիւռքի վերակազմակերպման առնչուած ծրագիրներուն՝ կրթական, մշակութային եւ այլ բնագաւառներէ ներս:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԿՐԱՆԻԹ ՍԻԹԻԻ Մէջ

Երեքշաբթի, 15 Հոկտեմբեր 2024-ին, Պոսթընէն ետք, Նորին Սրբութիւնը եւ իր շքախումբը ուղղուեցան Իլինոյ նահանգի Կրանիթ Սիթի: Համայնքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մուտքին, Նորին Ս. Օծութիւնը ջերմօրէն դիմաւորեցին եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Դանիէլ Քհնյ. Մանճիկեանը, Հոգաբարձութեան ներկայացուցիչները, կիրականօրեայ դպրոցի Տեսչութիւնն ու աշակերտութիւնը եւ հաւատացեալ ժողովուրդը: Յայտնենք, որ տեղւոյն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ օծումը կատարած է Վեհափառ Հայրապետը, իբրեւ նորած Հայրապետ, 1997 թուականին:

Կատարուեցաւ «Հրաշափառ...»ի արարողութիւն, որուն մասնակցեցան շրջանի օտար եկեղեցականները եւս:

Արամ Ա. Կաթողիկոս, անդրադառնալով այս եկեղեցւոյ օծումը կատարելուն, ըսաւ, թէ եկեղեցւոյ խորանը, սիւները եւ այլ բաժինները կ'օծենք ու եկեղեցին կը մկրտենք սուրբի մը անունով, սակայն եկեղեցւոյ օծումով ժողովուրդն է որ կ'օծուի, ան է որ եկեղեցին եկեղեցի կը դարձնէ: Ան շեշտեց, որ



Ժողովուրդը եկեղեցի դառնալով պետք է ինքզինք արժեւորէ որպէս եկեղեցի՝ մասնակցելով եկեղեցւոյ հաւաքական կեանքին ու վկայութեան: Իր խօսքը ներկայ օտար հոգեւորականներուն ուղղելով, Նորին Ս. Օծութիւնը յայտնեց, որ իրենց ներկայութիւնը վկայութիւն մըն է, թէ հակառակ պատմութեան ընթացքին եկեղեցւոյ կեանքին մէջ տեղի ունեցած բաժանումներուն, այսօր միջ-եկեղեցական շարժումին շնորհիւ եկեղեցիներ կը գործակցին, թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային մակարդակներու վրայ: Այս ծիրին մէջ, ան շեշտեց միջ-եկեղեցական գործակցութիւնը աւելի ծաւալելու հրամայականը:

Վեհափառ Հայրապետին պատգամին յաջորդեց աջահամբոյր, որմէ ետք եկեղեցւոյ սրահին մէջ հովուապետ եւ հօտ միասնաբար համախմբուեցան սիրոյ սեղանի մը շուրջ:

Ընթրիքի ընթացքին խօսք առին եկեղեցւոյ Հոգաբարձութեան Ատենապետ՝ Սթիվըն Յակոբեան, Ազգ. Վարչութեան Ատենապետը, ծխատէր Քահանան, Հայր Ճոն Պրունէթ ընթերցեց Իլինոյ նահանգի Սփրինկֆիլտ քաղաքի Կաթոլիկ եկեղեցւոյ Առաջնորդ Փափրաքի Եպիսկոպոսին նամակը, որմէ ետք Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, յաւուր պատշաճի իր արտասանած խօսքէն ետք, հրաւիրեց Նորին Սրբութիւնը՝ փակման խօսքը կատարելու:

Համայնական կեանքին մէջ երիտասարդներուն ունենալիք դերակատարութիւնը լուսարձակի տակ բերելով, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Ինձի համար սիրելի են բոլոր ներկաները, սակայն աւելի սիրելի են այնտեղ նստած երիտասարդները, որովհետեւ ես զանոնք կը նկատեմ արիւնք մեր համայնքին: Երիտասարդութիւնը մեր կեանքի լուսանցքին վրայ չէ եւ պետք չէ՛ ըլլայ, այլ՝ մայր



Էջին վրայ: Մենք պէտք է խօսի՛նք երիտասարդության հետ, լսե՛նք զինք, որովհետև
ան ըսելիք ունի եւ աւելի ծանօթ է ժամանակակից աշխարհի պայմաններուն»: *Ապա, Վեհափառ Հայրապետը պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն, որոնք առնչուած էին ընկերային ցանցերու ազդեցութեան, եկեղեցւոյ դերակատարութեան եւ Սիսի Կաթողիկոսարանի վերադարձի դատին:*

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՌԷՅՍԻՆԻ ՄԷՋ

Ուխտաբանսըն Նահանգի Ռէյսին քաղաքին մէջ բնակութիւն հաստատած հայորդիները որդիական խանդավառութեամբ ողջունեցին հովուապետին օրհնաբաշխ այցելութիւնը, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 17 Հոկտեմբեր 2024-ին: Արամ Ա. Կաթողիկոս, իր շքախումբով, ժամանեց Ռէյսին քաղաքի Ս. Յակոբ եկեղեցի, ուր դիմաւորուեցաւ եկեղեցւոյ ծխայիններուն, շրջանի Հայ հոգեւորականներուն, եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին ու Հոգաբարձութեան կողմէ:

«Հրաշափառ...»ի հոգեպարար արարողութեան աւարտին, Անուշաւան Արքեպիսկոպոս ողջունեց Հայոց Հայրապետին հովուապետական այցելութիւնը եւ ըսաւ, որ Նորին Սրբութեան այցը, բառին հարազատ իմաստով, օրհնութիւն է՝ իրենց ինքնութիւնը եկեղեցւոյ սուրբ յարկին տակ գտած Հայ ազգի զաւակներուն համար: Վստահաբար, այս այցելութենէն ետք, հոգեւոր վերանորոգութեան ու աշխուժութեան նոր էջ պիտի բացուի այս համայնքի զաւակներու կեանքին մէջ:



Նորին Ս. Օծութիւնը իր հայրական պատգամին իբրեւ բնաբան ընտրեց սաղմոսերգուին հետեւեալ տողը. «Ուրախացայ, երբ ինձի ըսին.- Տիրոջ տունը երթանք» (Սղ 122.1): Վեհափառ Հայրապետը մեկնելով յիշեալ նախադասութենէն՝ շեշտեց, որ եկեղեցին Աստուծոյ տունն է եւ ո՛չ թէ՛ սոսկ շինութիւն: Այստեղ միատեղուած ժողովուրդը սովորական ամբոխ մը չէ, այլ՝ հասարակաց յատկանիշ եւ արժեհամակարգ ունի: Շարունակելով իր խօսքը, ան ընդգծեց, որ թէեւ մեր ազգի զաւակները շինեցին այս տունը, սակայն Աստուած է որ զանոնք կանչեց այս առաքելութեան: Մենք Աստուծոյ տան մէջ կերտեցինք մեր հոգեւոր ու ազգային ինքնութիւնը եւ դարձանք իսկական քրիստոնեաներ ու հարազատ հայեր. այս տան մէջ ձեւաւորուեցան մեր արժէքները, ասանդութիւններն ու իտէալները: Աստուած այսօր մեզ կը հրաւիրէ իր տան մէջ իրեն հանդիպելու, որովհետեւ Ան մարդ արարածը կը սեպէ իր տան անդամը: Հետեւաբար, մենք՝ իբրեւ Աստուծոյ ժողովուրդը, կոչուած ենք կառչած մնալու մեր եկեղեցւոյ՝ միշտ հաւատարիմ մնալով Աստուածաշունչին փոխանցած պատգամներուն ու արժէքներուն, շեշտեց Նորին Սրբութիւնը:

Հովուապետին պատգամին յաջորդեց աջահամբոյր, որմէ ետք եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին, կիրակնօրեայի աշակերտները ազգային-ժողովրդական երգերով ճոխացուցին մթնոլորտը: Յաջորդաբար խօսք առին եկեղեցւոյ Հոգաբարձութեան Ատենապետ՝ Ժան Պշաբլեան, Թեմի Ազգ. Վարչութեան Ատենապետ՝ Գնդապետ Ա. Սարաֆեան եւ Անուշաւան Արք. Դանիէլեան:



Երեկոյեան փակման օրհնութեան խօսքը ուղղեց Նորին Սրբութիւնը՝ ընդգծելով Հայ համայնքին պատկանելիութեան հրամայականը: Ան պարզեց, թէ քրիստոնէական վսեմ արժէքները, հայկական բարքերը, պատմութիւնն ու մշակոյթը, որոնք ժառանգած ենք մեր ծնողներէն, կ'ամրապնդեն ու կը շեշտեն մեր պատկանելիութիւնը: Այո՛, մենք ազգ մըն ենք, որ պայմաններու բերումով փոքր համայնքներու բաժնուեցանք, սակայն մեր ունեցած պատկանելիութեան ոգին մեզ կը կապէ մեր ազգին: Հետեւաբար, այսօրուան մեր մարտահրաւէրն է միշտ վառ պահել մեր պատկանելիութեան ոգին՝ եկեղեցւոյ ու ազգին նկատմամբ, ընդգծեց Վեհափառ Հայրապետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒՈՅ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ ԿՈՂՄԷ ԾԱՇԿԵՐՈՅԹ՝ Ի ՊԱՏԻ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ուրբաթ, 18 Հոկտեմբեր 2024-ին, ընդառաջելով Շիքակոյի մէջ Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոս՝ Օսքար Թաթոսեանի հրաւերին, Վեհափառ Հայրապետը ներկայ գտնուեցաւ ի պատիւ իրեն տրուած ճաշին, որուն ներկայ էին Ֆրեզնոյի մէջ Պատուոյ Հիւպատոս՝ Պերճ Աբգարեան եւ Շիքակոյէն քաղաքական անձնաւորութիւններ ու ազգայիններ: Յաջորդաբար խօսք առին Պատուոյ Հիւպատոսը, Շիքակոյի եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սամուէլ Քհնյ. Աճէմեանը եւ այլ հիւրեր, որոնք կեդրոնացան Նորին Ս. Օծութեան հովուապետական բազմաբեղուն գործունէութեան վրայ, ինչպէս նաեւ լայն տեղ տուին Դպրեվանքին մէջ կատարուող հոգեմտաւոր առաքելութեան: Ապա, ցուցադրուեցաւ Դպրեվանքի առօրեային առնչուած կարճ տեսարիկ մը:



Ձեռնարկի աւարտին, Վեհափառ Հայրապետը եզրափակիչ խօսք արտասանելով, լուսարձակի տակ առաւ Հայ ինքնութիւնը հայկական աւանդութիւններով եւ արժէքներով պահելու կարեւորութիւնը, մասնաւորաբար Ամերիկայի մէջ, ուր կ'ապրի բազմամշակոյթ ու բազմացեղ հասարակութիւն մը: Ան ըսաւ, թէ այս երկրին մէջ մեր ազգի զաւակները եղած են հաւատարիմ քաղաքացիներ. անոնք իրենց թէ՛ ազգային եւ թէ՛ եկեղեցական կեանքը ծաղկեցուցած են եւ կազմակերպած՝ միշտ կառչած մնալով իրենց արմատներուն: Այսօր, ժամանակակից պայմաններուն մէջ, հարկ է նոյն գիտակցութեամբ ու մօտեցումով պահել մեր հայկական ինքնութիւնը, նշեց ան: Նորին Սրբութիւնը նաեւ արձանագրեց Դպրեվանքին մէջ կատարուող կարեւոր առաքելութիւնը: Ան յիշելով եկեղեցականի հոգեմտաւոր կազմաւորման կարեւորութիւնը ըսաւ, որ Դպրեվանքը Սփիւռքի այն կեդրոնն է, ուր կը պատրաստուին այնպիսի հոգեւորականներ, որոնց նպատակն է ծառայել Աստուծոյ, եկեղեցւոյ ու ազգին: Ահաւասիկ, այս սեղանին շուրջ գտնուող եկեղեցականները Դպրեվանքէն ելած եւ ազգին նուիրուած են: Ուստի, Դպրեվանքի առաքելութեան զօրավիգ կանգնիլ կը նշանակէ եկեղեցւոյ, ազգին ու Հայրենիքին ուղղուած առաքելութեան նեցուկ հանդիսանալ, շեշտեց Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇԻՔԱԿՈՅԻ ՄԷՋ

Հրև. Ամերիկայի Արեւելեան Հայոց թեմի հայահոծ շրջաններէն մէկն է Շիքակոն, ուր Արամ Ա. Կաթողիկոս վերջին անգամ իր այցելութիւնը շնորհած

էր շուրջ իննը տարիներ առաջ: Այս տարի, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան ափին իր շնորհած հովուապետական իր երկրորդ այցելութեան ծիրէն ներս, Նորին Սրբութիւնը այցելեց Շիքակօ, ուր յաջորդաբար հանդիպումներ ունեցաւ երիտասարդութեան, եկեղեցւոյ յարակից մարմիններուն եւ քոյր կազմակերպութիւններուն հետ:



Ուրբաթ, 18 Հոկտեմբեր 2024-ին, Վեհափառ Հայրապետն ու իր շքախումբը ուղղուեցան Շիքակօյի Ամենայն Սրբոց եկեղեցին: Մուտքին հացի ու աղի օրհնութենէն ետք, եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սամուէլ Քհնյ. Աճէմեանի գլխաւորութեամբ, հաւատացեալները, եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը եւ ազգայինները դիմաւորեցին Նորին Սրբութիւնը:

«Հրաշափառ...»ի արարողութեան աւարտին, Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը, յանուն Թեմի Կրօնական ու Քաղաքական Ժողովներուն, բարի գալուստի խօսք արտասանեց: Ներկայացնելով գաղութը, ան ըսաւ. «Վեհափառ Տէր, Ամենայն Սրբոց եկեղեցին Միջին Ամերիկայի միջնաբերդն է՝ հաւատքի, մշակոյթի եւ ընկերային կեանքի բնագաւառներէն ներս: Այս գաղութի հայորդիները հաւատարմօրէն կապուած են իրենց եկեղեցւոյ: Անոնք իրենց հաւատարմութիւնը կը յայտնեն յաճախելով եկեղեցի եւ հաղորդուելով իրենց անցեալի ժառագութեանց»:

Ապա, Նորին Սրբութիւնը իր Հայրապետական պատգամը ուղղեց ժողովուրդին՝ կեդրոնանալով ընտանիքի հարազատ հասկացողութեան վրայ: Ան նախ ընդհանուր գիծերով ներկայացուց ընտանիք հասկացողութիւնը եւ յայտնեց, թէ ընտանիքը ազգի մը կենսունակութեան ու առողջութեան հիմքն է.



անիկա իր բարոյական, հոգեւոր ու ազգային արժէքներով ազգին սինը կը հանդիսանայ: Երկրորդ բաժինով, Նորին Ս. Օծութինը ընտանիքի հասկացողութիւնը ներկայացուց քրիստոնէական պրիսմակէն: Ան ընդգծեց, որ ընտանիքի հիմնադիրը Աստուած ինք է: Մասնաւորելով իր խօսքը, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ քրիստոնէական իսկական ընտանիքը եկեղեցուց մէջ, Աստուծոյ ներկայութեան եւ մեր եկեղեցուց պսակի խորհուրդով օրհնուած ընտանիքն է: Հետեւաբար, ընտանիքը երկու անհատներու միջեւ համաձայնութիւն մը կամ ուխտի մը կնքումը չէ պարզապէս, այլ Աստուծոյ կողմէ հաստատուած ու Անոր ներկայութիւնը վայելող սուրբ կառուց մըն է, ընդգծեց Նորին Սրբութիւնը:





Արամ Ա. Կաթողիկոսի պատգամէն ետք, եկեղեցւոյ ծառայողները, քոյր կազմակերպութիւններու անդամները, հոգաբարձութեան անդամները, ազգայիններն ու հաւատացեալները ստացան Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը:

Յաջորդ օրը, Շաբաթ, 19 Հոկտեմբեր 2024-ին, Նորին Ս. Օծութիւնը յաջորդաբար հանդիպումներ ունեցաւ եկեղեցւոյ յարակից մարմիններուն, քոյր կազմակերպութիւններուն, երիտասարդութեան եւ շաբաթօրեայ Դանիէլ Վարուժան հայկական վարժարանի աշակերտութեան հետ:



Կազմակերպութիւններու ու մարմիններու հետ տեսակցութեան ընթացքին, Նորին Սրբութիւնը իր խօսքին մէջ առաւելաբար շեշտեց համայնքի կեանքին վերակազմակերպման ու վերաշխուժացման համար համագործակցութեան անհրաժեշտութիւնը: Ան ըսաւ, որ քոյր կազմակերպութիւն ըլլալ կը նշանակէ մէկ ընտանիքի անդամ ըլլալ եւ գործել ի նպաստ համայնքի շահերուն:

Ապա, Ամենայն Սրբոց եկեղեցւոյ սրահին մէջ, շաբաթօրեայ վարժարանի աշակերտները կոկիկ յայտագիր մը ներկայացուցին՝ Վեհափառ Հայրապետին օրհնաբեր այցելութեան առիթով: Վարժարանի Տնօրէն՝ Ժագլին Փափազեանի բարի գալստեան խօսքէն ետք, Նորին Սրբութիւնը առիթ տուաւ, որ աշակերտները հարցումներ ուղղեն իրեն:

Նոյն սրահին մէջ, Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցաւ երիտասարդներուն հետ: Պատասխանելով անոնց կողմէ իրեն ուղղուած հարցումներուն, որոնք առնչուած էին հայութեան, երիտասարդութեան, Սփիւռքին, Հայաստանին, մեր մշակոյթին եւ եկեղեցւոյ կեանքին, Նորին Ս. Օծութիւնը ընդգծեց երիտասարդութեան հետ երկխօսութիւն ունենալու, համայնքի կեանքին մէջ անոնց լայն կարելիութիւններ ու պատասխանատուութիւններ տալու անհրաժեշտութիւնը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ

Կիրակի, 20 Հոկտեմբեր 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս Ս. և Անմահ Պատարագ մատուցեց Շիրակոյի Ամենայն Սրբոց Եկեղեցւոյ մէջ, առընթերակայութեամբ Հիւս. Ամերիկայի Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեանի եւ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեանի:



Յընթացս Ս. և Անմահ Պատարագին, Նորին Սրբութիւնը իր Հայրապետական պատգամը ուղղեց Շիրակոյի հայութեան: Ան հիմնուելով Քրիստոսի «ես եմ կեանքի հացը» (Յճ 6.35) խօսքին վրայ ըսաւ, որ մեր Տէրը իր երկրաւոր կեանքի ընթացքին, Ինքզինք նոյնացուց մարդկային կեանքի ամէնէն յատկանշական երեւոյթներուն հետ եւ Ինքզինք կոչեց իսկական ճամբան, կեանքը, ճշմարտութիւնը, լոյսը եւ հացը: Հացը մեր ամէնօրեայ կեանքին մէջ անհրաժեշտ նիւթ մըն է: Մարդը իր ֆիզիքական կեանքին համար կարիքը ունի նիւթեղէն հացի: Հացը մարդկային կեանքին հիմնական կարիքներէն մէկն է: Քրիստոս, երբ ըսաւ, թէ Ինքն է կեանքի հացը, ակնարկեց անոր հոգեւոր իմաստին: Ինչպէս որ մեր ֆիզիքական կեանքին համար նիւթեղէն հացը կարիք է, նոյնպէս ալ հոգեւոր կեանքին համար Քրիստոսի ներկայութիւնը անհրաժեշտ է, ըսաւ Նորին Սրբութիւնը: Ապա, մանրամասնելով կեանքի հացը ունենալու կարեւորութեան, Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ Քրիստոս-հացը մեր կեանքին մէջ կրնանք ունենալ մասնակցելով Ս. Պատարագին, ուր Քրիստոս իր մարմինը կ'ընծայէ մեր մեղքերու թողութեան համար, ինչպէս

նաեւ հաւատարիմ մնալով Աստուածաշունչին փոխանցած արժէքներուն: Ան անդրադառնալով մերօրեայ կեանքին ըսաւ, թէ ի՛նչ օգուտ, երբ մեր սեղաններուն վրայ ունինք ֆիզիքական հացը, սակայն հոն պակաս է մեր հոգեւոր հացը, որ կ'իմաստաւորէ եւ կը զօրացնէ մեր երկրաւոր կեանքը: Առանց Քրիստոսի մեր կեանքը կը կորսնցնէ իր նպատակն ու իմաստը: Նորին Ս. Օծութիւնը շարունակելով իր պատգամը, ընդգծեց բաժնեկցելու կարեւորութիւնը՝ ըսելով, որ Քրիստոս-հացը ունենալ կը նշանակէ մեր ունեցածը բաժնել ու կիսել մեր նմանին հետ: Այսօր, նոր զարգացումներով հարստացած ու ճարտարագիտութեամբ զարդարուած աշխարհին մէջ կան միլիոնաւոր մարդիկ, որոնք հացի կարիքը ունին: Ապա, Նորին Սրբութիւնը հրաւիրեց հաւատացեալները մօտենալու Ս. Հաղորդութեան եւ զայն ընդունելու իբրեւ մեր կեանքի ճշմարիտ հացը:



Ս. եւ Անմահ Պատարագէն անմիջապէս ետք, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին, եկեղեցւոյ 80-ամեակին առիթով բարձրացուած խաչքարի օրհնութեան կարգ կատարուեցաւ, որուն բարերարներն էին Տէյվիտ եւ Սիւզի Էրիքսըն ամուլը:

Իսկ Շաբաթ, 19 Հոկտեմբեր 2024-ին, Ամենայն Սրբոց եկեղեցւոյ Հոգաբարձութեան կազմակերպութեամբ, ի պատիւ Վեհափառ Հայրապետին, տեղի ունեցաւ պաշտօնական ընթրիք, որուն մասնակցեցան շուրջ երկու հարիւր ծխայիւններ: Ընթրիքին, բացման խօսքով հանդէս եկաւ Թալին Արթինեան: Ապա, հերթաբար խօսք առին՝ եկեղեցւոյ Հոգաբարձութեան Ատենապետ՝ Ռաֆֆի Գրիգորեան, Հոգեւոր Հովիւր, Թեմի Ազգ. Վարչութեան Ատենապետը

եւ Առաջնորդ Սրբազան Հայրը: Սրբազան Հայրը իր խօսքին մէջ յատուկ կերպով անդրադարձաւ Նորին Սրբութեան հովուապետի նկարագրին: Ան ըսաւ, թէ Անթիլիասը մեզմէ մղոններով հեռու կրնայ ըլլալ, սակայն իր ծառայական առաքելութեամբ միշտ ներկայ է ամերիկահայութեան կեանքին մէջ:

Նորին Ս. Օծութինը իր հայրական խօսքը ուղղեց ներկաներուն յայտնելով, որ համայնքը անշարժ իրականութիւն մը չէ, որուն մէջ կեդրոնական դիրքը կը գրաւէ եկեղեցին: Ան շեշտեց համայնքի կեանքը վերաշխուժացնող, վերանորոգող ու հզօրացնող չորս հիմնական գործօններ՝ ներդաշնակութիւն, գործակցութիւն, ամբողջականութիւն եւ հաշուետուութիւն: Շարունակելով իր խօսքը, ըսաւ, թէ եկեղեցին սոսկ կառոյց մը չէ, այլ ժողովուրդին կեանքը փոխակերպող ու պայծառակերպող առաքելութիւն է: Եկեղեցին պէտք չէ բանտարկել կառոյցի նեղ սահմաններուն մէջ, այլ հարկ է զայն տանիլ ժողովուրդին: Ապա, ան ընդգծեց համայնքի կեանքին մէջ երիտասարդութեան մասնակցութեան անհրաժեշտութիւնը: Ես չեմ կրնար պատկերացնել աշխոյժ համայնք մը, ուր երիտասարդները բացակայ են անոր կեանքին մէջ: Հետեւաբար, հարկ է քաջալերել մեր երիտասարդները մասնակից դառնալու մեր հաւաքական կեանքին, շեշտեց Նորին Ս. Օծութինը: Իր խօսքի եզրափակիչ բաժինն մէջ, ան կարեւորութեամբ խօսեցաւ նոր սերունդներու դաստիարակութեան ու կազմաւորման մասին: Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ գիտութիւնը եւ ուսումը կարեւոր են, նոյնքան կարեւոր են Հայ արժէքներուն, ոգիին, իտէալներուն, երազներուն ու ասանդութիւններուն փոխանցումը ու պահպանումը: Վա՛յ մեզի եթէ մենք մեր ինքնութիւնը կազմաւորող ազդակներէն հրաժարինք: Հետեւաբար, հարկ է պահել մեզ մեր արմատներուն կապող արժէքները, նշեց Նորին Սրբութիւնը:



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ՈՒԱՔԻԿԸՆԻ ՄԷՋ

Ուաքիկընի հայորդիները որդիական անհուն ուրախութեամբ դիմաւորեցին իրենց Հովուապետը, Երկուշաբթի, 21 Հոկտեմբեր 2024-ին: Յիշարժան է, որ Նորին Սրբութիւնը առաջին Կաթողիկոսն է, որ օրհնաբեր այցելութիւն կը շնորհէ Ուաքիկըն, ուր կը գործէ Ս. Պօղոս եկեղեցին:

Վեհափառ Հայրապետը եկեղեցւոյ մուտքին դիմաւորուեցաւ հաւատացեալներուն, Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Տարօն Ա. Քհնյ. Ստեփանեանին եւ Դըպրաց դասին կողմէ: «Հրաշափառ...»ի արարողութեան աւարտին, Անուշաւան Արք. Դանիէլեան խօսք առնելով ըսաւ, որ անցնող երեք շաբաթներու ընթացքին, Վեհափառ Հայրապետը անխտիր այցելեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու արեւելեան ափին վրայ տարածուած բոլոր Հայ գաղութները: Հետեւաբար, մեր որդիական երախտագիտութիւնը կը յայտնենք անոր: Ուաքիկընը Թեմի ամենափոքր գաղութն է, սակայն հարազատօրէն պահած է իր հայկական ինքնութիւնն ու ժառանգութիւնը: Այստեղ հաստատուած հայերը երբեք չեն հեռացած մեր եկեղեցիէն ու աւանդութիւններէն:

Արամ Ա. Կաթողիկոս իր պատգամին մէջ պարզեց եկեղեցի ըլլալու պայմանները: Ան իր խօսքը հիմնաւորելով Քրիստոսի «ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունովս, ես հոն եմ» (Մտ 18.20) խօսքին վրայ ըսաւ, որ հոն ուր Քրիստոս ներկայ է, այդ տեղը կը վերածուի եկեղեցւոյ, իսկ համախըմբուած հաւատացեալները կը վերածուին Աստուծոյ ժողովուրդին: Քրիստոսի խորհրդական մարմինն է եկեղեցին եւ մենք եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան մասնակից դառնալով մասնակցած կ'ըլլանք Քրիստոսի մարդեղութեան,



չարչարանքներուն, խաչելութեան եւ հրաշափառ յարութեան: Շարունակելով իր պատգամը, շեշտեց, որ փոքր կամ մեծ, հարուստ կամ աղքատ եկեղեցի չկայ. կայ մէկ եկեղեցի, Քրիստոսի՝ եկեղեցին, որուն իսկական անդամները կը դառնանք մասնակցելով անոր առաքելութեան ու սուրբ խորհուրդներուն: Իր պատգամի երկրորդ բաժնին մէջ, Նորին Ս. Օծութիւնը անդրադարձաւ Հայ եկեղեցւոյ ու անոր արժէքներուն կառչած մնալու կարեւորութեան: Մենք եկեղեցի կը յաճախենք իբրեւ Հայ քրիստոնեաներ. ուր որ ալ ըլլանք, ինչ պայմաններու տակ ալ ապրինք, պէտք է պահենք մեր ազգային ինքնութիւնը, աւանդութիւնները, բարոյական արժէքները եւ իտէալները շեշտելով՝ եզրափակեց Նորին Սրբութիւնը:

Պատգամէն անմիջապէս ետք տեղի ունեցաւ աջահամբոյր, եւ ապա հաւաքական ընթրիք: Խօսք առին եկեղեցւոյ Հովիւ Քահանայ Հայրը, Հոգաբարձութեան Ատենապետ՝ Ալթա Միքայէլեանն ու Առաջնորդ Սրբազան Հայրը, իսկ եկեղեցւոյ փոքրիկ դպիրները ներկայացուցին կոկիկ յայտագիր մը:

Վեհափառ Հայրապետը իր եզրափակիչ օրհնութեան խօսքին մէջ բարձրօրէն գնահատեց եկեղեցւոյ ծխայինները, Քահանայ Հայրը եւ հոգաբարձութեան անդամները՝ մեր եկեղեցւոյ ու Հայ ինքնութեան պահպանութեան նկատմամբ անոնց ցուցաբերած նախանձախնդրութեան համար:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՏԻԹՐՈՅԹԻ ՄԷՋ

Վեհափառ Հայրապետին հովուապետական օրհնաբեր այցելութիւնը իր լրումին հասաւ Միշիկըն նահանգի Տիթրոյթ քաղաքին մէջ: Հոն հաստատուած Հայ համայնքը Արեւելեան Հայոց Թեմի մեծագոյն համայնքներէն մէկն է:

Երկուշաբթի, 22 Հոկտեմբեր 2024-ին, Նորին Սրբութիւնը եւ իր շքախումբը ժամանեցին Տիթրոյթ:

Չորեքշաբթի, 23 Հոկտեմբեր 2024-ին, Տիթրոյթի Ս. Սարգիս եկեղեցւոյ մուտքին Վեհափառ Հայրապետը դիմաւորուեցաւ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Քհնյ. Գէորգեանի, բազմահարիւր հաւատացեալներու, եկեղեցւոյ յարակից մարմիններու եւ քոյր կազմակերպութիւններու կողմէ:

Եկեղեցական արարողութեան աւարտին, յանուն Արեւելեան Հայոց Թեմին խօսք առնելով Առաջնորդ Սրբազան Հայրը յայտնեց, որ Վեհափառ Հայրապետը հակառակ Լիբանանի մէջ տիրող ծանր պայմաններուն, յանձն առաւ այցելութիւն շնորհել Ամերիկայի ամերուն վրայ հաստատուած իր ժողովուրդի զաւակներուն: Հետեւաբար, մեր որդիական երախտագիտութիւնը կը յայտնենք Նորին Ս. Օծութեան եւ իբրեւ եկեղեցւոյ ծառայողներ կը վերանորոգենք մեր ուխտը՝ հաւատարմօրէն շարունակել ծառայելու մեր ազգի զաւակներուն: Ապա, ան հրաւիրեց Նորին Սրբութիւնը՝ ուղղելու իր պատգամը:



Արամ Ա. Կաթողիկոս իր Հայրապետական պատգամին մէջ բարձօրէն գնահատեց Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Թեմին մէջ կատարուող տքնաշան աշխատանքը: Ան յիշեցուց, թէ Հայ եկեղեցւոյ առաքելութիւնը մեր ժողովուրդի սիրեցեալ զաւակներո՛ւն ուղղուած առաքելութիւն է: Եկեղեցին նոյնինքն ժողովուրդն է: Եկեղեցին մեր գաղութներու կեանքին կեդրոնն է: Մեր ժողովուրդը, դարեր շարունակ, իր հաւաքական կեանքը կեդրոնացուցած է եկեղեցւոյ շուրջ՝ միշտ հաղորդակից մնալով անոր կեանքին: Այսօր, նոյն ոգին ու նոյն յանձնառութիւնը կը սպասենք մեր ազգի զաւակներէն, շեշտեց ան: Իր պատգամի երկրորդ հատուածին մէջ, ան կեդրոնացաւ Տէրունական աղօթքին «այլ փրկեալ զմեզ ի չարէ, զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս» նախադասութեան ու բացատրեց չարը եւ Աստուծոյ թագաւորութիւնը: Խօսելով չարին մասին, Նորին Սրբութիւնը յայտնեց, թէ ան զանազան միջոցներով կը ջանայ թափանցել մեր կեանքէն ներս: Հարկ է զգոյշ ըլլալ եւ չարտօնել անոր թափանցումը, ինչպէս ըրաւ մեր Տէրը Յիսուս Քրիստոս: Ապա, խօսեցաւ Աստուծոյ արքայութեան ճշգրիտ իմաստին մասին: Ան նշեց, որ մեր ժողովուրդին մօտ թիւր հասկացողութիւն մը տարածուած է արքայութեան գծով: Աստուծոյ թագաւորութիւնը ժամանակներու աւարտին տեղի ունենալիք իրականութիւն մը չէ, այլ Քրիստոսի հետ աշխարհ եկած վիճակ մըն է: Քրիստոս իր մարդեղացումով արքայութեան դռները բացաւ մարդուն առջեւ: Իսկ ժամանակներու աւարտին պատահելիքները Աստուծոյ թագաւորութեան վերջնական ձեւաւորումն ու հաստատումն են, ըսաւ Նորին Ս. Օծութիւնը:



Եկեղեցական արարողութեան աւարտին, Տիթրոյթի հայորդիները մօտենալով Վեհափառ Հայրապետին, համբուրեցին անոր աջը եւ ստացան անոր հայրական օրհնութիւնը: Ապա, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ հաւաք՝ ի պատիւ Նորին Սրբութեան: Հաւաքի ընթացքին, համայնքի զանազան մարմիններու ու կազմակերպութիւններու աշակերտները ամփոփ յայտագիր մը ներկայացուցին ներկաներուն: Յաջորդաբար խօսք արտասանեցին հովուապետական այցելութեան ժամանակաւոր յանձնախումբի Ատենապետ՝ Արա Թօփուզեան, եկեղեցւոյ Հոգաբարձութեան Ատենապետ՝ Սեդա Չօպանեան, Հ.Յ.Դ.ի շրջանի Հերթապահ՝ Սեպուհ Հացագործեան եւ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւր: Ապա, Տէր Հայրը եկեղեցւոյ ընտանիքին անունով Վեհափառ Հայրապետին նուիրեց անոր դիմապատկերը:

Նորին Սրբութիւնը իր եզրափակիչ խօսքին մէջ շեշտեց Հայ արժէքներուն, իտէալներուն ու եկեղեցւոյ կառչած մնալու անհրաժեշտութիւնը: Ան ըսաւ. «Այսօր գեղեցիկ նուէր մը ստացայ ձեզմէ, սակայն ինծի տրուելիք ամենաշէտ նուէրը մեր եկեղեցւոյ, նուիրական արժէքներուն ու երազներուն նկատմամբ ձեր հաւատարմութիւնն է մեր եկեղեցւոյ ու այս համայնքին նկատմամբ»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Չորեքշաբթի, 23 Հոկտեմբեր 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս այցելեց «Ալէք եւ Մարի Մանուկեան» վարժարան, ուր ջերմ ընդունելութեամբ դիմաւորուեցաւ վարժարանի Տնօրէնութեան, անձնակազմին ու աշակերտութեան կողմէ:

Բարի գալուստի խօսքն էտք, վարժարանի աշակերտները ներկայացուցին Հայ երգով, պարով ու արտասանութիւններով գեղարուեստական ճոխ յայտագիր մը: Խօսքեր արտասանեցին դպրոցի Տնօրէն՝ Սոնիա Գալֆայեան եւ հայկական բաժնի Ուսուցչապետ՝ Սեպուհ Աւետիսեան:

Աւարտին, Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց վարժարանի Տնօրէնութիւնն ու Ուսուցչաց կազմը՝ անոնց ազգանուէր գործունէութեան համար: Խօսքը ուղղելով աշակերտութեան, ան ըսաւ, թէ Հայ դպրոցը, Հայ եկեղեցւոյ կողքին, մեր ազգին ինքնութեան պահպանութեան կռուանը դարձած է: Մենք Հայ դպրոցին մէջ կը հայանանք եւ կը հաղորդակցինք մեր ազգային հարուստ ժառանգութեան հետ: Կարելի չէ պատկերացնել Հայ կեանքը առանց Հայ դպրոցի ներկայութեան: Նորին Սրբութիւնը ընդգծեց, թէ Հայ դպրոցը նուիրական հաստատութիւն է. ուստի, գիտակցութեամբ պէտք է Հայ դպրոցին մօտենանք, որովհետեւ մեր ազգի ապագան կախեալ է Հայ դպրոցէն: Իր խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետը շեշտեց հայակերտման անհրաժեշտութիւնը եւ ըսաւ, թէ Հայ դպրոցը միայն ուսում ջամբելու տեղ չէ, այլ այն վայրն է, ուր Հայը ճշմարտօրէն եւ գիտակցօրէն Հայ կը դառնայ:

Նշենք, որ Վեհափառ Հայրապետը առիթ ունեցաւ հանդիպում մը ունենալու բարձր դասարանի աշակերտներուն հետ, որոնք Նորին Սրբութեան ուղղեցին իրենց հարցումները՝ երիտասարդութեան դերակատարութեան, ինչպէս նաեւ դիմագրաւող մարտահրաւէրներուն շուրջ:

Դպրոցի այցելութենէն ետք, Նորին Ս. Օծութիւնը այցելեց դպրոցի կողքին գտնուող Ս. Յովհաննէս եկեղեցին, ուր դիմաւորուեցաւ Հոգեւոր Հովիւ՝ Հոգշ. Տ. Առէն Աբղ. Ճէպէճեանի կողմէ եւ իր աղօթքը բարձրացուց եկեղեցւոյս ու ազգիս բարօրութեան ու բարգաւաճման համար:



**ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՐԱԿԻՑ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Նոյն օրը, Վեհափառ Հայրապետը Ս. Սարգիս եկեղեցույ սրահին մէջ հանդիպում ունեցաւ Տիթրոյթի եկեղեցույ յարակից մարմիններուն եւ հայկական կազմակերպութիւններու ու միութիւններու ներկայացուցիչներուն հետ:



Հանդիպման ընթացքին, Նորին Սրբութիւնը ըսաւ, որ քոյր կազմակերպութիւններ ըլլալ կը նշանակէ մէկ ընտանիքի անդամ ըլլալ: Այդ ընտանիքը մեր ազգն է: Համայնքը կը դառնայ հզօր ու կազմակերպ, երբ անոր կեանքին մէջ գործող կառույցները ներդաշնակօրէն կը կատարեն իրենց վստահուած առաքելութիւնը՝ միշտ նպատակ ունենալով համայնքին բարօրութիւնը: Այս առիթով, ան իր ջերմ գնահատանքը յայտնեց միութիւններուն տարած աշխատանքին եւ յաջողութիւն մաղթեց անոնց ծրագիրներուն իրականացման:

ՀԱՒԱՔ՝ Ի ՍԱՏԱՐ ԴՊՐԵՎԱՆՔԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ

Երեքշաբթի, 22 Հոկտեմբեր 2024-ին, նախաձեռնութեամբ Ս. Սարգիս եկեղեցույ, կազմակերպուեցաւ յատուկ հաւաք մը՝ սատարելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի առաքելութեան:

Ընթրիքի ընթացքին ներկաները դիտեցին Դպրեվանքի առօրեային առընչուած կարճ տեսարիզ մը: Յաջորդաբար խօսք առին երեկոյի հովանաւոր՝ Ռաֆֆի Քիրէճեան եւ Ս. Սարգիս եկեղեցույ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Քհնյ. Գէորգեան, որոնք ընդգծեցին Դպրեվանքին օժանդակելու հրամայականը:



Աւարտին, Վեհափառ Հայրապետը ներկաներուն ուղղեց իր Հայրապետական օրհնութեան խօսքը: Ան ըսաւ, որ Դպրեվանքը սովորական վայր մը չէ, ուր աշակերտներ կը յաճախեն սովորական ուսում ստանալու համար. Դպրեվանքը մարդակերտման, մա՛րդ պատրաստելու դարբնոց է: Այս սիրոյ սեղանին շուրջ գտնուող բոլոր հոգեւորականները անցած են Դպրեվանքէն, հոն թրծուած ու վերամարդացած են՝ երթալու ու իրենց ծառայութիւնը մատուցելու մեր ժողովուրդի զաւակներուն: Դպրեվանքին նպատակն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայական ոգին դրոշմել մարդուն մէջ, ընդգծեց Վեհափառ Հայրապետը:

Կարեւորութեամբ յիշենք, որ Արամ Ա. Կաթողիկոս հովուապետական բոլոր այցելութիւններու ընթացքին, շեշտեց գաղութներուն մէջ կրթական կեանքը վերակազմակերպելու կարեւորութիւնը՝ Հայ դպրոցը նկատելով եկեղեցւոյ առաքելութեան կարեւոր տարածքներէն մէկը՝ Հայ կեանքէն ներս հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու ամրապնդման նուիրուած:



ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՆՃԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԲԱՆԷՆ ՆԵՐՍ

Տարուան վերջին տաղաւար (մեծ, աւագ) տօնը մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Խաչի վերացումին տօնն է (Վերացման Ս. Խաչ): Այս տօնին կը յիշատակուի Լիբանանի մէջ հաստատուած Այնճար աւանին հիմնադրութեան տօնը, որովհետեւ Ս. Խաչին շնորհիւ այնճարցիները փրկուեցան թուրքին եաթաղանէն:

Արդարեւ, 2024 տարին կը զուգադիպի Մուսա Լերան հերոսամարտի 109-րդ եւ Այնճարի հիմնադրութեան 85 ամեակներուն, որոնց տօնակատարութեանց շրջագծին մէջ տեղի ունեցան բազմաթիւ մշակութային ձեռնարկներ՝ շեշտելով Այնճարին հայկականութիւնը եւ աւանը առաւել եւս հայկականացրնելու ու անոր բարձրն ու աւանդութիւնները պահելու ու պահպանելու այնճարցիին վճռակամութիւնը:

Այս առիթով, Կիրակի, 15 Սեպտեմբեր 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս այցելութիւն մը տուաւ Այնճարի հայկական աւան, ուր տեղւոյն Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ նախագահեց Ս. եւ Անմահ Պատարագի մատուցման արարողութեան եւ իր Հայրապետական պատգամը յղեց հաւատացեալ ժողովուրդին եւ





կատարեց մատաղի օրհնութիւնը: Օրուան պատարագիչն էր Պէքայի Հոգեւոր Տեսուչ՝ Գերպ. Տ. Անանիա Ծ. Վրդ. Գուճանեան:

Այնճարի մուտքին Վեհափառ Հայրապետը դիմաւորուեցաւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանի, Քաղաքապետ՝ Վարդգէս Խոշեանի, Ազգ. Իշխանութեան անդամներուն, Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան անձնակազմին, Հոգեւոր Հայրերու եւ լիբանանահայ համայնքի կազմակերպութիւններու, կառույցներու ու մարմիններու ներկայացուցիչներուն կողմէ: Վերոյիշեալ այցելութեան ընթացքին Նորին Ս. Օծութեան շքախումբին մաս կը կազմէին Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի Վարիչ՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, Կաթողիկոսարանի Տեղեկատուական բաժանմունքի Տնօրէն՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան, Գաւազանակիր՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատենապետ՝ Ստեփան Տէր Պետրոսեան:

Այնճարի մուտքին աւանդական աղի ու հացի օրհնութենէն ետք, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ եկեղեցի, ուր Նորին Ս. Օծութիւնը օրուան պատգամը փոխանցեց հաւատացեալներուն:

Առաջին հերթին բարի գալստեան խօսք արտասանեց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը: Ողջունելէ ետք Վեհափառ Հօր ներկայութիւնը Լիբանանի Հայոց Թեմէն եւ ի մասնաւորի Այնճարէն ներս, ան վստահեցուց, որ այս այցելութիւնը առիթ պիտի ըլլայ նոր ոգեւորութիւն ներշնչելու Մուսա Լերան շառաւիղներուն, որոնք հաղորդակից մնալով իրենց հայրերու կերտած փառքին՝



կը շարունակեն կորովով արմատ ու ճիւղ արձակել Հայու քրտինքով նուիրականացած այս հողին վրայ: Շարունակելով իր խօսքը, Շահէ Արք. յայտնեց, որ Այնճարը իր ծոցին մէջ կը հաւաքէ մեր ժողովուրդի զաւակները, որպէսզի սերունդները ճանչնան իրենց հայրերուն մեծագործութիւնը եւ անոնց օրինակին հետեւելով՝ ազգի վերելքին ու ամբուլթեան համար անձնուիրաբար ընծայեն իրենց կարելիութիւնները: Աւարտին, Սրբազան Հայրը աղօթք բարձրացուց առ Աստուած, որ բեղուն ու ծաղկուն պահէ Նորին Սրբութեան կեանքն ու աշխատանքը, որպէսզի իրմով շարունակենք տեսնել աւելի լայն հորիզոններ ու քաջութիւն գտնել մեր կեանքին համար, եւ հրաւիրեց որ-

պէսզի իր Հայրապետական պատգամը ուղղէ մեր ժողովուրդին:

Վերացման Ս. Խաչի տօնին լոյսին տակ, Վեհափառ Հայրապետը հակիրճ կերպով բացատրեց խաչին խորհուրդը՝ շեշտելով, թէ խաչը սիրոյ, զոհողութեան եւ յաղթանակի նշան է: Իւրաքանչիւրին մասին ու աւետարանական մէջբերումներով, ան անհրաժեշտ բացատրութիւններ տուաւ: Ապա, անդրադառնալով մեր ժողովուրդի դարաւոր պատմութեան՝ ան ըսաւ, թէ խաչը պաշտող առաջին ազգը եղած ենք եւ խաչին նկատմամբ մեր հաւատարմութենէն մղուած նահատակուած ենք ու պայքարած: Խաչը մեր ժողովուրդին համար եղած է հոգեմտաւոր ստեղծագործութեան աղբիւր ու մղիչ ոյժ: Շարունակելով իր պատգամը՝ Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, որ կարելի չէ հասկնալ Հայոց Պատմութեան խորհուրդը ու հրաշքը առանց խաչին: Անոր զօրութեամբ մենք մահը խորտակեցինք եւ յարութիւն կերտեցինք:

Անդրադառնալով Մուսա Լերան 40 օրերուն ու մուսա լեռցիներու Այնճար հաստատման եւ խօսքը ուղղելով անոնց՝ Արամ Ա. Կաթողիկոս յայտնեց, թէ խաչի զօրութեամբ Մուսա Լեռը արեան վկայութեամբ յաղթանակի վերածեցիք: Խաչին զօրութեամբ Այնճար հաստատուեցաք՝ հակառակ ահաւոր դժուարութիւններուն եւ խաչին զօրութեամբ այս երբեմնի գիւղը վերածեցիք փոքր Հայաստանի: Խօսելով ներկայ ժամանակներուն մասին, ան կոչ ուղղեց այնճարցիներուն՝ նոյն հաւատարմութեամբ, խաչի հաւատքով ու զօրութեամբ

զօրացած, պէտք է Այնճարը նորանոր իրագործումներով աւելի՛ ծաղկացնէք, եզրափակեց իր պատգամը:

Այնճարի հաստատման 85 ամեակի տօնակատարութիւնները եզրափակուեցան ի պատիւ Վեհափառ Հայրապետին տրուած պաշտօնական ճաշկերոյթով, որուն ընթացքին արտասանուեցան խօսքեր, կատարուեցաւ մենապար, քանի մը երգերով հանդէս եկան հայրենի արուեստագէտներ, իսկ աւարտին Վեհափառ Հայրապետը իր խօսքը ուղղեց ներկաներուն եւ Կայծակ Զէյթլեանի կուրծքը զարդարեց մեր Ս. Աթոռի «Կիրիկեան Ասպետ»ի շքանշանով:



Իր խօսքին մէջ ան կատարեց չորս հաստատումներ.- առաջին. գնահատանք բոլոր անոնց, որոնք իրենց մտքէն, հոգիէն ու քսակէն բան մը տալով՝ շէնցուցին Այնճարը՝ զայն դարձնելով հայութեամբ շնչող Հայ աւանի: Երկրորդ. Այնճարը միայն հող ու քար չէ՛, այլ նաեւ ժողովուրդ է: Առանց ժողովուրդի Այնճարը իր իմաստը կը կորսնցնէ. հետեւաբար, այնճարցիւն պէտք է կապուած մնայ իր հողին՝ զայն աւելի շէնցնելու յանձնառութեամբ ու վճռականութեամբ: Երրորդ. Նորին Սրբութիւնը յիշեց, որ շուրջ տասը տարիներ առաջ, երբ այցելած էր Այնճար, կոչ ուղղած էր, որ այնճարցիւն իր հողը օտարին չծախէ: Այսօր եւս, նոյն կոչը կ'ուղղեմ, ըսաւ ան, որովհետեւ օտարին օտարացնող ներկայութիւնը ընդունելի չէ: Այնճարին Հայ դիմագիծը պէտք է պահէ ամէն գնով: Չորրորդ. Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ, որ Այնճարը ունի իր լայն Սփիւռքը: Բոլոր գաղութներէն ներս այնճարցիւններ կան, որոնք տակա-

ւին կապուած են Այնճարին. սակայն, անհրաժեշտ է, որ անոնք իրենց կապուածութիւնը գործնապէ՛ս արտայայտեն՝ նիւթական օժանդակութիւն կատարելով եւ Այնճարի կարիքներուն ու ծրագիրներուն օգտակար հանդիսանալով: Այս ծիրին մէջ, Նորին Սրբութիւնը յատուկ կերպով գնահատեց Տէր եւ Տիկ. Կայծակ ու Ծովիկ Զէյթլեան ամուլը՝ ի տես անոր նուիրաբերումին՝ Այնճարին եւ զանազան ծրագիրներու օժանդակութեան: Այս առիթով, որպէս գնահատանք, Զէյթլեան զոյգին ծառայութեանց ու կատարած օժանդակութեանց՝ Նորին Ս. Օծութիւնը Կայծակ Զէյթլեանը պարգեւատրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանով:

Զեռնարկը իր աւարտին հասաւ «Կիլիկիա» մաղթերգով եւ Վեհափառ Հօր «Պահպանիչ...» աղօթքով:



ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻ
(5.1-4)

ԳԼՈՒԽ 5

«Յիսուս բազմութիւնը տեսնելով լեռ ելաւ եւ հոն նստաւ: Իր աշակերտները հաւաքուեցան իր շուրջ, եւ ինք սկսաւ անոնց սորվեցնել, ըսելով» (Մտ 5.1-2):

«Լերան քարոզը» անունով ճանչցուած Մատթէոսի 5-7 գլուխները, յատուկ տեղ գրուած են եկեղեցւոյ առաջին հայրերուն գրականութեան մէջ: Շատեր յիշեալ գլուխները կոչած են «Նոր կեանքին կանոնագրութիւնը»: Օգոստինոս կ'ըսէ, թէ «յիշեալ գլուխներուն մէջ կը գտնուին բոլոր այն սկզբունքները՝ որոնք անհրաժեշտ են քրիստոնէական կատարեալ կեանքի մը համար»:

1) Գալիլեայէն, Դեկապոլիսէն, Երուսաղէմէն, Հրէաստանէն եւ անոր Յորդանանէն մեծ բազմութիւն մը հաւաքուած էր Յիսուսի շուրջ (Մտ 4.1): Յիսուս զանոնք տեսնելով «լեռ ելաւ եւ հոն նստաւ»: «Լեռ»ը Գալիլեայի լեռներէն մէկն է: Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները երբ պիտի ուսուցանէին՝ Մովսէսի աթոռին վրայ կը նստէին (Մտ 23.2), Յիսուս սակայն անոնց նստած աթոռին վրայ չնստաւ, այլ՝ լերան մը վրայ: Մովսէսի աթոռին վրայ նստողները ժողովուրդը կը ծանրաբեռնէին օրէնքներով եւ հայրերու աւանդութիւններով: Յիսուս չեկաւ ժողովուրդը ծանրաբեռնելու օրէնքներով, ընդհակառակը, եկաւ զիրենք ազատելու Օրէնքի անէծքէն (Գղ 3.13), եւ անոր համար ալ չնրստաւ Մովսէսի աթոռին վրայ: Եթէ նստէր եւ նստելով ուսուցանէր՝ ժողովուրդը պիտի չկարենար մեծ տարբերութիւն տեսնել անոր եւ Օրէնքի ուսուցիչներուն ու Փարիսեցիներուն միջեւ: Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները լեռներու վրայ նստելով ուսուցանելու սովորութիւնը չունէին, ո՛չ ալ հարկաւ խոնարհութիւնը ունէին գետին նստած ուսուցանելու: Հարցումը որ ուղղուած է եկեղեցականներու ու քարոզիչներու՝ հետեւեալն է. մենք ո՞ր նստած ենք. ժողովուրդին հետ՝ գետին, թէ աթոռներու վրայ: Աւետարաններուն մէջ բնաւ չենք կարդար որ Յիսուս աթոռի վրայ նստաւ եւ սկսաւ ուսուցանել կամ բժշկել. ան միշտ ժողովուրդին մէջ ու ժողովուրդին հետ էր. ուր որ անոնք նրստէին՝ ինքն ալ անոնց հետ կը նստէր հաւասարէ հաւասար:

2) Մատթէոսի 5-7 գլուխները ճանչցուած են «Լերան Քարոզը» անունով, եւ անոնք կը ներկայացնեն Նոր Կտակարանի Օրէնքը, որ խորքին մէջ սիրոյ Օրէնքն է, Աստուծոյ Շնորհքի Օրէնքն է: Մովսէս լերան վրայ էր որ Օրէնքը ստացաւ եւ զանիկա տուաւ ժողովուրդին: Յիսուս ինք եւս, ըլլալով ճշմարիտ պատկերը Մովսէսի, ուզեց լերան վրայէն տալ Նոր Կտակարանի Օրէնքը՝ Շնորհքը: Տէրը յայտարարելով թէ ինք չէր եկած Մովսէսի Օրէնքը ջնջելու, այլ՝ ամբողջացնելու (Մտ 5.17), արդէն իսկ բացուած յայտարարած եղաւ Շնորհքի ժամանակաշրջանը: Արդարեւ, 5-րդ այս գլուխին մէջ վեց անգամներ կրկնելով «լսե՛ք Խ՛ որ ըստած է ... իսկ ես կ'ըսեմ ձեզի» հաստատումը, Տէրը ցոյց տուաւ թէ ինք եկած էր Օրէնքի տառէն անդին՝ անոր հոգիին տանելու մեզ, նիւթէն հիւթին տանելու մեզ, իսկ հոգին եւ հիւթը՝ Շնորհքը ինքն է:

3) «Նստաւ»: Նստելով ուսուցանելը՝ իշխանութիւն ցոյց կու տայ: Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները նստելով կ'ուսուցանէին, որովհետեւ այդ իշխանութիւնը տրուած էր իրենց, իսկ Յիսուս որ երբեմն նստելով կ'ուսուցանէր՝ այդպէս կ'ընէր, ո՛չ թէ որովհետեւ ուսուցանելու իշխանութիւն տրուած էր իրեն, այլ որովհետեւ ինքն է իշխանը եւ իշխանութիւնը, ինքն է մարդոց ուսուցանելու իշխանութիւն ու զօրութիւն տուողը:

4) Երբ Աստուած Սինա լերան վրայ Օրէնքը պիտի տար Մովսէսին, ժողովուրդին պատուիրեց որ շմտեանան լերան որպէսզի շմեռնէին, իսկ այստեղ կը տեսնենք ժողովուրդը Յիսուսի շուրջ հաւաքուած: Օրէնքը մարդս Աստուծմէ հեռու կը վանէ ու կը սպաննէ զայն, մինչդեռ Շնորհքը մարդս Աստուծոյ կը մօտեցնէ ու կեանք կու տայ անոր:

5) «Ի՛ր աշակերտները հաւաքուեցան ի՛ր շուրջ»: Անոնք որոնք հաւատարիմ հետեւորդներն են Քրիստոսի՝ միշտ անոր շուրջ խմբուած պէտք է ըլլան: Կենսատու խօսքի ծարաւ հոգիները՝ կենսատու Փրկիչին շուրջ պէտք է հաւաքուին: Այսօրուան հաւատացեալները երեւութապէս հաւաքուած են Քրիստոսի շուրջ, բայց խորքին մէջ, անոնք իրենց սեփական շահին, փառքին, հանգիստին, դիրքին ու դրամին շուրջ հաւաքուած են: Անոնք որոնք կը սիրեն Յիսուսը, ամէն օր պէտք է անոր շուրջ հաւաքուին, անոր հետ ժամանակ անցնեն, եւ անով լեցուին ու սրբուին:

6) «Ակսաւ ամոնց սորվեցնել»: Ով որ կ'ուզէ սորվիլ՝ Յիսուս իրեն կը սորվեցնէ: Հաւատացեալ մարդը պէտք է պատրաստ ըլլայ լսելու Քրիստոսը եւ սորվելու անկէ: Արդարեւ, Յիսուս ինքն է մեր ուսուցիչը, որ մեզի կը սորվեցնէ իր սրտին ու սրտի սիրոյն մասին, իր կամքին ու կամքի կատարելութեան մասին, իր խօսքին ու խօսքի զօրութեան մասին, իր փրկութեան ու փրկութեան քաղցրութեան մասին, իր փառքին ու փառքի մեծութեան մասին, իր թագաւորութեան եւ անոր գաղտնիքներուն մասին:

7) Յիսուս լեռ բարձրացաւ, եւ բազմութիւնը հետեւեցաւ իրեն: Տէրը լռելեայն կերպով իր հետեւորդներուն բարձրանալ կը սորվեցնէ: Կը բարձրանան միայն անոնք՝ որոնք կը հետեւին Յիսուսին, եւ կրնան հետեւիլ Յիսուսին միայն անոնք՝ որոնք կը բարձրանան: Եթէ Զակքէոս ծառ շբարձրանար՝ պիտի չտեսնէր Յիսուսը եւ անոր հետեւորդ պիտի չդառնար: Անոնք որոնք տեսնել կ'ուզեն Յիսուսը՝ պէտք է բարձրանան: Ի՞նչ բանի վրայ պէտք է բարձրանան, իրենց մեղքերուն վրայ: Պէտք է ոտքի տակ առնեն իրենց մեղքերը, եթէ երբեք կ'ուզեն Անմեղին հասնիլ, անոր ներկայութեան կանգնիլ, եւ անկէ սորվիլ: Բարձրեալին հետեւիլ եւ անկէ սորվիլ ուզողները պէտք է բարձրանալու փափաք ունենան, մենք պատրաստ ենք բարձրանալու մեր «ըսի-ըսաւ»ներէն, մանրութիւններէն, այլ խօսքով՝ հեռանալու բոլոր այն երեւոյթներէն որոնք մեզ կը հեռացնեն Քրիստոսէ, եւ մերժելու բոլոր այն բաները՝ որոնք մեզ մերժելի կը դարձնեն երկինքի համար:

«Երանի՛ հոգիով աղփատներուն, որովհետեւ անոնց է երկինքի արժանութիւնը» (Մտ 5.3):

Որո՞նք են հոգիով աղքատները.՝

1) Հոգիով աղքատները անոնք են՝ որոնք կը զգան ու կը գիտակցին թէ իրենք Աստուծոյ կարիքը ունին: Ինչպէս նիւթապէս աղքատը՝ նիւթականի պէտք ունի, այնպէս ալ, հոգիով աղքատը՝ Աստուծոյ պէտք ունի: Մենք աղքատ ենք հոգիով, այլ խօսքով՝ կը գիտակցի՞նք թէ Աստուծոյ կարիքը ունինք: Ինչպէս կերակուրով լեցուած փորը կերակուրի կարիքը չ'զգար, այնպէս ալ, աշխարհով լեցուած մարդը Աստուծոյ կարիքը չ'զգար:

2) Հոգիով աղքատները անոնք են՝ որոնց հոգիները աղքատացած, այլ խօսքով՝ մերկացած են փառքէն: Ինչպէս նիւթապէս աղքատ մարդը փառասէր չ'ըլլար, նոյնպէս ալ, հոգեպէս աղքատը հեռու կը մնայ փառասիրութենէն: Երկրաւոր փառքէն փախչողը՝ երկինքի փառքը պիտի ժառանգէ:

3) Հոգիով աղքատները անոնք են՝ որոնք կապուած չեն նիւթական այս աշխարհին, եւ որոնց սիրտն ու հոգին աղքատացած, այլ խօսքով՝ մերկացած է աշխարհէն ու աշխարհի սէրէն, նիւթէն եւ նիւթականի սէրէն: Նիւթականին կապուած անձը՝ չի կրնար Աննիւթականին կապուիլ:

4) Հոգիով աղքատները անոնք են՝ որոնք կամովին կ'ընտրեն խոնարհ ըլլալ, ճիշդ Յիսուսի օրինակով, որ մեզի համար ընտրեց աղփատանալ ինք որ հարուստն էր (Բ.Կր 8.9), կ'ըսէ Ներսէս Շնորհալին:

5) Հոգիով աղքատները անոնք են՝ որոնք կ'աղքատանան, այլ խօսքով՝ կը մերկանան իրենց մեղքերէն ու կը հարստանան առաքինութիւններով, որոնք կ'աղքատանան շարիքներէն եւ առատ բարիքներ կը գանձեն իրենց հոգիներուն մէջ (Ներսէս Շնորհալի):

6) Գրիգոր Տաթևացին կ'ըսէ, թէ հոգիով աղքատը՝ աշխարհէն, այսինքն՝ մարմնական հեշտութեանց ու փարթամութեանց սէրէն, եւ փառամոլութենէն հրաժարողն է:

7) Հստ Մխիթար Վրդ. Սեբաստացիին, հոգիով աղքատը՝ հեզ եւ ինքզինք ոչինչ համարող անձն է:

8) Հոգիով աղքատները անոնք են՝ որոնք կ'անդրադառնան իրենց փոքրութեան ու կը խոստովանին զանիկա, որոնք կը գիտակցին իրենց խեղճութեան եւ չեն քաշուիր հրապարակելու իրենց խեղճութիւնը: Մարդը որքան ալ մեծնայ դիրքով՝ կը մնայ փոքր, եւ որքան ալ փառքի տիրանայ՝ կը մնայ խեղճ, եթէ հեռու է Աստուծմէ:

9) «Հոգիով աղքատը ան է՝ որ կ'անդրադառնայ թէ ինք բոլորովին անգօր է, եւ ինքզինք պաշտպանելու անկարող: ... Այդպիսին գիտէ որ իր կեանքին իւրաքանչիւր պահը կախեալ է Աստուծոյ նախախնամութենէն, եւ անոր համար ալ, ան ամէն օր կ'աղաղակէ ըսելով. "Թէեւ ես աղքատ ու տնանկ եմ, սակայն Տէրը հոգ կը տանի ինձի" (Սղ 40.17)» (Հայր Իսահակ):

10) «Հոգիով աղքատը՝ խոնարհ անձն է: Տէրը խոնարհութիւնը կը դնէ իբրեւ հիմք, որուն վրայ կրնանք կառուցուիլ ապահովութեամբ: Եթէ խոնարհութիւնը վերցուի մարդէն, նոյնիսկ եթէ անիկա մինչեւ երկինքները բարձրանայ՝ փոյ կու գայ ամբողջովին եւ վտանգալից աւարտ կ'ունենայ: Այդպիսին կը կործանի, թէկուզ պահեցող, աղօթող, նուիրատու, առաքինի ու բարեգործ ըլլայ: Առանց խոնարհութեան, ինչ գեղեցիկ բան որ կայ մարդուն մէջ՝ փոյ կու գայ ու կը կորսուի» (Յովհան Ոսկեբերան):

11) «Հոգիով աղքատը հեզ է, կը վախնայ Աստուծոյ խօսքէն, կը խոստովանի իր մեղքերը, եւ չի խաբուիր իր արժանիքներով եւ արդարութեամբ: Հոգիով աղքատը ան է, որ կը փառաբանէ զԱստուած երբ բարի գործ մը կը կատարէ, եւ կը գագատի ինքնիրմէ՝ երբ վատ բան մը կ'ընէ: Հոգիով աղքատը ան է, որ միայն Աստուծոյ կը յուսայ, որովհետեւ միայն Աստուծոյ յուսակն է որ զինք յուսախաբ չ'ընէ: Հոգիով աղքատը ան է, որ կը հրաժարի իր բոլոր դրամէն եւ կը հետեւի Քրիստոսի: ... Եւ երբ ան կ'ազատի երկրային բոլոր բեռերէն՝ կը թոչի դէպի Աստուած, կարծէք թեւերով» (Օգոստինոս):

12) Տէրը երանի կու տայ հոգիով աղքատներուն, այլ խօսքով՝ երկրաւոր փառքէ փախչողներուն եւ Աստուծմէ եկած փառքը փնտոողներուն, Աստուծոյ ներկայութեան կարիքը զգացողներուն, խոնարհներուն, հեզներուն, իրենք զիրենք ոչնչութիւն նկատողներուն... «որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը»: Այո՛, երկինքի արքայութիւնը անոնց համար է՝ որոնք կը սիրեն Արքան, կը փնտոեն Արքան, կը պաշտեն Արքան: Երկինքը անոնց համար է՝ որոնք կապուած չեն երկրին ու երկրաւորին: Եւ երկինքը կամ երկինքի արքայութիւնը միայն գալիք իրականութիւն մը չէ, այլ նաեւ ներկայ իրականու-

թիւն մը: Առիթով մը երբ Յիսուս կը խօսէր Աստուծոյ թագաւորութեան գալուստին մասին, բացայայտեց թէ Աստուծոյ թագաւորութիւնը արտաքինապէս տեսանելի նշաններով պիտի չգայ, եւ աւելցուց ըսելով. «Ահա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր մէջ կը գտնուի» (Ղկ 17.20-21): Աստուծոյ թագաւորութիւնը որուն մասին Յիսուս այստեղ կը խօսի՝ ի՛ր իսկ անձն է: Ի՛նքն էր Աստուծոյ թագաւորութիւնը որ կը գտնուէր Հրեաներուն մէջ, որուն սակայն շանդրագարձան Հրեաները: Անոնք տեսանելի նշաններով գալիք թագաւորութեան մը կը սպասէին, Յիսուս սակայն այստեղ յայտնեց իրենց, թէ իր բերած թագաւորութիւնը առաջին հերթին ներքին թագաւորութիւն մըն է, այլ խօսքով՝ մարդու սրտին ու հոգիին մէջ իր տեղը գտնող թագաւորութիւն մըն է: Ծիշող է որ ժամանակներու աւարտին Աստուծոյ թագաւորութիւնը պիտի գայ հաստատուելու երկրի վրայ, եւ սակայն ներկայի՛ս ալ անհկա կու գայ, բայց այս անգամ հաստատուելու համար Արքան ընդունող մարդոց սիրտերուն մէջ: Ներկայ հանգրուանին Աստուծոյ թագաւորութիւնը իր սրտին մէջ ընդունող մարդը՝ ժամանակներու աւարտին պիտի ընդունուի Աստուծոյ թագաւորութեան ներս: Ահա այսպիսիներուն համար է Յիսուսի երանին:

«Երանի՛ սգաւորներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ մխիթարութիւն պիտի գտնեն» (Մտ 5.4):

Որո՞նք են հոս յիշուած սգաւորները.-

1) Ըստ Ներսէս Շնորհալի Հայրապետին, սգաւորները անոնք են՝ որոնք իրենց մեղքերուն համար կ'ողբան, ինչպէս նաեւ ուրիշներու մեղքերուն համար կը սգան ու կ'ողբան: Սգաւորները անմեղներն ու արդարներն են, որոնք միշտ սուգի մէջ են, սակայն ոչ թէ իրենց սեփական յանցանքներուն համար, այլ՝ մարդկային բնութեան խեղճութեան համար: Այսպիսի սգացողներ էին Եղիա եւ Յովհաննէս Մկրտիչ, որոնք սուգի զգեստներ կը հագնէին: Սգաւորները անոնք են՝ որոնք կը սգան ու կը տրտմին աստուածային այն փառքին ու բարիքներուն համար, որ մարդկութիւնը կորսնցուց իր անհնազանդութեան պատճառով:

2) Սգաւորը ան է՝ որ կը սգայ ու արցունք կը թափէ մեղքի մէջ կորսուած մարդոց փրկութեան համար: Ինչպէս երանելի է հոգիով աղքատը, նոյնպէս ալ երանելի է հոգիով սգաւորը: Եթէ հոգիով աղքատը՝ Աստուծոյ կարիքը զգացող մարդն է, ապա հոգիով սգաւորը ան է, որ կը սգայ անոնց համար՝ որոնք Աստուծոյ կարիքը չեն զգար, եւ որոնք կը գտնուին կորստեան ճամբուն մէջ:

3) Սգաւորը տառապող մարդն է. բայց խօսքը սովորական տառապանքի մասին չէ, այլ մարդոց փրկութեան համար սիրով յանձն առնուած տառապանքին մասին:

4) Սգաւորը ան է՝ որ ի տես աշխարհի մէջ գոյութիւն ունեցող անիրաւութեանց ու անարդարութեանց, կը սգայ ու կը ցաւի եւ հոգեպէս կը տանջուի: Այդպիսին էր Ղովտ, որ արդար մարդ մըն էր, եւ մարդոց «ամօրէն կենցաղին ականատես եւ ականջալուս ըլլալով՝ իր արդար հոգիին մէջ կը տանջուէր ամէն օր» (Բ.Պտ 2.8):

5) Սգացողը ան է՝ որ ցաւ կը կրէ երբ կը բամբասուի ու կը հալածուի. բայց ցաւ կը կրէ՝ ո՛չ թէ որովհետեւ կը բամբասուի, այլ՝ որովհետեւ բամբասանքը մե՛ղք է, եւ մեղքը կը ցաւցնէ Յիսուսը:

6) «Ինչպէս երբ անձրելը արտի վրայ թափի՝ արտը կը սկսի պտուղ տալ, եւ ատիկա հանգիստ եւ ուրախութիւն կը պարգեւէ մարդոց, այնպէս ալ, երբ արցունքները թափին արտի վրայ՝ սիրտը հոգեւոր պտուղներ կը բերէ, եւ ատիկա հանգիստ կը շնորհէ հոգիին ու մարմինին» (Մեծն Մակարիոս):

7) Յիշենք որ մեծ սգացող մըն էր Յիսուս իր երկրաւոր օրերուն: Մեղքն է որ կը տրտմեցնէ մարդու հոգին ու սուգի կը մատնէ զանիկա. Յիսուս մեղք չունէր. ան սակայն կը սգար մարդոց համար, անոնց ապրելակերպին ու կատարած գործերուն համար, Աստուծոյ հանդէպ անոնց անտարբերութեան համար, Աստուծոյ խօսքին հանդէպ անոնց անհաւատութեան համար, անոնց մտքի ու հոգիի կուրուսթեան համար: Կը տեսնենք թէ ինչպէս առիթով մը անիկա մեծապէս ցաւեցաւ մարդոց մտքի կուրուսթեան վրայ (Մր 3.5): Երկու անգամ Յիսուս լացաւ. առաջին անգամ լացաւ երբ լսեց Ղազարոսի թաղման մասին (Յճ 11.34-35), իսկ երկրորդ անգամ լացաւ Երուսաղէմի բնակիչներուն ցուցաբերած քարասրտութեան համար (Ղկ 19.41): Աւետարաններուն մէջ երբեք չենք կարդար թէ Յիսուս խնդաց, բայց իր լալուն, տրտմելուն, ցաւելուն ու խռովելուն մասին բազմաթիւ անգամներ կը կարդանք: Մեծ սգացող ու սրտի անհատնում ցաւ ապրող մըն էր Պօղոս առաքեալ իր ազգակիցներուն համար (Հռ 9.2-3, տե՛ս նաեւ Բ.Կր 2.4): Այսօր մեր ազգը եւս մեծ սգացողներու կարիքը ունի: Պէտք է սգանք ու ողբանք այն վիճակին համար որուն հասան մեր ազգն ու հայրենիքը:

8) Աշխարհիկ որոշ երեւոյթներ կրնան իրենց գրաւչութիւնն ու քաղցրութիւնը ունենալ, յատկապէս անոնց համար՝ որոնք տակաւին չեն դարձած Աստուծոյ, չեն ճաշակած Քրիստոսի սէրը, եւ չեն ապրած Սուրբ Հոգիին հպումը. բայց Աստուծոյ դառնալէ, Քրիստոսի սէրը ճաշակելէ եւ Սուրբ Հոգիին հպումը ապրելէ ետք՝ աշխարհի քաղցրութիւնը դառնութիւն կը տեսնենք այլեւս, գեղեցկութիւնը՝ տգեղութիւն, եւ գրաւիչ բաները՝ զզուելի բաներ: Մարդ եթէ կ'ուզէ փրկուիլ, պէտք է յանձն առնէ սուգն ու ցաւը, պէտք է ինքզինք սեղմումներու ենթարկէ, այլ խօսքով՝ պէտք է իր սիրած բաներէն ինքզինք զրկելու ցաւը յանձն առնէ: Ըստ Օգոստինոսի, «սուգը՝ ցաւիլն է այն բաներուն համար զորս կը սիրէինք եւ կորսնցուցինք»: Օգոստինոսի խօսքը ան-


շուշտ կամաւոր սուգի մասին է. այնպիսի սուգի մը մասին՝ որ ուրախութիւն կը բերէ մեր հոգիին: Մեր սիրած բաներէն կամաւորապէս հրաժարիլը՝ մնայուն է, իսկ անոնց համար սգալը ու ցաւիլը՝ ժամանակաւոր: Աստուծոյ դառնալէ ետք՝ այդ ցաւը ուրախութեան կը փոխուի, որովհետեւ կ'անդրադառնանք աշխարհիկ բաներու ոչնչութեան: Օգոստինոս դիտել կու տայ, թէ «անոնք որոնք կը դառնան Աստուծոյ՝ կը կորսնցնեն այն բաները զորս այս աշխարհին մէջ ձեռք ձգած էին որպէս արժեքաւոր իրեր. անոնք այլեւ չեն ուրախանար այն բաներով՝ որոնցմով նախապէս կ'ուրախանային. եւ ինչո՞ւ. որովհետեւ յաւերժական բաներու սէրը տեղ կը գտնէ իրենց մէջ: Եւ Սուրբ Հոգին, որ կը կոչուի "Պարափէթոս", այսինքն՝ Մխիթարիչը, ի՛նք կը մխիթարէ զիրենք»:

9) Յովհան Ոսկեբերան կ'ըսէ, թէ Տիրոջ խօսքը աշխարհիկ բաներու համար սգացողներուն մասին չէ, այլ միայն անոնց մասին՝ որոնք կը սգան մեղքին համար: Աշխարհիկ ցաւը, այլ խօսքով՝ աշխարհիկ բաներու համար ցաւիլը մեզ մահուան կ'առաջնորդէ, մինչդեռ Աստուծմէ եկած ցաւը՝ մեզ կ'առաջնորդէ ապաշխարութեան, եւ ապա՝ փրկութեան (Բ.Կր 7.10):

10) «Որովհետեւ անոնք Աստուծմէ մխիթարութիւն պիտի գտնեն»: Գործուած մեղքերուն համար սգացողը պիտի մխիթարուի, երբ տեսնէ մեղքին վերջնական պարտութիւնը դատաստանի օրը: Անարդարութեանց համար սգացողը պիտի մխիթարուի, երբ ականատես ըլլայ Աստուծոյ արդարութեան երկրի վրայ հաստատման: Մարդոց փրկութեան համար արցունք թափող ու սգացողը պիտի մխիթարուի, երբ դատաստանի օրը տեսնէ թէ որքա՛ն մարդիկ փրկուած են իր թափած արցունքներուն պատճառով: Աշխարհէն իր ստացած վէրքերուն համար սգացողը պիտի մխիթարուի, երբ դատաստանի օրը վերջնականապէս բուժուի Աստուծոյ Գառնուկին վէրքերով: Մեզ մխիթարողը պիտի ըլլայ Սուրբ Հոգին, իսկ մեր մխիթարութիւնը՝ Քրիստոս ինք: Քրիստոս ինքզինքով մեզ պիտի մխիթարէ, իր սիրով ու քաղցրութեամբ մեզ պիտի մխիթարէ:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 13)



ՔԱՐՈՋԱԽՕՍԱԿԱՆ

ՅՈՅՍՈՎ՝ ՅՈՅՍԻՆ ԼԱՅԻԼ

«Փա՛նֆ Քեզ Աստուած փա՛նֆ Քեզ,
յաղագս ամենայնի Տէր, փա՛նֆ Քեզ»:

Որպէս մարդ, եթէ մեր կեանքը, ուրախ, շէն եւ զուարթ է, պէտք է նոյն հաւատքով շարունակենք նայիլ կեանքին, որովհետեւ եթէ բարիով նայինք կեանքին՝ բարին կ'ըլլայ մեր բաժինը: Եթէ որպէս մարդ, մեր կեանքը լեցուն է, մահերով, հիւանդութիւններով, ձախողութիւններով եւ այլ դժբախտութիւններով, պէտք է գիտնանք, որ միայն մենք չենք դժբախտ կացութեանց տէրը: Մեզմէ աւելի ցաւալից սրտեր կան, անբուժելիներ, անայցելուներ, սովածներ եւ անտունիներ:

Սակայն, ինչ ալ ըլլան կեանքէն մեզի բաժին ինկածները, պէտք է զանոնք ընդունինք գոհունակութեամբ՝ մեր աչքերը սեւեռած Գերագոյն Յոյսին՝ Աստուծոյ, որովհետեւ, ամէն բան կարելի է վերականգնել յոյսով, անոր համար ալ երանելի Յոբ կ'ըսէ. - «Եթէ ծառը կտրուի, դեռ յոյս կայ, որ վերստին ծի ու մատաղատունկը պակաս չըլլայ»: (14.7):

Յաճախ, որպէս մարդ կը տրտնջանք, կը կարծենք որ միայն մե՛նք ենք՝ որ գործ չունինք, միայն մե՛նք ենք՝ որ մեր տուներուն մէջ հիւանդներ ունինք, միայն մե՛նք ենք՝ որ մեր տուներուն մէջ մահ ունինք: Եթէ գործ չունինք, նուազագոյնը պէտք է գիտնանք, որ ուրիշներ անօթի են, հաց ու ջուր չունին: Եթէ մեր տուներուն մէջ հիւանդներ կան, նուազագոյնը պէտք է հասկնանք, որ ուրիշ հիւանդներ՝ խնամք իսկ չունին: Եթէ մահ ունինք, նուազագոյնը պէտք է ըմբռնենք, որ միսթարութեան համար գերեզման մը ունինք, որուն այցելութեան երթալով կրնանք նուազագոյնը միսթարուիլ: Կրնա՞նք հասկնալ որ շարին չարագոյնը կայ, վատին վատագոյնը, ցաւին աւելի խորը: Նայինք մեր չորս կողմը: Ինչո՞ւ այսքան փլած ենք հոգով եւ բնականաբար նաեւ մարմնով: Որովհետեւ ՅՈՅՍ չունինք:

Եթէ մեր հոգիներուն հանգստութիւնը Աստուծմէ չսպասենք, պիտի չկարենանք փրկուիլ: Եթէ Աստուծոյ շլիստահինք, որպէս փրկութիւն, ապաստան եւ ապաւէն, անպայման պիտի սասանինք: Անոր համար ալ, Դաւիթ մարգարէն, իր կեանքի բոլոր օրերուն կրցաւ հաստատել այնպիսի ճշմարտութիւն մը, որ

այսօր մեզմէ շատեր կը մերժեն, որովհետեւ կը կարծեն, որ իրենց ապրած բարօր կեանքին տէրը իրենք են եւ այդպէս ալ պիտի մնան. սակայն այսպէս կ'ըսէ հարուստ, ուժեղ եւ իմաստուն թագաւորը.- «Միայն Աստուծո՞ւմ էս հանգիստ կը գտնեմ, ա՛ն է որ յոյս կու տայ ինձի: Միայն ա՛ն է ապաստանս եւ փրկութիւնս, ա՛ն է իմ ապաւէնս, եւ ես պիտի շասսանիմ: Աստուծմէ կախում ունին փրկութիւնս եւ փառս. ա՛ն է ամուր միջնաբերդս» (Սղ 62.5-7):

Աստուածապարգեւ մեր կեանքը իմաստաւորելու համար պէտք է յոյսի ճրագը միշտ վառ պահենք մեր հոգիներուն մէջ, որովհետեւ առանց յոյսի պիտի նմանինք անբան անասունին, որ օրն ի բուն կ'ապրի, աննպատակ եւ առանց տեսլականի: Եթէ կը տառապինք, պատճառը մե՛նք ենք. որովհետեւ կը մերժենք Աստուծոյ յստակ յայտնութիւնը Աստուածաշունչի միջոցաւ (Սղ 19.1, Հո 1.19-20): Եթէ անմխիթար ենք, պատճառը մե՛նք ենք, որովհետեւ մեր խղճին ձայնը չենք լսեր (Հո 2.14-16): Եթէ անիրաւուած ենք, պատճառը մե՛նք ենք, որովհետեւ աշխարհը աւելի կը սիրենք, քան՝ զԱստուած (Ա.Յհ 2.15-17): Եթէ լքուած ենք, պատճառը մե՛նք ենք, որովհետեւ մեղքին գերին դարձած ենք (Յհ 8.34, Հո 7.14): Եթէ որբացած ու առանձնացած ենք, դարձեա՛լ պատճառը մե՛նք ենք, որովհետեւ հեռացած ենք Աստուծմէ եւ Անոր խոստումներէն (Եփ 2.12): Այլ խօսքով, մե՛նք ենք մեր անձերուն կորստեան պատճառը, որովհետեւ աստուածատուր յոյսը չունինք:

Երկու հազար եւ աւելի տարիներ առաջ, Յիսուսի ծնունդով եւ Աստուծոյ մարդեղութեամբ անյոյս մարդուն առջեւ բացուեցաւ նոր դուռ մը, յոյսի դուռը: Այսօր մենք պէ՛տք է ապրինք յաւիտենական կեանքը շահելու համար եւ յոյսն է մեր փրկութիւնը: Առանց այդ յոյսին չենք կրնար Աստուածային շնորհքին թարգմանը հանդիսանալ այս աշխարհի վրայ: Այսօր ալ, յուսաբեկ սրտով կը նայինք անցեալին, որովհետեւ որբացած ենք, անյոյս եւ աննպատակ անապատի մէջ ըլլալու հոգեբանութիւնը կ'ապրինք ամէն օր, ամէն ժամ ու ամէն վայրկեան: Ամէնքս կը տառապինք, մարդկութիւնը կը տառապի, որովհետեւ չարը ամէն օր կը յարձակի մեր եւ մեր զաւակներուն վրայ, չար մարդիկ կ'ուզեն կլանել մեզ: Այս կացութեան մէջ ապրողներու համար Դաւիթ մարգարէն կ'ըսէ.- «Երանի՛ այն մարդուն, որ Տիրոջ կը վստահի եւ չի կոթնիր սուտ աստուածներուն, ո՛չ ալ անոնց՝ որոնք ստութեան կը հետեւին» (Սղ 40.4):

Այս դժուար օրերուն, յոյսով նայինք Աստուծոյ:

Այս տաժանելի օրերուն, յոյսով նորոգուինք:

Այս դժնդակ օրերուն վերագտնենք մեր կորսնցուցած յոյսը եւ այդ յոյսով նայինք իրարու, որպէսզի Աստուծոյ հոգին բնակի մեր մէջ, նորոգելով մեզ, դառնալու համար Նոր Մարդ:

Այս խրթին օրերուն, յոյսով նայինք Աստուծոյ, որպէսզի յաւիտենականութեան եւ ճշմարտութեան, շնորհքի եւ փառքի, կեանքի եւ մխիթարութեան,

իմաստութեան եւ յայտնութեան, որդեգրութեան եւ սրբութեան, խոստումի եւ հաւատքի հոգին բնակի մեր մէջ:

Այս յուսալից օրերուն, Գերագոյն Յոյսին նայինք, որպէսզի յոյսով ապրինք, հաւատալով որ ամօթով պիտի շնանք (Սղ 22.4-5, 31.1):

Եթէ Աստուծոյ չվստահինք ու չուսանք, չենք կրնար ուտել այն հացէն, որ Ինք կ'ուզէ որ, եւ ոչ ալ խմել այն ջուրէն՝ որ Ինք կը խմէ: Անոր համար ալ Պօղոս Առաքեալ կ'ըսէ.- «Հերկողը յոյս պէտք է ունենայ՝ որ հերկէ, եւ ցոռնը կամնողը անկէ վայելելու յոյսը պէտք է ունենայ՝ որ կամնէ» (Ա.Կր 9.10):

Հետեւաբար յոյսի եւ յոյսի որդիներ,

Մեր կեանքի բոլոր հանգրուաններուն չկորսնցնենք մեր յոյսը, որովհետեւ յոյսը հոգեւոր զէնք է:

Որովհետեւ յոյսը մեզի ուրախութիւնը կու տայ նոյնիսկ նեղութեան մէջ. «Ուրախ եղէ՛ք յոյսին մէջ, համբերող՝ նեղութեան մէջ» (Հռ 12.12):

Որովհետեւ յոյսը կ'ամրապնդուի, կը զօրանայ եւ կ'աճի հաւատքի եւ սիրոյ մէջ:

Ուրեմն, յոյսով նայինք յոյս ներշնչողին, որպէսզի Աստուծոյ յուսալից շունչը ըլլայ մեր վրայ, մեր ընտանիքներուն, զաւակներուն, թոռներուն, ազգականներուն, բարեկամներուն եւ բոլորին վրայ ու բոլորին առջեւ բանայ յաւիտենական կեանքի յոյսի դռները, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԶԱԻԷՆ ՎՐԴ. ՆԱՃԱՐԵԱՆ



«ԽԱՉՆ ԿԵՆԱՐԱՐ, ՈՐ ԵՂԵՒ ՍԵՉ ՓՐԿՈՒԹԻՒՆ...»

Խաչվերացը Հայ եկեղեցւոյ հինգերորդ տաղաւարն է, այսինքն հինգերորդ գլխաւոր տօնը եւ նուիրուած՝ խաչին: Ինչպէս միւս տաղաւարները, Խաչվերացն ալ ունի պատմական հիմք: Իր պատմական սկզբնաւորութիւնը կը հասնի մինչեւ Քրիստոնէութեան ակունքները, որովհետեւ խաչը վերցնելու կամ բարձրացնելու եւ փառաւորելու առաջին գործողութիւնը կը վերագրուի Յակոբոս Տեառնեղբօր: Ան եղած է Երուսաղէմի առաջին եպիսկոպոսը եւ խաչը ի տես ժողովուրդի բարձրացնելով՝ «Խաչի քո, Քրիստոս, երկրպագեմք...» օրհնութիւնը եւ աղօթքը ըսած է:

614 թուականին, պարսկական-բիւզանդական պատերազմի ժամանակ, պարսիկներու խոսքով Բ. թագաւորը գրաւած է Երուսաղէմը՝ գրեթէ հիմնովին քանդելով քաղաքը: Շատ մը հոգեւոր արժէքներու կարգին, Քրիստոսի խաչափայտն ալ իբրեւ աւար տարուած է Պարսկաստան: Իսկ 628 թուականին, Բիւզանդացի Հերակլ կայսրը (610-641), պարսիկներուն յաղթելով՝ գրաւած է Տիգրբոնը, վերադարձուցած՝ խաչափայտը եւ նոյն թուականի 14 Սեպտեմբերին, փառաւոր հանդէսով զետեղած է իր աւանդական տեղը՝ Երուսաղէմի Ս. Յարութիւն տաճարին մէջ: Ուստի, կայսրը եւ եկեղեցական հայրեր 14 Սեպտեմբերը հռչակած են Քրիստոսի խաչափայտի վերադարձին կամ խաչվերացի տօն: Հայ եկեղեցին խաչվերացի տօնը կը կատարէ 14 Սեպտեմբերի մօտակայ Կիրակի օրը, որ է 11-17 Սեպտեմբերին հանդիպող Կիրակին:

Խաչը դարձաւ Քրիստոսը ներկայացնող հիմնական եւ սրբազան առարկան:

Ս. Խաչը վերացաւ, որպէսզի ցոյց տայ, որ Քրիստոս է աշխարհի փրկիչը: Լուսաճրագ խաչը վեր բարձրացաւ աշխարհի մէջ, որպէսզի ցոյց տրուի, որ Քրիստոնէութիւնը ճշմարիտ կրօն է: Լուսաշող Ս. Խաչը դարձաւ մարդոց փրկութեան միակ ճամբան: Այո՛, Ս. Խաչը դարձաւ հոգեւոր արթնութեան, հոգեւոր գիտակցութեան, Քրիստոսի դառնալու եւ Քրիստոսը ուրիշին տանելու՝ քարոզելու եւ անոր մասին վկայելու ամենագօրեղ եւ ազդու միջոցը:

Քրիստոսի Ս. Խաչը իր նախանշանը ունէր Հին Կտակարանին մէջ, երբ անապատին մէջ Աստուծոյ թելադրութեամբ Մովսէս պղնձեայ օձը ձողի մը վրայ բարձրացուց (Թւ 21.19): Նոյնպէս ալ, Մարդու Որդին այս անգամ Գողգոթայի լեռան վրայ բարձրացաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ (Յհ 3:14-16). որովհետեւ Քրիստոս խաչի նշանով յաղթանակի դրօշը պարզեց:

Խաչը խորհրդանիշն է խոնարհութեան՝ ճշմարտութեան հասնելու համար: Իսրայէլացիները, երբ պատերազմեցան Ամաղեկացիներուն դէմ, Մովսէս՝ բլուրին գլուխը կանգնած, ձեռքերը վեր բարձրացուցած կ'աղօթէր: Այնքան ատեն որ Մովսէս ձեռքերը վեր կը պահէր, Իսրայէլացիները կը յաղթէին, իսկ երբ վար կ'իջեցնէր, Ամաղեկացիները կը յաղթէին (Թւ 13:30): Նոյնպէս մեր Տէրը՝ Յիսուս, խաչ բարձրացաւ եւ իր ձեռքերը լայն տարածեց խաչին վրայ՝ ի նշան յաղթութեան: Եւ որովհետեւ Քրիստոս խաչը ընտրեց ու գրկեց եւ իր արիւնը հեղեց անոր վրայ, անոր հետ միաւորուած մեզի փրկութիւն, յաղթանակ եւ կեանք պարգեւեց: Քրիստոսի խաչելութեամբ խաչը նոր իմաստ ստացաւ: Այն ժամանակ Պաղեստինը կը գտնուէր Հռոմէական տիրապետութեան տակ եւ անոնց օրէնքներուն համաձայն, ծանր յանցագործներն ու ոճրագործները միայն խաչի քստմնելի, ամօթալի եւ տաժանելի մահուամբ կը պատժուէին: Սակայն Քրիստոսի խաչելութեամբ, խաչը, որ անարգանքի, արհամարհանքի, ամօթի ու տառապանքի նշան էր, փառքի, պատիւի, յաղթու-

թեան ու անմահական կեանքի նշանի վերածուեցաւ: Խաչը դարձաւ նոր կեանքի նշան, թշնամիին դէմ պաշտպանուելու վահան եւ սատանային զօրութիւնները խորտակելու գէնք: Խաչը՝ որպէս կենդանի զոհասեղան, Քրիստոսով դարձաւ շնորհներ բաշխելու խորան:

Քրիստոս խաչի միջոցով մարդուն պարգեւեց նոր կեանք, զայն ազատեց մեղքերու ճիրաններէն, եւ այդ մեղքերը իր վրայ առնելով՝ բարձրացաւ Գողգոթա, եւ խաչի զօրութեամբ խլեց սատանային ոյժը եւ մարդը ազատեց:

Խաչը դարձաւ նաեւ խոնարհութեան, սատանային գլուխը ջախջախելու հօգի խորհրդանիշ՝ համաձայն Պօղոս առաքեալի վկայութեան, թէ Քրիստոս ինքզինք խոնարհեցուց եւ Աստուծոյ հնազանդեցաւ՝ յանձն առնելով մահը, եւ այն ալ՝ խաչի մահը (տես՝ Փլպ 2:6-11, հմմտ Կղ 2:14-15): Մարդու փրկութիւնը Աստուծոյ ծրագիրն էր, որ դարեր առաջ մարգարէացած էր Հին Կտակարանին մէջ, նոյնիսկ՝ ստեղծագործութեան առաջին իսկ հանգրուանին: Աստուծոյ ծրագիրն էր, որ Մարդու Որդին աշխարհ պիտի գար, պիտի ձերբակալուէր, ազգակիցներուն կողմէ մահուան դատապարտուէր, անարգուէր, չարչարուէր, խաչուէր, թաղուէր եւ երրորդ օրը յարութիւն առնէր եւ երկինք համբառնար: Քրիստոսի խաչելութեամբ իրականացաւ աստուածային փրկագործութեան ծրագիրը:

Գրիգոր Տաթեւացիի Ս. Խաչին մասին տուած մեկնութիւններէն մէկուն համաձայն, խաչի շորս թեւերը մեզի ցոյց կու տան՝ երկինքի արքայութեան բացուիլը, դժոխքի աւերումը, աստուածային շնորհներու բաշխումը եւ մեղքերու թողութիւնը:

Այսօր բոլորս՝ իբրեւ հաւատացեալներ, կը գտնուինք Գողգոթայի ճամբուն վրայ: Ուստի, երբեք չվարանինք, բնա՛ւ չլուսալքուինք, շտկարանանք ու չվախնանք, այլ միշտ Քրիստոսի խաչը հաստատուն բռնած մեր միտքի, սիրտի ու հոգիի պատուանդանին վրայ եւ զայն ամուր բռնած մեր ձեռքերուն մէջ, ընթանանք դէպի յառաջ՝ բարձր կանչելով անոր սուրբ անունը, որովհետեւ Քրիստոսի կատարածը գերագոյն եւ կատարեալ զոհողութիւնն էր, որ կատարուեցաւ մարդկային պատմութեան մէջ, նոյնինքն մարդուն համար. Աստուծոյ անմեղ Գառնուկը պատարագուեցաւ մեղաւոր եւ մահուան դատապարտուած մարդուն համար: Ահա թէ ինչո՛ւ մենք եւս խաչը գրկած՝ հաւատքով քալենք ու բարձրանանք Գողգոթա, որպէսզի Խաչեալին փարած՝ խաչին զօրութեամբ յաղթենք մեր կեանքի մէջ տիրող դժուարութիւններուն եւ անկէ ճառագայթող յաղթական լոյսի ներքեւ անսայթաք քալենք ճամբէն եւ իրմով զօրացած՝ շնչենք, գործենք ու պայքարինք:

ԱՐՄԷՆ ԱԲՂ. ԳԱԼԱՅՃԵԱՆ

ՓԱՂՔ ՍՈՒՐԲ ԽԱԶԻԴ, ԱԼԵԼՈՒԻԱ

«Ս. Խաչը ոչ միայն Յիսուսի խաչելության գործիքն է, այլ նաև խորհրդանշանը ամբողջ Քրիստոնեության, Քրիստոսի ֆարոգած բոլոր վսեմ սկզբունքներուն եւ աստուածային նշանաբաններուն: Անիկա ոչ միայն մեր փրկության մեծագույն զէնքն է, այլ նաև Սիմպոլը ֆառեակ առաքինություններու¹»:

Հայ Առաքելական Ս. Եկեղեցին մեր Տիրոջ ու Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի կենարար եւ փրկական Ս. Խաչին նուիրած է չորս տօներ, որոնք տարածուած են տարուան տարբեր օրերուն մէջ՝ հաւատացեալներուն ուշադրութիւնը խաչէն բխող պատգամին ու լոյսին վրայ կեդրոնացնելու նպատակով: Խաչին վերագրուած այս չորս տօները մեր եկեղեցւոյ մէջ կը նշուին մեծ շուքով ու հանդիսութեամբ: Գեղեցիկ զուգադիպութեամբ 2024 տարուան Սեպտեմբեր ամսուան հինգ կիրակիներէն երկուքը (Սեպտեմբեր 15 եւ 29) նուիրուած էին Խաչին առնչուած երկու տօներուն.- ա) Տօն Վերացման սրբոյ Խաչին կամ Խաչվերաց², որ նաև Հայ եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներէն մէկն է³ եւ բ) Տօն Վարագայ սրբոյ Խաչին⁴, որ զուտ հայկական բնոյթ եւ անուն ունի: Խաչին վերագրուած այս երկու տօներուն նշումը, առիթ հանդիսացաւ, որ հաւատացեալներ աւելիով լսեն Ս. Խաչի խորհուրդին մասին, վերաթարմացնեն իրենց տեղեկութիւնները, հոգեկան կապուածութիւն մը ստեղծեն Խաչին հետ եւ անկէ բխող պատգամներն ու խորհուրդները իրագործեն իրենց կեանքին մէջ:

Խաչվերացի տօնին հիմնական պատգամը պահուած է նոյնինքն տօնին անուան մէջ: Խաչվերաց բառը կը նշանակէ «Խաչը բարձրացնել հպարտու-

¹ Մանուկեան Սիոն Եպիսկոպոս, Աւետարանի Պատգամներ, էջ 91:

² Խաչի Վերացման տօնը Հայ եկեղեցւոյ մէջ կը նշուի Սեպտեմբեր 14-ի մերձաւոր Կիրակին (Սեպտեմբեր 11-17):

³ Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ տաղաւար տօներն են. ա) Ս. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն, բ) Ս. Յարութիւն կամ Ս. Զատիկ, գ) Պայծառակերպութիւն, Այլակերպութիւն կամ Վարդավառ, դ) Աստուածածնի Վերափոխում եւ ե) Խաչվերաց:

⁴ Վարագայ Ս. Խաչի տօնը Հայ եկեղեցւոյ մէջ կը նշուի Սեպտեմբեր 28-ի մերձաւոր Կիրակին (Սեպտեմբեր 25- Հոկտեմբեր 1):

թեամբ եւ յաղթականօրէն, զայն միշտ բարձր պահել, ցուցադրել եւ փառաւորել»⁵։ Այսօր ժամանակը փոխուած է։ Խաչվերացի հրաշափառ դէպքի ժամանակամիջոցին, Խաչը նիւթապէս կ'երեւէր մարդոց եւ կը բարձրացուէր անոնց աչքերուն առջեւ։ Սակայն այսօր Խաչը նիւթապէս չ'երեւիր մարդոց եւ ոչ ալ կը բարձրանայ անոնց աչքերուն առջեւ, որովհետեւ 21-րդ դարուն Խաչի երեւման եւ բարձրացման վայրը փոխուած է։ Անիկա նիւթական վայր մը չէ, ինչպէս՝ լեռ, բլուր, հող, գետին, եւայլն, այլ՝ հոգեւոր վայր մը։ Այդ հոգեւոր վայրերը հաւատացեալ մարդուն սիրտը, հոգին եւ միտքն են։ Այսօր մարդիկ Խաչին, Խաչեալին եւ Քրիստոնէութեան մասին իմանալու համար, ո՛չ եկեղեցի պիտի գան, ո՛չ Աստուածաշունչ Մատեանը պիտի ընթերցեն, ո՛չ հոգեւոր գրականութիւն պիտի կարդան եւ ոչ ալ երկար-բարակ ուսումնասիրութիւններ պիտի կատարեն. ժամանակ պիտի չտրամադրեն, այլ հաւատացեալին պիտի նային։ Այդ իսկ պատճառով, հաւատացեալ մարդը պարտականութիւն ունի Խաչը միշտ բարձր պահելու իր կեանքին մէջ. իր ապրելակերպով, մտածելակերպով, գործերով եւ խօսքերով, նոյնիսկ իր շարժումներով ու նիստ ու կացով, որպէսզի մարդիկ հաւատացեալին նայելով Խաչին, Խաչեալին եւ Քրիստոնէութեան մասին ճշմարիտ եւ հարազատ պատկեր մը կազմեն։ Խաչը կոչուած է Քրիստոսի Ս. նշանը, ուստի Խաչը բարձր պահել կը նշանակէ զՔրիստոս բարձրացնել։ Խաչը քրիստոնէական կրօնին խորհրդանիշն է, ուստի Խաչը բարձր պահել կը նշանակէ Քրիստոնէութիւնը բարձրացնել։ Խաչը մեր փրկութեան գործիքն է, ուստի Խաչը բարձր պահել կը նշանակէ մեր փրկութեան աւետիսը տարածել։ Խաչը Քրիստոսի զոհողութեան գերագոյն արտայայտութիւնն է, ուստի Խաչը բարձր պահել կը նշանակէ արժեւորել եւ յարգել Քրիստոսի կատարած անսահման զոհողութիւնը։

Խաչվերաց բառը նաեւ կը նշանակէ խաչը կրել։ Մեր բոլորին Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Ան որ իր խաչը չ'առնէր եւ ինձի չի հետեւիր, արժանի չէ ինձի» (Մտ 10.38)։ «Խաչը առնել» կը նշանակէ խաչը շալկել, կրել։ Ուրեմն, հաւատացեալ մարդը խաչակրութեան առաքելութիւնը ունի։ Աստուած իւրաքանչիւր հաւատացեալի տարբեր խաչ մը տուած է, որպէսզի զայն կրէ իր կեանքին մէջ։ Այս իմաստով, գոյութիւն ունի խաչակրութեան հետ կապուած հետաքրքրական հոգեւոր պատմութիւն մը։ Կը պատմուի, թէ վանական մը ամէն օր իր աղօթքին մէջ կը խնդրէր, որ Աստուած իրմէ հեռացնէ այն խաչը, որ ինք կը կրէ։ Աստուած կը լսէ վանականին աղօթքը եւ իր մօտ կ'ուղարկէ իր հրեշտակներէն մէկը։ Հրեշտակը վանականին կ'ըսէ. «Աստուած

⁵ Պետրոսեան Կարօ, Հայաստանեայց Եկեղեցւոյ Տօներ եւ Ազգային Աւանդութիւններ, էջ 284։

լսեց աղօթքդ: Եկո՛ւր, որպէսզի քու խաչդ փոխանակես ուրիշ խաչով մը»: Հրեշտակը վանականը կը տանի սենեակ մը, ուր կը գտնուէին բազմազան ու բազմապիսի խաչեր. կային ոսկեայ խաչեր, արծաթեայ խաչեր, մետաղէ շինուած խաչեր եւ տախտակէ շինուած խաչեր: Վանականը փնտռտուքի կը լծուի: Ժամեր ետք, ան կը գտնէ այդ սենեակին ամենափոքր խաչը եւ հրեշտակին մօտենալով կ'ըսէ.- «Այս խաչը կ'ուզեմ կրել»: Հրեշտակը կը սկսի ծիծաղիլ: Վանականը զարմանքով կը հարցնէ հրեշտակին, թէ ինչո՞ւ կը ծիծաղի: Հրեշտակը կը պատասխանէ.- «Ասիկա այն խաչն է, որ դուն ուզեցիր փոխել»:

Հաւատացեալ մարդը կոչուած է իր խաչը կրելու ո՛չ թէ դժգոհութեամբ, տրտունջքով եւ ցուցամոլութեամբ, այլ՝ սիրով, զոհողութեամբ եւ հնազանդութեամբ, որովհետեւ Աստուած մարդուս իր կարողութենէն աւելին չի տար: Աստուած իւրաքանչիւրիս տուած է այնպիսի՝ խաչ մը, որուն կրելը երբեմն մեր պատկերացումէն շատ աւելի դիւրին է: Զայն կրելու համար մեզմէ ընդամէնը փոքր ճիգ մը կ'ակնկալուի: Խաչը նաեւ պէտք է կրել պարծանքով ու հպարտութեամբ: Սովորաբար, մարդիկ կը պարծենան իրենց ֆիզիքական ոյժով, մարմնական գեղեցկութեամբ, ուսման մակարդակով, հարստութեամբ, գիտութեամբ եւ մեքենական յառաջդիմութիւններով: Սակայն երբ կարգը խաչակրութեամբ պարծենալուն հասնի, ամօթ կը զգան խաչէն, կ'ուրանան զայն՝ վախնալով մարդոց հեզնական եւ զաւեշտական արտայայտութիւններէն: Այս առումով, Պօղոս առաքեալ կ'ըսէ.- «Քա՛ւ լիցի որ մեք Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ աշխարհը մեռած է այլեւ ինծի համար, ինչպէս եւ մեռած եմ աշխարհին համար» (Գղ 6, 14): Խաչը նաեւ պէտք է կրել առանց զանգատի: Սովորաբար, մարդիկ խոյս կու տան ցաւէն ու տառապանքէն, խաչակրութենէն կը փախչին ու հաճոյքի եւ երջանկութեան ետեւէն կը վազեն: Խաչակրութիւնը դժուար է անոնց համար, որոնք Քրիստոսը չունին իրենց կեանքին մէջ, սակայն դիւրին է անոնց համար, որոնք Քրիստոսը ունին, կ'ապրին խաչեալին հետ ու խաչեալին համար: Քրիստոս ի՛նք սորվեցուց մարդկութեան, թէ խաչի տառապանքին մէջ է յաղթութիւնն ու երջանկութիւնը, եւ առանց խաչի եւ Գողգոթայի այցելութեան չկա՛յ յարութեան լուսաւոր յաղթանակ: «Ես ընդունեցայ, քու ձեռքդ խաչը, եւ պիտի կրեմ զայն, այո՛, եւ պիտի կրեմ զայն մինչեւ մահ, ինչպէս որ դուն ուզեցիր»⁶:

Վարագայ խաչին տօնը զուտ հայկական տօն մըն է: Անիկա Բարձրեալին կողմէ Հայ ազգին տրուած պարգեւ մըն է: Այս տօնը առիթ մըն է երթալու

⁶ Գեւրգի Թովմաս, Նմանութիւն Յիսուս Քրիստոսի, Թարգմանեց՝ Հ. Մեսրոպ Վրդ. Ճուրեան, էջ 263:

դէպի Հայոց Պատմութեան լուսաւոր էջերը, յիշելու թէ քրիստոնեայ ազգերէն ո՛չ մէկը այնքան կապուած է հաշին, որքան Հայ ժողովուրդը, հասկնալու թէ Հայ ազգը դարեր շարունակ իր կեանքը նոյնացուցած է հաշի խորհուրդին հետ, որովհետեւ Հայութեան կեանքը իրական խաչելութիւն մըն է եղած, իմանալու որ Հայը իր տառապանքի բոլոր օրերուն միշտ խաչով է ներշնչուած, զայն լուսաւոր ջահի մը պէս իր առջեւէն է տարած, անով ինքզինքն է պաշտպանած՝ զայն ընդունելով իբրեւ լուսաւոր փարոս, անպարտելի վահան եւ «յաղթութեան զէն ընդդէմ թշնամոյն»։ Հայը միշտ հաշին դիմած է իր կեանքի նաւուն ալեկոծ օրերուն, խաղաղ նաւահանգիստ գտնելով անոր լուսաճաճանչ թեւերուն ներքեւ։ Ուրիշ ազգեր, իրենց մորթը ազատելու եւ իրենց ֆիզիքական գոյութիւնը փրկելու համար ուրացած են իրենց հաւատքը, սակայն Հայը միշտ հաւատարիմ է մնացած Ս. հաշին՝ անոր մէջ գտնելով իր գոյութեան գաղտնիքը։ Այդ իսկ պատճառով, Հայ ազգը օտարներուն կողմէ ճանչցուած է իբրեւ խաչապաշտ եւ խաչակրօն ժողովուրդ⁷։

Առ ի եզրակացութիւն, ուրախանալ ու հպարտանալ մեր նախորդներու պատմութեամբ ու փառքով՝ շատ բնական է, բայց անով գինովնալը ընդունելի չէ։ Եթէ Հայ ժողովուրդը իր պատմութիւնը կերտած է հաշով, պէտք է շարունակէ այդ կերտման աշխատանքը։ Հայութիւնը հաշին մէջ պէտք է տեսնէ քաջութիւն, համբերութիւն եւ իմաստութիւն, անոր մէջ պէտք է գտնէ մխիթարութիւն եւ յոյս, սէր եւ լոյս, կեանք եւ անմահութիւն։ «Փա՛ո՛ւ Ս. հաշիդ, ալելուիա։ հաչեցեալիդ, ալելուիա»։

ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԷՀՃԵԱՆ



⁷ Մանուկեան Սիոն Եպիսկոպոս, Աւետարանի Պատգամներ, էջ 93:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

**«ԵԿԵՂԵՑԻՆ Ո՛Չ ՎԱՅՐ Է ԵՒ Ո՛Չ ԱԼ ԿԱՌՈՅՑ,
ԱՅԼ՝ ՅՈԳԵՒՈՐ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱԼ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ
ԿԵԼՍԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ»**

ԱՐԱՄ Ա., ԿԱԹՈՂԻԿՈՍ

Արամ Ա. Կաթողիկոս, Հիւս. Ամերիկայի Արեւելեան Հայոց Թեմին տալիք հովուապետական այցելութեան նախօրէին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան *Cilicia TV*-ին հետ ունեցաւ հետեւեալ հարցազրոյցը.-

Հարցում.- Վեհափառ Տէ՛ր, զանազան առիթներով հովուապետական այցելութիւն շնորհած էք Հիւս. Ամերիկայի Արեւելեան Հայոց Թեմին: Ի՞նչ է Ձեր այս հովուապետական այցելութեան հիմնական նպատակը:

Պատասխան.- Բնականաբար, հովուապետական այցելութեան նպատակը հովուապետ-ժողովուրդ հանդիպումն է: Հովուապետը առիթներ հարկ է ստեղծէ իր հոգեւոր խնամքին յանձնուած ժողովուրդին հետ ըլլալու, զայն մօտէն ճանչնալու, անոր կարիքներուն ու մտահոգութիւններուն տեղեակ դառնալու եւ վերաշէշտելու մեր հոգեւոր ու բարոյական արժէքներուն հրամայական անհրաժեշտութիւնը մեր ժողովուրդի կեանքին մէջ: Այս է եկեղեցոյ ու անոր ծառայութեան լծուած որեւէ մակարդակի վրայ գտնուող հոգեւոր սպասաւորի առաքելութեան նպատակը: Եկեղեցին ինքզինք կ'ըլլայ, իր կոչումը ճշմարտօրէն կ'իրագործէ ժողովուրդին հետ ու ժողովուրդին համար: Սա սովորական լոզումն է, այլ եկեղեցոյ առաքելութեան էութիւնը կը կազմէ: Այս գիտակցութեամբ հոգեւորականը պէտք է իր առաքելութիւնը իրագործէ: Կ'ուզենք նաեւ յայտնել, որ հովուապետական այցելութեան յիշեալ նպատակին առընթեր, անցնող այցելութիւններուն նաեւ շէշտած ենք մեր եկեղեցոյ, Հայրենիքին, Ազգին ու Սփիւռքին առնչուած որոշ երեւոյթներ ու մտահոգութիւններ: Զմոռնանք, որ եկեղեցին ո՛չ վայր է եւ ո՛չ ալ կառոյց, այլ հոգեւոր ու բարոյական արժէքներու կենսագործման առաքելութիւն է: Մեր եկեղեցին սոսկ հոգեւոր կառոյց չէ՛ լոկ հոգեւոր առաքելութեամբ. ան սերտօրէն շաղախուած է մեր ժողովուրդի կեանքին հետ: Հետեաբար, մեր ժողովուրդը ու Հայրենիքը յուզող հարցերը նաեւ եկեղեցոյ առաքելութեան մաս կազմող հարցեր կամ ծրագիրներ պէտք է դառնան: Անցնող ֆանի մը տարիներու ընթացքին, Մեծի Տանն Կի-

լիկիոյ Կաթողիկոսութիւնը շեշտեց Սփիտֆի վերակազմակերպման ու վերակենսաւորման հրամայականը: Այս մասին յաճախակի առիթներով լայնօրէն անդրադարձած ենք Մեր պատգամներուն մէջ. այս հովուապետական այցելութեան եւս պիտի անդրադառնանք, որովհետեւ լայնատարած Սփիտֆի վերակենսաւորումը՝ մեր արժէքներուն ու աւանդութիւններուն շեշտաւորումով, Հայ լեզուին ու մեր ինքնութեան պահպանումով, կը նկատենք էական: Այս ծիրին մէջ, կը խորհինք, որ նաեւ յատուկ կարեւորութիւն պէտք է տրուի մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու շեշտաւորման:

Հարցում.- Վեհափառ Տէ՛ր, Ձեր հովուապետական այցելութիւնը տեղւոյն Թեմի ո՞ր շրջանները պիտի ներառէ:

Պատասխան.- Նկատի ունենալով Արեւելեան Հայոց Թեմին լայնատարած քլլալու իրողութիւնը, հովուապետական այցելութիւնը երկու հանգրուանի բաժնուեցաւ, որպէսզի կարելիութիւնը ունենանք աւելի մօտէն ծանօթանալու մեր համայնֆներուն ու կառոյցներուն: Անցեալ տարի (2023) այցելեցինք, Ուաշինկթընէն սկսեալ, միջին ատլանտեան մեր համայնֆները: Այս անգամ պիտի այցելենք հետեւեալ համայնֆները.- Փրաիտընս (Ռոտ Այլընտ), Ինտիրն Օրշըրտ, Ուատըր, Ուայթընգ-վիլ, Ուոթըրթաուն, Նորթ Անտովըր (Մէլչուուէթս), Կրանիթ Սիթի, Կլենվիլ, Ուոֆիկըն (Իլինոյ), Ռէյսին (Ուիսկոնսին) եւ Տիրպորն (Միչիկըն):

Հարցում.- Ձեր հովուապետական այցելութիւնը վերոյիշեալ շրջաններ, Վեհափառ Տէ՛ր, ի՞նչ ձեռնարկներ ու ծրագիրներ պիտի ընդգրկեն:

Պատասխան.- Առաջնորդ Սրբազան Հայրն ու Ազգ. Վարչութիւնը մանրամասնութեամբ մշակած են հովուապետական այցելութեան ծրագիրը, որուն համաձայն տասնըմէկ առիթներով համայնֆներուն կատարելիք Մեր այցելութեան ընթացքին, մեր պատգամը պիտի ուղղենք: Երկու առիթներով Ս. եւ Անմահ Պատարագ պիտի մատուցանենք՝ Փրաիտընսի եւ Շիֆակոյի մէջ, իսկ այլ առիթներով՝ մեր Հայրապետական պատգամները յղենք: Բնականաբար, ժողովրդային հաւաքներու ու հանդիպումներու ընթացքին եւս Մեր Օրհնութեան խօսքը պիտի ուղղենք ժողովուրդին: Երիտասարդական հաւաքներ պիտի կազմակերպուին եւ երիտասարդներու հետ զրոյցներ պիտի ունենանք: Այս առիթով յայտնենք, որպէսզի Մեր խօսքը յստակ ուղղութիւն ու շեշտաւորում ունենայ, մեր համայնֆներուն տալիք այցելութիւններու ընթացքին, «Հայր մեր»ի մեկնաբանութիւնը պիտի կատարենք՝ իրաւանշիւր առիթի լուսարձակի տակ բերելով աղօթքին առնչուած զանազան մտածումներ ու պատգամներ: Նաեւ պիտի անդրադառնանք մեր ժողովուրդին առնչուած հարցերուն՝ ընտանիք, տան դաստիարակութիւն, արժէքներու ու աւանդութիւններու պահպանում, Աստուածաշունչ, ծառայութիւն, եկեղեցի-ժողովուրդ յարաբերութիւն եւ այլն...: Ինչպէս կը տեսնէք, առաւելաբար հոգեւոր շեշտաւորում

պիտի ունենայ Մեր այցելութիւնը՝ առանց զայն անջատելու մեր Ազգին ու Հայրենիքին դիմագրաւած մարտահրաւիրներէն:

Հարցում.- Ծանօթ է, որ Ամերիկայի արեւելեան շրջանի յատկապէս երիտասարդները աւելի հակամէտ են անգլերէն լեզուի գործածութեան: Բնականաբար, այս երեւոյթը նկատի պիտի ունենաք:

Պատասխան.- Հովուապետական Մեր նախորդ այցելութիւններու ընթացքին, կարեւորութեամբ նկատի ունեցած ենք այս երեւոյթը: Անհրաժեշտ է, որ մենք հասնինք մեր ժողովուրդին եւ յատկապէս երիտասարդութեան՝ իրենց հասկնալի լեզուով, բնականաբար նաեւ շեշտելով մայրենի լեզուին կարեւորութիւնն ու գործածութեան անհրաժեշտութիւնը: Մեր բոլոր այցելութիւններուն ընթացքին յատուկ կարեւորութիւն տուած ենք երիտասարդութեան՝ հանդիպելով ու զրուցելով երիտասարդներուն հետ, ու մանաւանդ լսելով զանոնք: Այս անգամ եւս, կը սպասենք, որ մեր երիտասարդները ներկայութիւն դառնան այս այցելութեան ընթացքին տեղի ունենալիք ձեռնարկներուն ու հաւաքներուն, որպէսզի անոնց հետ խօսինք ներկայ ընկերութիւնը յուզող հարցերուն մասին: Այլեւս դուրս պէտք է գանք կադապարուած կարծրատիպերէ, օրակարգերէ ու մտածողութիւններէ: Հարկ է խօսիլ երիտասարդութեան հետ իրենց լեզուով ու մօտեցումով եւ իրենց օրակարգերուն մասին:

Հարցում.- Քանի մը օրեր առաջ Ս. Էջմիածնի մէջ տեղի ունեցաւ Միւռոն-օրհնէք եւ կատարուեցաւ Մայր Տաճարին վերածումը եւ մեր Ս. Աթոռը մասնակից դարձաւ այս արարողութիւններուն:

Պատասխան.- Ուրախութեամբ ու գոհունակութեամբ ողջունեցինք այս կարեւոր երկու դէպքերը, ընդհանրապէս մեր եկեղեցոյ ու յատկապէս Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կեանքին ու առաքելութեան մէջ: Վստահ ենք, որ ծառայութեան ու առաքելութեան նոր էջ պիտի բանան հոգեպարար այս արարողութիւնները Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կեանքին մէջ: Ինչպէս գիտէք, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր մասնակցութիւնը բերաւ Միւռոնօրհնէքին եւ Մայր Տաճարի վերածման: Կ'ուզենք կարեւորութեամբ յիշեցնել մեր ժողովուրդի զաւակներուն, թէ Հայ եկեղեցոյ միւռոնը մէկ է եւ նոյնն է: Պատմութեան ընթացքին, պայմաններու պարտադրանքով, Հայ եկեղեցոյ միւռոնը զանազան վայրերու մէջ օրհնուած է, սակայն անիկա մնաց ու կը մնայ նոյն եւ մէկ եկեղեցոյ նոյն եւ մէկ միւռոնը: Այս իրողութեան շօշափելի արտայայտութիւնն է այն, թէ երբ Ս. Էջմիածնի մէջ միւռոն կ'օրհնուի, անոր կը միախառնուի Անթիլիասի մէջ օրհնուած միւռոնը եւ՝ փոխադարձաբար, երբ Անթիլիասի մէջ միւռոն կ'օրհնուի՝ անոր կը միախառնուի Ս. Էջմիածնի մէջ օրհնուած միւռոնը: Մեր յոյսն է, որ յիշեալ երկու հոգեւոր ու ազգային պատգամներով լեցուն դէպքերը նաեւ առիթ հանդիսանան մեր ժողովուրդի զաւակներու համախմբումին՝ Հայաստանէն ներս թէ Սփիւռքի մէջ:

Այսօր, փաստորէն, մեր կեանքը լեցուն է բեւեռացումներով ու նեղներով: Հայրենիքին փրկութիւնը եւ մեր ազգին գերագոյն արժէքներու ու իտէլաներու առողջ պահպանումը՝ հարկ է վեր դասել ամէն տեսակ ֆաղափական նկատումներէ ու հաշիւներէ: Նայեցէք մեր շուրջը. ազգեր հաւաքական տագնապի դիմաց ոյժերու համախմբումով հաւաքաբար կը դիմագրաւեն իրենց առջեւ ծառայած տագնապները: Այս մասին անդրադարձած ենք յանախակի առիթներով, անցնող տարիներու ընթացքին, եւ շեշտած՝ թէ փոխանակ իրարու դէմ խօսելու եւ արժէքներ ու կառոյցներ արհամարհելու, Հայրենիքը ու անոր ընդհանրական շահերը հարկ է վեր նկատել ամէն տեսակ անձնական ու նեղ հաշիւներէ: «Հայաստանը ամէն բանէ վեր» նշանախօսը պէտք է մղիչ ոյժը դառնայ իւրաքանչիւր Հայու եւ ողջ Հայութեան:

Հարցում.- Ինչպէս գիտէք, Լիբանանը այս օրերուն կը դիմագրաւէ լուրջ տագնապներ: Ի՞նչ են Ձեր մտածումները ու պատգամը այս ուղղութեամբ:

Պատասխան.- Անցնող տասնամեակներու ընթացքին, Լիբանանը բազմազան ու զանազան տագնապներ դիմագրաւեց եւ կրցաւ իր ամբողջականութիւնը, ներքին միասնականութիւնը ու գերիշխանութիւնը պահել: Վստահ ենք, որ այս անգամ եւս, հաւաքական նոյն կամով ու հաւատով, Լիբանանի ժողովուրդը պիտի կարենայ երկիրը դուրս բերել ներկայ տագնապէն: Լիբանանի այս կացութեան դիմաց, պահ մը մտածեցիմք շնչել Արեւելեան Թեմին շնորհելիք Մեր հովուապետական այցելութիւնը եւ վերադառնալ Լիբանան, ինչպէս որ նախապէս կատարած էինք թէ Լիբանանի եւ թէ Սուրիոյ առնչուած տագնապներուն գծով: Սակայն, մեր կրօնական, համայնֆային ու պետական պատասխանատուները այս հանգրուանին անհրաժեշտ չնկատեցին Մեր անմիջական վերադարձը Լիբանան, նկատի ունենալով ներկայ տագնապին բնոյթը: Այս ծիրին մէջ ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, որ Լիբանանի մեր համայնքի պատասխանատուները մօտէն կը հետեւին տագնապի հոլովոյթին, ինչպէս նաեւ մեր ժողովուրդի կարիքներուն՝ անհրաժեշտ ֆայլերու դիմելով ու բարձրաստիճան պատասխանատուներու հետ հանդիպումներ ունենալով: Այս կացութեան դիմաց անհրաժեշտ է, որ Լիբանանի ժողովուրդը իր ներքին միասնականութիւնը պահէ ամուր եւ առանց ձգձգումներու ձեռնարկէ նախագահական ընտրութեան, որպէսզի նոր կառավարութեան կազմումով երկիրը մտնէ վերականգնումի ընթացքին մէջ: Հայրենամերձ մեր երկու գաղութները՝ Լիբանանն ու Սուրիան, վերջին տասնամեակներուն դիմագրաւեցին լուրջ տագնապներ ու դժուարութիւններ, սակայն շնորհիւ մեր համայնքներու կրօնական ու ֆաղափական ղեկավարութեանց, անոնք կրցան դուրս գալ յիշեալ տագնապներէն եւ վերակազմակերպուիլ: Այս ուղղութեամբ մեծապէս գնահատելի է Սփիւրքի մեր գաղութներու նիւթական զօրակցութիւնը: Լիբանանի ու Սուրիոյ գաղութներու կառոյցներուն ու յատկապէս կրթական օժանդակներուն նիւթական օժանդակութիւնը կը նկատենք հրամայական անհրաժեշտութիւն:

ՊԱՏՄԱ.-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

**90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՉՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ**

Տ. ՇԱՀԷ ԱՐՔ. ԱԾԵՍԵԱՆ

Ծնած է 24 Յուլիս 1926-ին, Հալէպ (Սուրիա): Աւագանի անունն է Յովհաննէս: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի Ազգ. Հայկազեան եւ Մխիթարեան Վարժարաններուն մէջ, ապա երկրորդական ուսումը՝ տեղւոյն Տրէր Մարիստներուն Գոլէճին մէջ, ուրկէ վկայուած է պաքալորիայի վկայականով:

Պատանի տարիքին ցուցաբերած է ուշիմութիւն, ընդունակութիւն եւ աշխատասիրութիւն: Հայ լեզուին եւ մշակոյթին սէրը 1943-ին զինք առաջնորդած են ուսումը շարունակելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի յարկէն ներս:

Մէկ տարի ետք, 11 Յունիս 1944-ին, Սարկաւազ ձեռնադրուած է, ձեռամբ Դամասկոսի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Եփրեմ Արք. Տոհմունիի:

Աւարտելով դպրեվանքի ուսումնառութեան շրջանը, 25 Մայիս 1947-ին Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ դպրեվանքի վերատեսուչ Դերենիկ Եպս. Փօլատեանի, եւ վերակոչուած՝ Տ. ՇԱՀԷ ԱԲԵՂԱՅ:

Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանցի թելադրութեամբ Հայր Շահէ մեկնած է Պրիւքսել (Պելճիքա)՝ կատարելագործելու համար ուսումը: Ան հետեւած է փիլիսոփայութեան եւ գրականութեան ճիւղերուն եւ ստացած՝ Մագիստրոսի տիտղոս: 1951-ին ներկայացուցած է իր դոկտորական աւարտաճառը՝ «Դաւիթ Անյաղթի մեկնութիւնը Արիստոտելի երկերուն», ընդարձակ յառաջաբանով մը Արիստոտելի գործերուն հայերէն թարգմանութեանց եւ մեկնութեանց, ինչպէս նաեւ բնագրին Ֆրանսերէն թարգմանութեամբ, եւ ստացած է Դոկտորայի վկայականը: Նոյն տարին վերադարձած է Մայրավանք: Նկատելով որ ան տիրապետած էր արաբերէն եւ ֆրանսերէն լեզուներուն, Վեհափառ Հայրապետը զինք նշանակած է զիւանապետ կաթողիկոսարանի եւ արտաքին ու պետական յարաբերութեանց տեսչութեան պատասխանատու: Ան միանգամայն դասաւանդած է դպրեվանքի եւ Պէյրուսի Յովակիմեան-Մա-

նուկեան եւ Նշան Փալանճեան Ճեմարաններուն մէջ:

7 Դեկտեմբեր 1952-ին ստացած է Վարդապետական Գաւազանի իշխանութիւն ձեռամբ Խաղ Արք. Աջապահեանի:

1956-ի ազգային-եկեղեցական տազնապի օրերուն, հեռացած է Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանական Ուխտէն եւ 1965-1994 անդամակցած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան:

7 Նոյեմբեր 1965-ին Եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում ստացած է Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ, ձեռամբ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Սաղիմական միաբանութեան մէջ շուրջ 15 տարի ստանձնած է Սիրոն ամսագրի խմբագրի պաշտօնը, վարած է դիւանապետի եւ կալուածոց տեսչութեան գրասենեակային աշխատանքները, եւս առաւել մեծ ձեռնհասութեամբ, որպէս նուիրակ Ս. Աթոռի, իր կարեւոր բաժինը բերած է Ս. Յարութիւն Տաճարի նորոգութեան առթիւ կատարուող հանգանակութեան:

Հայաստանի անկախացումէն ետք, 1994-ին տեղափոխուած է հայրենիք, Ս. Էջմիածին եւ իր կարեւոր նպաստը բերած՝ Գէորգեան Ճեմարանի եւ Սեւանի Վազգէնեան Դպրանոցին: Ան օգտաշատ ներկայութիւն մը դարձած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն ներս:

Շահէ Արք. Աճէմեանի կարեւոր նախաձեռնութիւններէն եղած են.

ա.- Զիթենեաց լերան Հայ Աստուածաշունչի կեդրոնը, ուր պատրաստուած եւ տպագրութեան յանձնուած են Աստուածաշնչեան զանազան բնագրեր:

բ.- Հայաստանի համալսարանական ցանցին մէջ ստեղծած է Աստուածաբանական ճիւղերու ամպիոնը:

Յետ երկարատեւ ծանր հիւանդութեան, Շահէ Արք. Աճէմեան 13 Յուլիս 2005-ին վախճանած է, իր ետին ձգելով բեղուն գործունէութեան վաստակ մը: 18 Յուլիս 2005-ին Հայաստանի Ս. Գայեանէ վանքէն ներս տեղի ունեցաւ վերջին օծման կարգը: Իր մարմինը ամփոփուած է Ս. Էջմիածնի Միաբանական գերեզմանատունը:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Շար. 21)



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

**ՀԱՍԿ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՔ
(2011-2023, Նոր շրջան, ԺԳ. Հատոր)**

Արտի մեծ ուրախութեամբ եւ գոհունակութեամբ աւետում ենք, որ լոյս տեսաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Հասկ Հայագիտական Տարեգրքի պահանջուած եւ յոյժ գնահատելի ԺԳ. հատորը: Խորին երախտագիտութիւն ենք յայտնում Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ՝ Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին, ով լաւագոյնս գիտակցելով հանդէսի գիտական կարեւորութիւնը՝ իր Հայրապետական օրհնութիւնը բաշխեց եւ նպաստեց տարեգրքի լոյս ընծայմանը: Առանձնապատուկ գնահատանքի է արժանի Հասկ Հայագիտական Տարեգրքի խմբագիր՝ Տ. Շահան Արք. Սարգիսեանի նախաձեռնութիւնը եւ հերթական հատորը հրատարակելու կամային ուժը, անսպառ եռանդն ու աստուածային շնորհը:

Հերթական հատորը նուիրուած է Հայ Առաքելական Ս. Եկեղեցու մեծագոյն Վարդապետ՝ Ս. Ներսէս Շնորհալու վախճանման 850-ամեակին: Ս. Ներսէս Շնորհալի «մեղրաբարբառ» Հայրապետն այնպիսի հսկայածաւալ ժառանգութիւն է թողել յետագայ սերունդներին, որի ուսումնասիրութիւնը, վերլուծութիւնը շարունակուում է մինչ օրս եւ դեռ շարունակուելու է: Անուանի հայագէտներ են անդրադարձել նրա գործունէութեանը: Եւ ահա խնդրոյ առարկայ հատորը գալիս է լրացնելու այդ ուսումնասիրութիւնների շղթան: Ի սկզբբանէ տարեգրքը կազմողներն ու սոյն հատորի խմբագրակազմը ճիշդ են ըմբռնել օրուայ հրամայականը՝ զարկ տալ հայագիտութեանը, շեշտը դնել հայագիտական ուղղութիւնների զարգացման վրայ, աշխարհին ծանօթացնել մեր պատմութեանը, մշակոյթին, կրօնին, արուեստին եւ գրականութեանը:

Հասկ-ի երրորդ՝ նոր շրջանի առաջին համարում Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսն ուղերձ-առաջաբանում գրում է իր մտահոգութեան, ծրագրերի մասին, եւս մէկ անգամ շեշտադրում հայագիտութեան կարեւորութիւնը. «Մի քանի ամիսներ առաջ կը գտնուէի Դանիոյ Աուրուս քաղաքը: Հոն հաճոյքը ունեցայ ճաշելու Աուրուսի հոշակաւոր համալսարանի Նախագահ՝ Տոքթ. Հէնինկ Լեհմանի հետ, որ հայագէտ մըն է: Կրնա՞ք երեւակայել թէ որքա՞ն մեծ եղաւ ուրախութիւնս, երբ երկու ժամ շարունակ խօսեցանք միայն հայագիտական հարցերու մասին: Այսօր երբ օտարներ այնքան լրջօրէն կը դարձնեն հայագիտութեամբ, մենք որ տէրն ենք հայագիտութեան, ո՞ր ենք,

որքան աւելի բարձր պատասխանատուութիւն ունինք եւ պէտք է ունենանք հայագիտութեան նկատմամբ: Արդարեւ, պատասխանատու ու լուրջ մօտեցում հայագիտութեան, կը նշանակէ.

– Յատուկ ճիգ թափել, որ բազմաձայն հայագիտութեան հետեւող Հայ ուսանողներուն թիւը:

– Քաջալեր հանդիսանալ հայագիտական հրատարակութեանց ճոխացման ու բազմացման:

– Յիշեցնել ունեւոր ազգայիններուն, որ հայագիտութիւնը նկատեն մեր հիմնական առաջնահերթութիւններէն մին եւ նիւթապէս օգտակար ըլլան անոր առաւել հարստացման:

– Հետամուտ ըլլալ, որ օտար համալսարաններու մէջ հայագիտական ամպիոններ հաստատուին կամ նիւթեր դասաւանդուին»¹:

Երբ 1932 թուականին Բաբգէն Աթոռակից Կաթողիկոս Կիւլէսէրեանը² հիմնադրում էր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնական Հասկ ամսաթերթը³, հաւատով հայագիտութեան անդամստանին էր պահ տալիս սերունդների կողմից փայտաշուծած, խնամքով պահուած սերմնահատիկն այն տեսլականով, որ այդ փոքրիկ հունտը պտուղ պիտի տար՝ մէկի դիմաց երեսուն, վաթսուն եւ հարիւր: Եւ ահա Հասկն այնքան հասունացաւ, որ իր առջեւ դրուած նպատակային երկու ուղիների բաժանուեց Գարեգին Յովսէփեան Կաթողիկոսի իմաստուն որոշմամբ, քանի որ պաշտօնական ամսաթերթը չէր կարող արդէն միեւնոյն ժամանակ ծառայել թէ՛ կրօնա-դաստիարակչական ու եկեղեցական խնդիրների եւ թէ՛ գիտութեան առջեւ ծառայած լուծումներին⁴:

«Ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն»⁵:

Գիտութեան տունկը Հայոց մէջ սերմանուեց Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմից, պտղաբերեց, աճեց ու զօրացաւ, հզօր արմատներ գցեց, հասաւ մինչեւ

¹ Հասկ հայագիտական տարեգիրք, Նոր շրջան, Է.-Ը. Տարի, 1995-1996, Անթիլիաս-Լիբանան, 1997, էջ 8:

² Բաբգէն Կաթողիկոս Կիւլէսէրեանը ծնուել է 1868 թ. Այնթապում: Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնաթերթ Հասկ պաշտօնական ամսագրից բացի, նրա աջակցութեամբ եւ գործուն մասնակցութեամբ են հրատարակուել նաեւ Կոստանդնուպոլսի «Լոյս», Երուսաղէմի «Սիոն», Ամերիկայում տպուող «Տարոս» պարբերականները, տե՛ս Պետրոս Արքեպս. Սարաճեան, Աղքատին լուսն, Հասկ ամսաթերթ պաշտօնական հրատարակութիւն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, 1936, էջ 112-113, Տ. Բաբգէն Ա. Կաթողիկոս Կիլիկիոյ (ինքնակենսագրութիւն), էջ 143, Հանգուցեալ Ս. Կաթողիկոսի գրական աշխատութիւնները, էջ 143-144:

³ Հասկ ամսաթերթ. պաշտօնական հրատարակութիւն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Ա. Տարի, թիւ 1, Յունուար, 1932, 4 էջ:

⁴ Հասկ հայագիտական տարեգիրք, Ա. Տարի, Անթիլիաս-Լիբանան, 1948. Հրատարակչութեան կողմից:

⁵ Նոյն տեղում:

մեր օրերը: Այն գիտութեան «տան» հիմքը եղաւ, որի պատերը դարերի ընթացքում կանգնեցրին ժրաշան մշակները՝ կատարելութեամբ յղկելով իւրաքանչիւր քար: Հասկն այսօր այդ սրբատաշ մի քարն է, ծառի մի ճիւղը, որն իր աւիշն է ստանում դարերի ընթացքում խոր արմատներ գցած եւ արհաւիրքներին դիմացած հայկական ուրոյն մշակոյթից...:

Անցեալ, ներկայ եւ ապառնի...: Եթէ սրանք փոխկապակցուած չեն, չեն լրացնում միմեանց եւ գործում են իրարից անկախ, երբ անտեսում է երեքից որեւէ մէկը, ապա տուժում է ո՛չ միայն ինքնաճանաչողութիւնը, ինքնագիտակցումը, այլ նաեւ ազգը. «Եւ վարդապետաց եկեղեցւոյ պիտոյ է վասն երիցն գիտելոյ. վասն անցելոյն պատմել, վասն ներկային խօսիլ, վասն ապագային իմանալ եւ զգուշացնել»⁶: Ուստի հետեւող լինենք մեր նախնիներին, ամուր կառչենք մեր արմատներից, եւ փորձենք դարերով ամբարուածը հաղորդել մեր ապագայ սերունդներին նորովի, չկտրել անցեալի ու ապագայի կեանքն իրարից, մեր ներկայով ամբացնենք այն. «Պատմութիւնը գիտակցուած կեանքն է անցեալի պեղումներով՝ դարերի խորքից երեւան հանուած գանձերով զարդարուած»⁷:

Հասկ հայագիտական տարեգրքի հիմնադրման օրուանից առ այսօր տպուել են տասներեք հաստափոր հատորներ: Գարեգին Ա. Յովսէփեան Կաթողիկոսի օրօք հիմնադրուեց եւ նրա անմիջական հսկողութեամբ (Ա. Տարի՝ 1948, Բ. Տարի՝ 1949-1950) լոյս տեսան առաջին երկու համարները: Տարեգրքի երրորդ համարի նիւթերն էլ նա բաւականաչափ պատրաստել էր, երբ վախճանուեց: Ահա նրա մահուանից 5 տարի յետոյ լոյս է տեսնում Գ. հատորը (1957): Յետագայում Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսը ստանձնեց Հասկի տպագրութեան գործը եւ տպագրուեցին եւս մի քանի համարներ (Ա. Տարի՝ 1980, Բ.-Գ. Տարի՝ 1981-82, Դ.-Ե. Տարի՝ 1983-84, Զ. Տարի՝ 1994՝ տպուած 1995-ին): Եւ ահա երրորդ՝ նոր շրջանի շարունակողն է Արամ Ա. Կաթողիկոսը: Նրա օրօք տպուել են 5 հսկայածաւալ հատորներ (Է.-Ը. Տարի՝ 1995-1996, Թ. Տարի՝ 1997-2001, Ժ. Տարի՝ 2002-2006, ԺԱ. Տարի՝ 2007-2008, ԺԲ. Տարի՝ 2009-2010, ԺԳ. Տարի՝ 2011-2023):

Հասկ տարեգրքի հատորներից իւրաքանչիւրը նուիրուած է կոնկրետ թեմատիկայի, որոնք համապարփակ եւ բազմակողմանի վերլուծութիւն են պարունակում, քննարկում են թեման տարբեր գիտակարգերի տեսանկիւններից՝

⁶ Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վարդապետի Մեծորեցւոյ, Փարիզ, 1860, էջ 9. Հմմտ Գիւրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 536, Գրիգորի Տաթևացւոյ Ընդդէմ տաճկաց, ուսումնասիրեց եւ հրատարակեց Բաբգէն Եպս. Կիւլէրեան, Վիեննա, 1930, էջ 115:

⁷ Հասկ հայագիտական տարեգրք, Ա. Տարի, Անթիլիաս-Լիբանան, 1948. Հրատարակչութեան կողմից:

ունենալով միեւնոյն նպատակակէտը, այն է՝ հանրահոշակել հայագիտական նիւթը:

Սոյն հատորը բաղկացած է մի քանի մասերից. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակին եւ ներածականին յաջորդում են գիտական յօդուածները, որոնցից 14-ը նուիրուած են Շնորհալի Հայրապետի ապրած ժամանակաշրջանին, եկեղեցապատմական, աստուածաբանական խնդիրներին, միւս բաժինը՝ Արխի եւ պատմութիւնը՝ 7 յօդուածներով: Երրորդ մասը Երազմականն է, որտեղ ներկայացուած են շորս նօթագրուած մշակումներ՝ Լոյս Արարիչ լուսոյ, Անեղանելիդ, Ճանապարհ, Տարածեալ: Տարեգիրքն աւարտուում է մատենագիտական երկու յօդուածներով: Յոյժ կարեւոր է Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին առնչուած այն յօդուածների մատենագիտական ցանկը, որոնք լոյս են տեսել Հասկ ամսաթերթի եւ հայագիտական տարեգրքի համարներում: Դրան կից ներկայացուած են նաեւ այն վարդապետական ճառերի արխիւը, որոնք այս կամ այն կերպ առնչուում են Շնորհալի Հայրապետի կամ նրա ապրած ժամանակաշրջանի խնդիրներին:

Յատկանշական է, որ Հասկ-ի այս համարի յօդուածաշարն սկսում է Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի գիտական անգլերէն⁸ յօրուածով: Սա եւս այն գեղեցիկ աւանդոյթի շարունակութիւնն է, ինչն եղել է անցեալում, տարեգրքի հիմնադրման օրուանից: Տարեգրքի համարները բացում են Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսների առաջաբանով, երբեմն էլ գիտական յօդուածներով, որոնցից իւրաքանչիւրը մեծ ներդրում է հայագիտութեան աշխարհում:

Հաշուի է առնուել այն հանգամանքը, որ հայագիտութիւնը չպէտք է զարգացնել միայն հայկական այն միջավայրի համար, որտեղ դրանք ստեղծուում են, այլ ողջ Հայութեան եւ հայագիտական լայն շրջանակների համար, որպէսզի դրանից շահեն ե՛ւ ընթերցողները, եւ հայագիտութիւնը: Խմբագրակազմը լիովին լուծել է այդ խնդիրը. յօդուածներից տասնըմէկը հայերէն են՝ թէ՛ արեւելահայերէն եւ թէ՛ արեւմտահայերէն (երկուսի դէպքում էլ պահպանուած են դասական ուղղագրութիւնը): Միւս յօդուածներից երկուսը անգլերէն են եւ մէկն արաբերէն:

Մասնաւորապէս գնահատելի է Արամ Ա. Կաթողիկոսի գնահատանքը եւ շարունակականութեան անհրաժեշտութեան ապահովումը: Իր յօդուածի ներածականում՝ Saint Nerses the Gracious an Ecumenical Saint (Ս. Ներսէս Շնորհալին էքիւմենիք սուրբ մը) վերափառը մանրամասնօրէն կրկին անդրադառնում է հայագիտութեան մէջ եղած առաջնահերթ խնդիրներին եւ հետաքրքրական լուծումներ եւ մեկնաբանութիւններ առաջարկում դրանց համար: Սկը-

⁸ Թերեւս այն հանգամանքը, որ յօդուածը գրուած է անգլերէնով, նպաստելու է ընթերցողների աւելի լայն շրջանակի ներգրաւմանը:

սելով Կիլիկիայի Հայոց թագաւորութիւնից՝ Վեհափառ Հայրը մանրամասնօրէն կանգ է առնում Հայերի համար խոչընդոտ դարձած Քաղկեդոնի ժողովին՝ մէջբերելով ո՛չ միայն հայկական, այլ նաեւ յունական աղբիւրների տուեալները: Ներսէս Շնորհալու գործերի, դրանցում արտայայտած տարբեր խնդիրների վերաբերեալ Շնորհալի Կաթողիկոսի վերաբերմունքով եւ մտայնութեամբ է նա բացայայտում Քաղկեդոնի ժողովի անցած ճանապարհը եւ հնարաւոր լուծումները: Դրանք ներկայացնելու համար քննարկում են հետեւեալ գլուխները. The Nature of Unity (Միութեան բնութիւնը), The Council of Chalcedon (Քաղկեդոնի ժողովը), Mutual Love: the Basis of Unity (Փոխադարձ սէրը՝ հիմքը միութեան), Equality, not Dominion (Հաւասարութիւն, ո՛չ տիրապետութիւն), The Role of Prayer (Աղօթքին դերը), Concern for Identity (Մտահոգութիւն ինքնութեան վերաբերեալ), The Broad-mindedness of the Armenian Church (Հայ եկեղեցու լայնախոհութիւնը): Յօդուածն աւարտում է Catholicos Nerses: an Ecumenical Saint (Ներսէս Կաթողիկոսը էքիւմէնիք Սուրբ մը) գլխով, որտեղ հեղինակը սեղմօրէն, սակայն լայնախոհ գաղափարներով հաստատում է, թէ ինչու Ներսէս Շնորհալուն պէտք է համարել տիեզերական սուրբ եւ ինչ մեծ դեր է ունեցել նրա գործունէութիւնը եկեղեցիների միաւորման գործում: Առանց ճշմարիտ գիտութեան որեւէ հայագիտութիւն չի զարգանայ. հետեւող լինենք եւ զօրանանք. «Իսկական գիտութիւնը հետամուտ է միմիայն ճշմարտութեան, իսկ ճշմարտութիւնը ազատութիւն եւ զօրութիւն է տալիս մարդուն»⁹:

Ուրախալի է նաեւ, որ 2024 թուականին Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում տեղի ունեցած Հայագիտական միջազգային կոնգրէսի շրջանակում (19-22 Յուլիսի, 2024թ.) նշուեց նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Հասկ հայագիտական տարեգրքի այսքան սպասուած հատորի շնորհանդէսը:

Մաղթում ենք, որ ստուարածաւալ հատորը ամուր եւ հայանպաստ հիմքը լինի յետագայ հրատարակուելիք հատորների եւ «...ան ըլլայ կենդանի եւ արդիւնաշատ կապ մը Հայաստանի եւ արտասահմանի հայագէտներուն միջեւ»¹⁰:

Պատրաստեցին՝
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՓՐՈՖԷՍՆՅՕՐ՝ ԷՌԵՆԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆԵԱՆ
ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՒ
ԷԼՅԱ ՍԱՐԻԲԷԿԵԱՆ

⁹ Գարեգին Ա կաթողիկոս, *Դէպի լոյս եւ կեանք*, Երեւան, 1994, էջ 97:

¹⁰ Գարեգին Բ աթոռակից կաթողիկոս, *Յառաջարան*, Հասկ հայագիտական տարեգիրք, Նոր շրջան, Ա տարի, 1980, Անթիլիաս-Լիբանան, էջ Ը:

**ՄԻ ՔԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՍԿ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ՝
ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ԺԳ. ՀԱՏՈՐՈՅ (2011-2024)
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ**

Մեծ գոհունակութեամբ ստացայ Հասկ Հայագիտական Տարեգիրքի օրինակըս, լի հարուստ ու շահեկան պարունակակութեամբ, խմբագրութեամբ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի, օժտուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակով եւ Հայրապետական օրհնութեամբ, նուիրուած՝ Ս. Ներսէս Շնորհալույ վախճանման 850-ամեակին:

Տարեգիրքը հետաքրքրական պատմութիւն կը ներկայացնէ. անդրանիկ հատորը ի լոյս ընծայուեցաւ 1948-ին, երջանկայիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսի ջանքերով, Մեծի Տանն Կաթողիկոսութեան Անթիլիասի նստավայրէն: Ինչպէս երջանկայիշատակ Վեհափառի գիտական աշխատակից՝ Սիմոն Սիմոնեան գրած էր՝ «Վեհ. Հայրապետի սիրելի եւ մշտասեւեռ երազը եղած է Ի՛ր Աթոռը – Անթիլիասը վերածել Մշակոյթի Կեդրոնի: Գլխաւորի՝ միջնադարեան Հայ համալսարանի մեծ ուսումնասիրողն է եղած Ան եւ կ'ուզէ Իր Աթոռը փոխակերպել նոր օրերու Գլխաւորի...: Գլխաւորի համալսարանի հիմնադիրներուն հոգին վերածնած է Վեհափառ Հայրապետին մէջ, որ Լիբանանի այս մշտադալար ակերուն վրայ կ'ուզէ հաստատել Հայ մշակոյթի նոր վառարան մը»:^{}*

Ահա այս ոգիով է, որ Հասկ Հայագիտական Տարեգիրքը հիմնադրուեցաւ: Կիլիկեան Ս. Աթոռը Մեծ Եղեռնի վաղորդայնին Սսոյ իր պատմական աթոռէն տեղահանուած էր, եւ Անթիլիաս հաստատուած՝ կը ջանար իր աքսորեալ հօտը սփոփել, զայն նոր հոգեւոր սննդեամբ սպառազինել, եւ նոյն ատեն Ս. Աթոռոյն վիճակը ամրապնդել: Կարելի է երեւակայել թէ ինչպիսի վիթխարի նիւթական ու գոյաբանական դժուարութիւններ եւ ինչպիսի հրատապ առաջնահերթութիւններ կը դիմագրաւէր Կիլիկեան Ս. Աթոռը. այսուհանդերձ՝ հոգեւոր ու մշակութային արժէից ուսումնասիրութիւնը եւ Հայագիտութիւնը այնքան կարեւոր էին, որ նոյնիսկ այդ դժուար տարիներուն այսպիսի նախաձեռնութիւն մը իրականացաւ եւ յիշուի մեծ յաջողութեամբ ալ պսակուեցաւ: Շուտով առաջինին յաջորդեց միացեալ Բ. հատորը (1949-1950), եւ այնուհետեւ մի քանի տարուան ընդմիջումէ մը ետք՝ Գ. հատորը (1957): Աւելի քան քսան տարի անցաւ մինչեւ Հասկ Հայագիտականի վերականգնումը՝ «Նոր

^{*} Տե՛ս Սիմոն Սիմոնեանի յառաջաբանը, Գարեգին Ա. Կաթողիկոս, *Յիշատակարանք Ձեռագրաց*, Ա. Հատոր, Անթիլիաս, 1951, էջ 29.

Շրջան»ի մը ներքեւ, հետեւեալ արժէքաւոր հատորներու շարքը ընծայելով մասնագէտ ազգայնոց եւ ընթերցասէր հասարակութեան. այսպէս՝ լոյս տեսան «Նոր Շրջանի» հատորներ Ա. (1980), Բ.-Գ. (1981-1982), Դ.-Ե. (1983-1984), Զ. (1994), Է.-Ը. (1995-1996), Թ. (1997-2001), Ժ. (2002-2006), ԺԱ. (2007-2008) եւ հուակ ԺԲ. (2009-2010):

Լիբանանեան հայրենեաց քաղաքական ու տնտեսական վերիվայրումները ակնյայտօրէն իրենց դերը ունեցան Նոր Շրջանի յապաղմանց վրայ, սակայն Տարեգրքի առաքելութիւնը անվհատ շարունակուեցաւ ի հեճուկս երկու ընդմիջմանց: Իսկ նկատի առնելով որ տակաւին երկիրը իր երբեմնի կայուն ու բարգաւաճ վիճակը չէր վերագտած՝ խիզախ եւ առաւել եւս ողջունելի քայլ մըն էր Հասկ Հայագիտականի ներկայ տարուան վերակենդանացումը՝ պատշաճօրէն օգտագործելով մանաւանդ Ս. Ներսէս Շնորհալույ վախճանման 850-ամեակի ընծայած պատեհութիւնը:

Արդարեւ, բաւական աշխատանքներ կատարուեցան Սրբոյն աւանդին ու վարուց ուսումնասիրութեան ու վերարժեւորման տեսակէտով. Մաշտոցեան Մատենադարանը, Մխիթարեան Միաբանութիւնը, Հռոմի Քահանայապետական Հիմնարկը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, բոլորը գիտաժողովներ կազմակերպեցին Սրբոյն նուիրուած. տրուպս անձնապէս վերոյիշեալ ձեռնարկներու առաջին երեքին մասնակցելու հրաւերներու ընդառաջեց, ինչպէս նաեւ Ս. Էջմիածին (30 Յունիս 2023), Ռիկա (24 Նոյեմբեր 2023), Նիկոսիա (10 Յունուար 2024) եւ Պուտափեշտ (9 Փետրուար 2024) հանդէս գալով անձամբ՝ եւ Ազգակի լսարանի հարթակին վրայ (8 Փետրուար 2024) առցանց կապով: Ատկէ զատ՝ ի Սփիւռս աշխարհի զանազան միջազգային գիտաժողովներ հարստացան Սրբոյն հետ առնչուած զեկոյցներու ներառմամբ: Տրուպիս պարագային՝ Շնորհալույ հետ առնչուած երաժշտութեան զանազան երեսակներու մասին դասախօսեցի Կարողեան համալսարանի Կաթողիկէ ու Հուսեան բաժանմանց (21 Սեպտեմբեր 2023) եւ Չեխ Ազգային կաճառի (23 Հոկտեմբեր 2023) գիտաժողովներուն. իսկ Լիզպոնի CESEM Երաժշտութեան Ընկերաբանութեան եւ Գեղագիտութեան Ուսումնասիրութեան Կեդրոնի անդրանիկ դասախօսութեանս (4 Ապրիլ 2024) կիզակէտը դարձեալ Ս. Ներսէս Շնորհալույ ժառանգն էր: Նոյնպէս՝ ականաւոր պատմաբաններ, աստուածաբաններ եւ բանասէրներ «Շնորհալույ տարին» հարստացուցին նորանոր աշխատութիւններով:

Այսպիսով՝ Հասկ Հայագիտականի վերահաստատման համար լաւ հող պատրաստուած էր, եւ Տարեգրքիս եւ անոր արգոյ խմբագրութեան հանդէպ յարգանքի մասին պերճախօսութեամբ կը վկայէ այն հանգամանքը, որ մէկէ աւելի հեղինակներ իրենց այլուր ներկայացուցած բերանացի զեկոյցներու պարունակութիւնը ուզեցին Տարեգրքիս էջերուն համար վերապահել: Նոյնն էր նաեւ իմ պարագաս:

Յիրաւի՝ Հասկ Հայագիտականի համեստ մասնակցութիւնս բերելը պարտք մը եւ նոյն ժամանակ երազի իրականացում մըն էր տրուպիս համար: Մանկութեանս տարիներէն Տարեգրքի հնագոյն հատորները կը թղթատէի ու ծայրէ-ծայր կ'ընթերցէի. բարեբախտ էի, որ լուսահոգի մեծ-հօրեղբօրս՝ Վահրամ Իւթիւճեանի գրադարանէն մեր ընտանեաց փոխանցուած էին անոնք (իսկ ինք զանոնք ուղղակի Կաթողիկոսարանէն կը ստանար՝ ի գնահատանս Կիլիկեան Ս. Աթոռոյն հանդէպ իր բարերարութեանց): Պարտք մը՝ գէթ փոքրիկ ձեռով խորին երախտագիտութիւնս արտայայտելու, նախ՝ Հոգեւոյս ուսուցիչիս՝ Տ. Զարեհ Արք. Ազնաւորեանին, եւ ապա Շահան Սրբազանին, Պարոյր Վարդապետին, Վեհափառ Հօր եւ Կաթողիկոսութեան՝ իրենց ազնիւ հիւրասիրութեան համար, երբ երկու տարի առաջ Անթիլիաս կը գտնուէի՝ Կաթողիկոսարանի, Դպրեվանոց եւ Համազգային Միութեան հովանեաց ներքեւ դասախօսելու համար:

Այլուոյ լուծաս (էջ 221-264), որ «Սուրբ Ներսէս Շնորհալուոյ ժառանգի հետ առնչուած երաժշտական հարցեր» խորագիրը կը կրէ՝ կը բաղկանայ հետեւեալ բաժիններէն. Ներածական, Հեղինակային պատկանողութեան հարցեր, Տարբեր շարականագրաց նոյն եղանակի օգտագործման երեւոյթը, Ս. Պատարագ, Տաղք, Մի քանի նկատողութիւններ եղանակային տարբերակներու մասին, Եզրափակիչ խօսք, Շնորհակալութիւններ – անշուշտ բազում ստորաբաժանումներով ըստ պատշաճի:

Երախտապարտ եմ Աբրահամ Տէրեանին, Գէորգ-Կիրակոս Աւ. Սրկ. Լէյլէկեանին, Հայկ Աւագեանին, Արամ Քերովբեանին, Լեւոն Շառոյեանին, Գերշ. Տ. Լեւոն Արք. Զէքիեանին եւ Մխիթարեան Միաբանութեան ի Ս. Ղազար եւ ի Վիեննա, Տիգրան Զարգարեանին եւ Հայաստանի Ազգային Գրադարանին, Սոնա Բալոյեանին եւ Մաշտոցեան Մատենադարանին, եւ անշուշտ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանին եւ Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, իրենց բարեացակամ օժանդակութեան համար:

Տարեգրքիս կէսէն քիչ մը աւելին նուիրուած է Սրբոյն գործունէութեանց, վարուց եւ ժառանգի հետ կապուած ուսումնասիրութեանց. իսկ երկրորդ կէսը կը բաղկանայ ընդհանուր հետաքրքրութիւն ներկայացնող դիւանային, պատմական, երաժշտական եւ մատենագիտական նիւթերէ: Պիտի ուզէի այս բաժնին վրայ պահ մը ուշադրութիւն ընծայել: Դժուար է անշուշտ առանձնացընել այս կամ այն յօդուածը. սակայն ինծի յատուկ տպաւորութիւն թողուցին մի քանի նիւթեր: Անոնցմէ մին Անի Ֆիշէնկճեանի ուսումնասիրութիւնն էր՝ «Բերիոյ (Հալէպ) Թեմի Կիրակնօրեայ դպրոցի ծնունդն ու կազմակերպումը» խորագրով: Յուզիչ էր իմանալ թէ ինչպիսի անձնուիրութեամբ դժուարութիւններ յաղթահարուեցան Սուրիոյ Կիրակնօրեայ վարժարանի ստեղծման ի խնդիր: Այս նիւթը յատկապէս սրտիս խօսեցաւ, ի միջի այլոց նաեւ այդ պատճառաւ, որ անձնապէս «Կիրակնօրեայ Սուրբ Յարկ»էն մեծապէս օգտուե-

ցայ մանկական տարիներուս (ուստի ինծի մեծ ցաւ կը պատճառէ որ ծնընդավայրիս՝ Կիպրոսի Կիրականօրեայ վարժարանը անփութութեան հետեւանօք ըստ երեւոյթին խափանուած է այլեւս): Երջանկայիշատակ Բաբգէն Աթոռակից Կաթողիկոսի ուսումնասիրութիւնը (հեղինակուած էրք տակաւին Ամերիկայի Միացեալ Նահանգներ կը ծառայէր իր եպիսկոպոսութեան տարիներուն) «Հայերը եւ Թիւրք լեզուն» նոյնպէս խիստ հետաքրքրական գտայ: Լեւոն Շառոյեանի դիւրամատչելի, սակայն հարուստ տեղեկութիւններով լի պատմական յօդուածը՝ «Աշոտ Ա. Բագրատունի եւ իր ժամանակը» նոյնպէս մեծապէս ըմբռնելի էր. հիանալի եւ օրինակելի նմոյշ մըն է, որ ցոյց կու տայ թէ ինչպէս մասնագիտական մակարդակի աշխատանքներ կրնան ամփոփ, յըստակ, մատչելի ու հետաքրքրաշարժ կերպիւ ներկայացուիլ լայն հանրութեան:

Տարեգրքին pdf պատճէնը կարելի է ապահովել Կաթողիկոսութեան գրատան դիմելով, իսկ հնագոյն հատորոց լիակատար հաւաքածոյի պատճէնները կարելի է ամբողջութեամբ ներբեռնել Հայաստանի Ազգային Գրադարանի կայքէջի միջոցաւ:

Պիտի ուզէի Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին այսու որդիաբար իմ ջերմ շնորհաւորութիւններս եւ խնդակցութիւններս արտայայտել այս իրագործման համար, ինչպէս նաեւ սրտանց բարեմաղթութիւններս Հասկ Հայագիտական Տարեգիրքի ապագայ ընթացից եւ յետագայի նորանոր նուաճմանց համար:

Տողերս գրելով Հոկտեմբերի սկիզբը, սրտի կսկիծով եւ խոր մտահոգութեամբ կը հետեւիմ ներկայ իրադարձութեանց, եւ Լիբանանի կրած յարձակմանց: Կ'աղօթեմ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աստուածահաճոյ եւ ազգանուէր առաքելութիւնը ըստ կարելոյն զերծ մնայ վտանգներէ ու վնասէ, եւ այդ առաքելութեան մէջ իր կարեւոր դերը ունեցող Հասկ Հայագիտականի յառաջիկայ հրատարակութիւնները եւս անխափան ու անկաշկանդ յառաջանան՝ կամօքն նախախնամութեան:

ԴՐ. ՀԱՅԿ ՍՐԿ. ԻԻԹԻԻՃԵԱՆ



ՅՕԴՈՒԱԾ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՊԱԶԳԱՅՆԱՑՆԵԼՈՒ ԼԿՐՏՈՒՄԸ

Սիմոն Վրացեան¹, Ա.Մ. Նահանգներ կատարած իր շրջագայութենէն վերադարձին, 1955 թուին, «Ակոս»ի (Պէյրուս) մէջ, «Ականջ, միտք ու կամք ունեցողներու համար»՝ «Հայապահպանութեան Հարցեր» խորագրով կը ստորագրէ յօդուած մը, որ ուսանելի է ե՛լ այսօր: Ա.Մ. Նահանգներու Հայ համայնքի մասին իր կատարած քննարկումներու ու դատողութիւններու ծիրէն ներս իր ուշադրութիւնը կը սեւեռէ տեղի Հայ եկեղեցական երեք համայնքներու իրավիճակին ու կ'զգրակացնէ. «Հայոց ազգային եկեղեցին՝ պառակտուած եւ պառակտումի աղբիւր, հոգեւորականութիւնը, մեծ մասով, կա՛մ տգէտ ու շահամոլ, կամ միտքով ծոյլ, աշխարհիկ հաճոյքներու ետեւէ է. նոր հորենացի մը պէտք է Հայոց եկեղեցիի անկումը ողբալու համար»: «...Մխիթարեանները կարող էին նախախնամական գործ կատարել – կ'ուզէին կատարել – բայց կաթոլիկ կղերի շար նախանձը թոյլ շտուաւ, որ Վենետիկեաններու ամերիկահայ ճեմարան բանալու փափաքը իրականութիւն դառնայ»: «Ամերիկահայ բողոքական եկեղեցիի մասին խօսիլն իսկ անիմաստ է: Հայ բողոքականութիւնը Ամերիկայի մէջ ապազգայնացման աղբիւր է»²:

Թէ ինչու առանց պատճառաբանուած մեղադրանքի այսքան բիրտ եւ անողոք է Ս. Վրացեանի դատավճիռը «Հայ Բողոքական Եկեղեցի»ի հանդէպ, դժուար է ճշդել, եթէ մինչեւ իսկ «Հայ Բողոքական Եկեղեցի»ի (բայց ոչ միայն, այլ եւ՝ Հայ Առաքելական եւ Հայ Կաթոլիկէ) կեանքին մէջ ազգային ճակատի վրայ նահանջի ճամբայ հարթող մտայնութիւններու ու կենսամբռնումի բացայայտ իրողութիւնը տակաւին նմանօրինակ եզրակացութիւն մը քաջալերելու բաւարար պատճառ չէ: 1918 թուին, «Հայ Բողոքական Եկեղեցի»ի կազմաւորած ու հիմնադրած Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան արդէն կէս դարու ազգային լայնածաւալ գործունէութիւնն ու ծառայութիւնը

¹ Սիմոն Վրացեան (1882-1969) - Ազգային, հասարակական, քաղաքական գործիչ, խմբագիր, մանկավարժ: 1906 թուին՝ շրջանաւարտ «Գեորգեան» ճեմարանէն. 1908-1910՝ ուսանող Սէն Փիթըրսպուրկի Համալսարանին: 1920 թուին Նոյեմբեր - 2 Դեկտեմբերի 1920 թուական՝ Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ. 1951-1969 թուականներուն՝ Պէյրուս, Համազգայինի «Նշան Փալանճեան» ճեմարանի Տնօրէն: Իր գրչին կը պատկանի «Հայաստանի Հանրապետութիւն» (1928) ծաւալուն աշխատասիրութիւնը:

² «Ակոս» (Պէյրուս), Մարտ-Ապրիլ, 1955, էջ 63:

գէթ մտածել պիտի տար Ս. Վրացեանին նմանօրինակ դատավճիռ մը արձակելէ առաջ:

Եկեղեցական ճակատի վրայ հարցը այլ տեղ է. Միսիոնարութիւններու ապագային աւետարանչութեան ունկնդի՞ր, թէ՞ ինքնաբոյս՝ Հայ եկեղեցին իր ազգային էութենէն պարպելու նկրտող աստուածաբանութիւն մը սկսած էր մշակուիլ Հայ Աւետարանական ու Հայ Առաքելական «աստուածաբան»ներու կողմէ, որ կը խոստանար Հայ եկեղեցին՝ իրեն վստահուած քրիստոնէական անմնացորդ բնոյթի «ճշմարիտ» առաքելութեան մէջ տեսնել:

Վերոյիշեալ իրողութիւնը քննական ակնարկով սերտելու մեր փորձը կ'առաջնորդուի տուեալ հարցին առնչուող՝ մեր տրամադրութեան տակ եղող աղբիւրներու ժամանակագրական դասաւորումով:

Լէոն Արփի³, որուն կը պարտինք Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիի կազմաւորման 100-ամեակին նուիրուած գիտական ուսումնասիրութիւն մը, աշխատասիրութեան «Յետոյ Ի՞նչ» խորագիրը կրող 9-րդ գլուխին մէջ կը գրէ. «Բայց այս երկրին՝ [Ա.Մ. Նահանգներու] մէջ Բողոքական Հայեր կարիքը շունին համաձուլման սպասելու: Անոնք մինչեւ իսկ աւելի լաւ ապագայ մը ունին: Եթէ հարեւանութեան մէջ [տարբեր] ցեղերու [պատկան] համայնքներ կան, որոնք ընդհանրապէս հակամէտ են Հայոց հետ բարեկամանալու, ինչպէս հրեաներն ու հարաւային երոպացիները, որոնք [պատրաստ են] քրիստոնէանալու եւ ամերիկանանալու, Հայ Բողոքական Եկեղեցի մը լաւագոյնս գիտէ իբրեւ միջնորդ ծառայելու [անոնց] ամերիկանանալուն, քանի որ մենք՝ [Հայերս], այդ գծով քիչ մը աւելի առաջացած ենք ուրիշ ցեղային հաւաքականութիւններէ»⁴:

Ու քանի մը էջ անդին, հեղինակը իր առաջարկին բարեյաջող ընթացք տալու համար կը թելադրէ. «Ա.Մ. Նահանգներու մէջ մեր՝ [Հայ Աւետարանական] թեմական գործին մէջ ամերիկեան եկեղեցիներ եւ հովիւներ պէտք է հրաւիրել իբրեւ յարանուանական ու տեղական խորհրդատուներ եւ օգնականներ»⁵:

Մեկնաբանութեան կարիք ունի՞ Լէոն Արփիի տեսութիւնը, որ իրեն համար հաստատուած կարծիք է, թէ՞ Հայ Աւետարանականներ «համաձուլման՝

³ Լէոն Արփի (1877-1947) - Ծնած է Պարտիզակ, ուր իր հայրը Հայ Աւետ. Եկեղեցիի հովիւ էր: 1896 թուին շրջանաւարտ՝ Ռոպրթ Գոլէճէն: Ընտանեօք կը տեղափոխուի Ա.Մ. Նահանգներ, 1900 թուին շրջանաւարտ՝ Օպրըն Աստուածաբանական Ճեմարանէն: Հովուական պաշտօնով ծառայած է ամերիկեան Երիցական եկեղեցիներուն: Իր գրչին կը պատկանին “The Armenian Awakening” (1909), “The Atonement in Experience” (1932), “A History of Armenian Christianity From The Beginning to Our Time” (1946), “A Century of Armenian Protestantism” (1946) աշխատասիրութիւնները:

⁴ Leon Arpee, A Century of Armenian Protestantism 1846-1946, New York, 1946, p. 93.

⁵ Նոյնը, էջ 95:

[(ամերիկանանալու)] սպասելու կարիք չունին», քանի որ անոնք ո՛չ միայն արդեն իսկ համաձուլման ընթացքի մէջ առաջացած են, այլ եւ ժամանակ է որ միջնորդի պաշտօն ստանձնեն իրենց հետ «բարեկամանալու հակամէտ» հրեաներն ու հարաւային եւրոպացիները քրիստոնէական հաւատքին բերելու եւ ամերիկանացնելու: Թէ ովքե՞ր են այս «հարաւային եւրոպացիները», կը մնայ անորոշ, բայց հրեաները...«Հայոց հետ բարեկամանալու հակամէտ...»: Լէոն Արփի անգիտա՞կ է, թէ՞ անգիտակ կը ձեւանայ որ հրեաներ իրենց պատմութեան ամբողջ տեւողութեան հակառակորդի թշնամական դիրքի վրայ եղած են Հայոց հանդէպ, թէ հրեաներ, Թալէաթի եւ Երիտասարդ Թուրքերու հետ ծրագրած ու գործակցած են՝ իրագործելու համար Հայոց Յեղասպանութիւնը⁶: Ու եթէ Լէոն Արփի աչքերը բանար, պիտի տեսնէր թէ տակաւին 20-րդ դարու վերջերուն ու մինչեւ այսօր, հրեաներ, Երուսաղէմի փողոցներուն մէջ Հայ եկեղեցականներու մօրուք կը փետտեն, լանջախաչ կը քաշեն՝ գետին նետելու, երեսին կը թքեն, բարձրաձայն կը նախատեն ու կ'անպատուեն, եւ այսօր, ազերիներու զինակից՝ Արցախ կը բռնագրաւեն: Այս հրեաները բարեկա՞մ...:

Ու Լէոն Արփիի «քրիստոնէական» թանկագին խրատը Հայ Աւետարանականներուն՝ եթէ անկարող էք առանձինն իրականացնել ձեզմէ ակնկալուած պաշտօնը, օգնութեան կանչեցէք ամերիկեան եկեղեցիներու քարոզիչները...:

Ո՞վ է Հայ եկեղեցին եւ Հայ ժողովուրդը ապագայնացնելու հրաւէր տուողը, եւ ինչո՞ւ է հրաւէրը...:

Հայ Եկեղեցիի ապագայնացման քարոզչութեան մեծ հոռետորը՝ Վեր. Դոկտ. Յակոբ Ա. Չագմագճեան⁷ է, որ պահանջատիրական ոճով՝ «պէտք է» կը հրամանագրէ. «Ինչպէս [Հայ] Առաքելական եկեղեցիի պարագային, նոյնպէս Հայ Բողոքական եկեղեցին պէտք է 'ապագայնանայ', երբ հարազատօրէն կը պահէ իր հոգեւոր շարժառիթները: Կը նշանակէ՝ ան պէտք է ճաննայ իր գերագային բնոյթը եւ ըլլայ եկեղեցին բոլոր անոնց, որոնք կը դաւանին

⁶ Տես՝ Ջոն Կիրակոսեան, *Երիտթուրքերը Պատմութեան Դատաստանի Առաջ*, Երևան, 1982, էջ 228-245:

⁷ Վեր. Դոկտ. Յակոբ Ա. Չագմագճեան (1900-1996) - Ծնած է Տարսոն, շրջանաւարտ՝ տեղի Ս. Պողոս Գոլէճէն, ապա՝ Աղեքսանդրիայի (Եգիպտոս) Ամերիկեան Առեւտրական Գոլէճէն (1918 թ.), 1928 թուին կը մեկնի Աթէնք, ուր ուսանող է Կրօնի Վարժարանին, ուրկէ շրջանաւարտ (1931 թ.), հովուական պաշտօնով կը ծառայէ Քէսայ, Հալէպ: Կը տեղափոխուի Ա.Ս. Նահանգներ, ուր կը շարունակէ իր համալսարանական ուսումն ու հովուական ծառայութիւնը. հոս, շրջանաւարտ է Հարթֆըրտ Աստուածաբանական Ճեմարանէն եւ ապա՝ Պըրքլիի Կրօնի Խաղաղականի Դպրոցէն (1953 թ.): Իր գրչին կը պատկանին “Armenian Christology and Evangelization of Islam” (1965), “Armenian Evangelical Movement. Why Needed, Why Separated. An Inquiry” (1985) հատորները:

Քրիստոսը, ինչ ցեղի, ազգի եւ մշակույթի ալ ըլլան անոնք»⁸:

Ու ապա՝ կեդրոնանալով Հայց. Աւետ. եկեղեցիի անցնելիք ճանապարհին, Վեր. Դոկտ. Յ. Ա. Չագմաքճեան կը գրէ. «Բողոքական Հայ եկեղեցին պէտք է վերատեսուիթեան ենթարկէ իր վարդապետական աստուածաբանական կեցուածքը ու սրբագրէ ինչ որ կարիքը ունի սրբագրուելու, ինքզինք խզէ ազգայնական միտումներէ եւ շարժառիթներէ, մինչ հաւատարիմ կը մնայ քրիստոնէական հայրենասիրական [՝] հոգիին, ըլլալ Աւետարանական եկեղեցին բոլոր անոնց, որոնք կը փափաքին միանալ անոր, անկախ ազգութենէ, ցեղէ ու մշակույթէ...»⁹: Իր այս «քրիստոնէական գաղափարախօսութեան» իրաւական հիմք տալու համար, ան կը նախադրէ. «Թուրքիոյ մէջ հայկական կեանքի պատմութիւնը կրնա՞ր տարբեր ըլլալ, եթէ Բողոքական ռահվիրաները տեսիլքը ունենային նոր եկեղեցին [փոխանակ Հայց. Աւետ. եկեղեցի անուանելու], «Քրիստոսի Աւետարանական եկեղեցի», կամ՝ «Աւետարանական եկեղեցի» անուանէին, եւ սկիզբէն զայն նպատակադրէին ամէն ցեղի, ազգի ու դասակարգի»¹⁰:

Ու որպէսզի Վեր. Դոկտ. Յ. Ա. Չագմաքճեան վստահ ըլլայ թէ Հայ եկեղեցին ապագայնացնելու իր քարոզչութիւնը տեղ կը հասնի ու կ'իրականացնէ նպատակը, առաջին հերթին իրեն թիրախ կ'ընտրէ Հայ եկեղեցին Հայ եւ ազգային բնութագրող ու պահող հիմնաքարը՝ Հայ Լեզուն: Եւ ուրեմն ինչ՝

«Հնդունուած է որ մեր՝ [Հայ Աւետարանական] եկեղեցիներու մէջ մայրենի լեզուին՝ [(Հայերէնի)] գործածութիւնը կը նպաստէ հայկական ինքնութեան եւ մշակութային արժէքներու պահպանման, բայց մենք՝ [(Վեր. Դոկտ. Յ. Ա. Չագմաքճեան)], դժուար թէ համաձայնինք թէ լեզուն միաւորման ազդակ է տաղտղուած համանման հաւաքականութիւններու:

«Մեր համոզումն է որ մեր հայրերուն հաւատքն է, քրիստոնէական հաւատքը եւ Քրիստոսի սէրը որ մեզ կը կապէ իրարու՝ երբ մենք Ա.Մ. Նահանգներու մէջ անգլերէն կը խօսինք, Ֆրանսայի մէջ՝ Ֆրանսերէն, Միջին Արեւելքի մէջ՝ Արաբերէն, Լատին Ամերիկայի մէջ՝ Սպաներէն եւ Սթանպուլի մէջ՝ Թրքերէն եւ...այլ տեղեր»¹¹:

Ոչ ոք կը կասկածի ու հարցականի տակ կը դնէ քրիստոնէական ճշմարիտ հաւատքին ու Քրիստոսի սիրոյն դերակատարութիւնը՝ հաւատացեալները օղակապելու եւ իրենց կեանքը համատեղ հունով վարելու զգօնութեան մէջ: Բայց այդ հաւատքն ու սէրը ո՛չ թէ կը ստորադասեն լեզուն եւ անոր ազգային տիրական բնոյթը, այլ ընդհակառակը, կը գօտեպնդեն ու կը հովանաւորեն

⁸ Hagop A. Chakmakjian, *Armenian Christology...*, p. 127.
⁹ Նոյնը, էջ 129-130:
¹⁰ Նոյնը, էջ 127:
¹¹ Hagop A. Chakmakjian, *The Armenian Evangelical Movement...*, p. 57.

զայն՝ այդ հաւատքին ու սիրոյ Տիրոջ՝ Յիսուսի օրինակով, որ երբեք չհրաժարեցաւ իր մայրենիէն՝ արամերէնէն. ան այդ լեզուով խօսեցաւ իր Հօրը հետ, այդ լեզուով լացաւ իր հայրենի քաղաքին՝ Երուսաղէմի աւերումը, եւ իբրեւ ընդդիմադիր, այդ լեզուով պայքարեցաւ Հռոմի տիրակալութեան դէմ:

Դժբախտաբար շատ միամիտ է Վեր. Դոկտ. Յ. Ա. Չագմաքճեանի լեզուի մասին ունեցած հասկացողութիւնը: Ան լեզուն բովանդակող կամ է իր ազգային էութենէն եւ ազգային մշակութային առաքելութենէն, ու վերածած հաղորդակցութեան սովորական, անդիմազիծ գործիքի մը, զոր որեւէ սահմանազուխի վրայ կարելի է շարտել մէկդի ու գնել նորը՝ գործածելու մինչեւ յաջորդ սահմանազուխ:

Լեզուն «միաւորման [առաջին] ազդակն» է տարտղնուած կամ ոչ ազգի մը զաւակներուն: Թէ Վեր. Դոկտ. Յ. Ա. Չագմաքճեան «դժուար թէ համաձայնի» այս իրողութեան, այդ իր կարծիքն է, եւ առհասարակ իր համաձայնութիւնը խնդրող չկայ:

Լեզուն ժողովուրդն է, ազգն է, հայրենիքն է:

Թող մեծերը խօսին.

Ժընեւի Համալսարանի շրջանաւարտ, Հայաստանի Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս, մեծանուն վիպասան՝ Դերենիկ Դեմիրճեան, «Մայրենի Լեզուի Նշանակութիւնը» խորագրով կը գրէ. «Հայ լեզուն Հայ ժողովուրդի լեզուն է: 2500 տարի Հայ ժողովուրդը խօսել է այդ լեզուով, աշխատել, ստեղծագործել, պայքարել, կռուել այդ լեզուով, սերունդէ-սերունդ աւանդ է թողել այդ լեզուն, արեան մէջ լողացել է՝ պաշտպանելով այդ լեզուն եւ յանձնել մեր սերունդին»¹²:

Իսկ վաստակաշատ, հռչականուն վիպասան՝ Ստեփան Զօրեանի հասցէագրած նամակի մը մէջ Դ. Դեմիրճեան կը գրէ. «“Դէպի Երկիր”, ահա մեր նշանաբանը, սա նշանակում է դէպի հայոց լեզու»¹³:

«“Դէպի Երկիր” նշանակում է դէպի Հայոց Լեզու», քանի որ Հայ ժողովուրդի հանճարեղ զակին՝ Աւետիք Իսահակեանի բառերով՝ «Հայրենիքը լեզուն է. նա է միացնում անցեալն ու ներկան, ապագան, մեռածն ու ապրողը, ծնունդը. նա է յաւերժացնում ազգը, շտեմարանում ազգի հոգեկան գանձերը»¹⁴, որ նշանակէ՝ մայրենիէն գիտակցաբար հրաժարիլը համազօր է ազգ ու հայրենիք ուրանալուն:

Փրոֆ. Վիգէն Կիրոյեան¹⁵, Առաքելական եկեղեցիի զաւակ, իր սերտողու-

¹² Դերենիկ Դեմիրճեան, *Անձանօթ Էջեր*, Երևան, 1974, էջ 187:

¹³ Նոյնը, էջ 252:

¹⁴ Աւետիք Իսահակեան, *Հայկական Հարց*, Երևան, 2005, էջ 68:

¹⁵ Վիգէն Կիրոյեան (ծն. 1948) – Ծնած է Նիւ Եորք, 1970 թուին շրջանաւարտ՝ Վրճինիա Համալսարանէն, կը ծառայէ ամերիկեան բանակին: 1978 թուին կը ստանայ դոկտորա-

Թիւնը կեդրոնացնելով Ա.Մ. Նահանգներու Հայ համայնքի նոր սերունդներուն ճակատագրուած ազգային կեանքին ու Հայ եկեղեցիի ազգային-կրօնական առաքելութեան, հակամէտ քրիստոնէական կրօնի գերազգային բնոյթին, կը փորձէ Սփիւռքեան Հայ եկեղեցիի ինքնութիւնն ու առաքելութիւնը սահմանել: Այս առնչութեամբ արժէ քննադատական մօտեցումով սերտել ու գնահատել իր «Հաւատք, Եկեղեցի, Առաքելութիւն» աշխատասիրութիւնը, որ մասնագէտ աստուածաբան ուսանողի մը պարտականութիւնը պիտի ըլլայ: Մենք հոս կ'ուրուագծենք միայն անմիջականօրէն մեզ հետաքրքրող մէկ քանի հարցեր:

Փրոֆ. Վ. Կիւրոյեան նախ կը պատկերացնէ այն յուսախաբ պայքարը, զոր Սփիւռքեան Հայ եկեղեցին եւ աշխարհական ղեկավար մարմինները կը մղեն նոր սերունդը Հայ պահելու: Ահա թէ ինչ. «Ու դեռ որքան յաճախ մէկը կը լսէ պատճառաբանութիւնը, թէ՛ եթէ Հայեր միայն Հայերէնի գործածութիւնը պահեն [եկեղեցիի] ծիսակատարութեան մէջ, Հայերէն սորվեցնեն իրենց երիտասարդներուն, յաւերժացնեն իտէալականացած ասմունքը Ս. Վարդանանց օրուան՝ անցեալ փառապանծ Հայաստանի մասին, շարունակեն ուտել ճիշդ [հայկական] ճաշերը, պարեն ճիշդ [հայկական] պարերը, անոնք կրնան պահել կամ վերստեղծել այնպիսի կառոյց մը ճիշդ մէջտեղը այդ օտար ընկերութեան, ուր Հայ-ամերիկացիներ կը սպառեն իրենց գրեթէ ամբողջ արթուն եւ քուն ժամերը, որոնց մէջ անոնք կ'աշխատին, կը խաղան, դպրոց կ'երթան, կ'ընկերակցին, եւ որուն վրայ անոնք կ'ապաւինին անհրաժեշտ տեղեկութեան, իրերու եւ ծառայութեան համար...»¹⁶:

Ինչո՞ւ քողարկուած այս հեզնանքը հայապահպանման համար մղուած՝ թէկուզ անբաւարար պայքարին: Եւ ի՞նչ, եթէ Հայ եկեղեցին իր ծիսակատարութիւնը Անգլերէնով կատարէ, Ա.Մ. Նահանգներու քաղաքացի հայը աւելի՞ ջերմեռանդ քրիստոնէայ եղած ըլլալ կը խոստովանի:

Ինչո՞ւ հեզնանքը Հայ լեզուին, Վարդանանցին եւ «անցեալ փառապանծ Հայաստան»ի հանդէպ: Բայց ո՞ւր է Հայ Դպրոցը – «Հայերէն սորվեցնելը» ու-

կանի վկայականը Տրիւ Համալսարանէն, գիտական ղեկավար ունենալով հրեայ աստուածաբան ու փիլիսոփայ՝ Ուիլ Հըրպըրկը: Մասնագիտութիւնը կը կեդրոնանայ Ա.Մ. Նահանգներու Արեւելեան եւ Արեւելեան Օրթոտոքս եկեղեցիներու Քրիստոնէութեան մեկնաբանութեան: 1981-2008 թուականներուն Աստուածաբանութեան ու Բարոյագիտութեան դասախօս՝ Մէյրի-Լենտի Լօյօլա Համալսարանի: Շրջան մը դասախօսած է Ս. Ներսէս Աստուածաբանական Ճեմարանի մէջ (Նիւ Եորք), ուր նաեւ տնօրինած է կրթական ծրագիրը: Հեղինակ է աւելի քան տասը աշխատասիրութիւններու, նուիրուած աստուածաբանութեան, բարոյագիտութեան եւ ընկերային հարցերու: Ան նաեւ մեծ վաստակ ունի մանկական գրականութեան մարզէն ներս:

¹⁶ Vigen Guroian, Faith, Church, Mission. Essays for Renewal in the Armenian Church, New York, 1995, p. 22.

րիշ, Հայ Դպրոց պահելը ուրիշ -, որուն անհրաժեշտութեան եւ առաքելութեան մասին ոչ մէկ ակնարկութիւն ունի Փրոֆ. Վ. Կիւրոյեան: Ան ոչ իսկ հարց կու տայ թէ ինչո՞ւ Ա.Մ. Նահանգներու Հայ համայնքը բազմատասնեակ ամէնօրեայ Հայ Դպրոցի դռներ չբացաւ: Դրա՞մը կը պակսէր. «Մասնագէտներ կ'ըսեն թէ միայն Ա.Մ. Նահանգներու մէջ նուազագոյնը 3000 Հայ միլիոնատէրեր կան»¹⁷: Երեք հազարը երեք հարիւր Հայ դպրոց չէ՞ր կրնար հովանաւորել: Դժբախտաբար, տիրող նահանջին ի տես, Փրոֆ. Վ. Կիւրոյեան գոհունակութեամբ գետին կը պատրաստէ իր եզրակացութիւններուն իրաւութիւնը հաստատելու:

Քիչ անդին Փրոֆ. Վ. Կիւրոյեան կը գրէ. Արամ Արք. Քէշիշեան (այժմ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) 1978 թուին հրատարակած իր աշխատասիրութեան՝ «Հայ եկեղեցիի Վկայութիւնը Սփիւռքի Մէջ» (The Witness of the Armenian Church in Diaspora) մէջ «կ'ընդգծէ, թէ՛ Սփիւռքի աստուածաբանութիւնը անհրաժեշտաբար գոյապահպանման աստուածաբանութիւն մըն է: Ապա ան կը շարունակէ սահմանել այս գոյապահպանումը որպէս “շարունակական փորձ վերագտնելու ու վերամեկնաբանելու Ազգին բնութագիրը”»: Գուցէ այսպիսի հաստատում մը տրամաբանական է որոշ Միջին Արեւելեան պարագաներու, որոնց շատ աւելի ծանօթ է Քէշիշեան Արք., քան ես»: Փորձելով մեկնաբանել Արամ Արք. Քէշիշեանի եկեղեցաբանական-աստուածաբանական տեսութիւնը, Փրոֆ.ը կ'եզրակացնէ. «Ազգը պէտք չէ միաւորուի քրիստոնէական նախադրեալներու վրայ: Եկեղեցին անխուսափելիօրէն կը գտնէ թէ՛ որպէսզի կարենայ խորհրդաւոր ազգը կենդանի պահել, ան պէտք է ստորադասէ իր քրիստոնէական վկայութիւնը՝ մշակութային գործունէութիւններու եւ քաղաքական նախադրեալ ծրագիրներու, հեռու՝ աղօթքէ ու պաշտամունքէ, որոնցմով ան սահմանափակուած է որպէս եկեղեցի»¹⁸:

Բայց մինչ իր այս եզրակացութիւնը, Փրոֆ. Վ. Կիւրոյեան յայտարարած էր թէ եկեղեցին երբ «սուրբ» է, ու երբ չէ:

«Ոչ մէկ եկեղեցի սուրբ է, Ընդհանրական թէ Առաքելական, եթէ ան այնպէս սահմանուած է, եւ եթէ իր ուժերը սահմանափակուած են ցեղային եւ ազգային տենչանքներու»¹⁹:

Քանի որ՝ «եթէ հոս, Հիւսիսային Ամերիկայի [(Ա.Մ. Նահանգներու եւ Գանատա)] Հայ եկեղեցիի տաղտղնուած համայնքները շարունակեն իրենց մասին մտածել որպէս հիմնօրէն Սփիւռքի, Հայ եկեղեցին հետզհետէ անկարող պիտի ըլլայ վերաբերիլ որպէս եկեղեցի, եւ հետզհետէ անիմաստ՝ մար-

¹⁷ Krikor Halebian, *The Armenian Church in Context*, Los Angeles, 1996, p. 64.

¹⁸ Vigen Guroian, *Faith...*, p. 27.

¹⁹ Նոյնը, էջ 23:

դոց համար, որոնք իրենց կեանքին Ս. Գրային կրօնական իմաստ կը փնտրուեն»²⁰:

Փրոֆ. Վ. Կիրոյեան պիտի յիշէ թէ բարեգործութիւնը տունէն կը սկսի, ինչպէս ե՛ւ Քրիստոնէութեան բազմաբովանդակ քարոզչութիւնը: Կրնա՞յ ըլլալ որ Փրոֆ.ը կը հաւատայ թէ Քրիստոս իր քարոզչութիւնը Ֆրանսայի, Բրիտանիոյ եւ Ամերիկայի մէջ սկսաւ ու ապա վերադարձաւ Պաղեստին-Հրէաստան՝ իր ժողովուրդին աւետարանելու: Եւ ի՞նչ է այդ «Ս. Գրային կրօնական իմաստը, [զոր մարդիկ] կը փորձեն փնտրել» եկեղեցիին մէջ: Աստուածաշունչի (Հին ու Նոր Կտակարան) մէջ կա՞յ էջ մը, ուր Երկիր մոլորակի հողին վրայ ապրող մարդուն ամէնօրեայ ազգային, քաղաքական, տնտեսական, մշակութային, ընկերային ու բարոյական հարցերը չեն արծարծուած, ու այդ բոլորին՝ հաւատքի ճամբով պատասխան լուծում չէ առաջադրուած: Ի՞նչ «Ս. Գրային»ի մասին է Փրոֆ. Վ. Կիրոյեանի խօսքը: Եկեղեցին՝ գեր-Երկիր՝ մոլորակի տաճարն ու հաւաքավայրն է:

Հայ եկեղեցիի ապազգայնացման եթէ ոչ ուղղակի քարոզչութիւնը, բայց մտայնութեան սնուցումը կը կատարուէր միսիոնարներու աւետարանչութեան նպատակադրուածութեամբ ու ոճով: «Արեւմտեան միսիոնարութիւնները, որոնց գործունէութեան արդիւնքն էին Բողոքական եկեղեցիները, իրենց հերթին ծնունդն էին Ա.Մ. Նահանգներու մէջ բարեպաշտական եւ արթնութեան քարոզչութեան արշաւին: Արեւմտեան բարեպաշտութիւնը եւ ապաշխարութեան քարոզչութիւնը եկեղեցիին մէջ շեշտը չի դնէր աստուածաբանութեան, աստուածաբանական մտածողութեան եւ ուղղափառութեան [(ուղղահաւատութեան)] վրայ: Անոնք կը շեշտեն կարեւորութիւնը հոգեւոր փորձառութեամբ “ապաշխարութեան” եւ անձնական կառչածութիւնը Աստուածաշունչին, որպէս գերագոյն հեղինակութիւն կեանքին ու հաւատքին: Աստուածաբանական դաստիարակութիւնը պարզապէս ըմբռնուած էր որպէս ամբողջական գիտութիւնը Աստուածաշունչին եւ ձեռքբերումը քարոզչութեան եւ աւետարանչութեան համար որոշ հմտութիւններու»²¹:

Հաւատացեալը Աստուածաշունչի պարագիծէն դուրս չբերելու քարոզչական քաղաքականութիւնը, ու յատկապէս Աստուածաշունչի՝ մարդկային հանուր կեանքի բոլոր բնագաւառներուն հետ սերտօրէն առնչուած եւ անոր ուղեցոյց ըլլալը «ապաշխարեցէք»ի քարոզութեամբ սքօղելը, ապազգայնացման քարոզչութիւն է: Աստուածաբանութիւնը առաքելութիւն պիտի ունենայ Քրիստոսի վարդապետութիւնը կեանքին առնչելու, ապրելակերպի ուղղութիւն մշակելու, կրօնքին ծրագրային նպատակ ներշնչելու, այլապէս, աստուածաբանութիւնը սին ճամարտականութեան կը վերածուի:

²⁰ Նոյնը, էջ 25:

²¹ George Sabra, *The Challenges of Theological Education in the Middle East*, “International Review of Mission” January, 2000 p. 74.

Որոշ միսիոնարութիւններ նաեւ տխուր դերակատարութեան մէջ էին, ահա թէ ինչու Վեր. Դոկտ. Հապիպ Պատր կը գրէ. «Մէկը նաեւ պէտք է խոստովանի թէ 19-րդ Դարու վերջերէն սկսած, որոշ Բողոքական առաքելութիւններ, տարբեր շարժառիթներով հաստատօրէն շփոթած են ու զուգակցած Աւետարանի քարոզչութիւնը Արեւմտեան յատուկ քաղաքական գաղափարախօսական կանխակալ ենթադրութիւններ փոխանցելու հետ՝ յարաբերուած Հին ու Նոր Աւետարաններու մեկնաբանութեան: Մշակութային կայսերապաշտութեան կերպ մը հարկադրուած է»²²:

Միսիոնարներու այսօրինակ քարոզչութեան ունկնդիր, «Հայ պատուելիները» «խորթ» աչքով պիտի դիտարկէին 1894-1896 թուականներուն Համիտեան կոտորածներէն ետք Արեւմտահայաստան հասած գերմանացի միսիոնարներու «թունդ հայրենասիրութիւնը»: Երբ «Հայ պատուելիները տարիներով [միսիոնարներէն] լսած ու քարոզած էին՝ չարին չի հակառակիլ, մէկ երեսին զարնողին միւսը դարձնել, հայրենիքի անունը չիշել...», ահա՛ Մեզրէի (Խարբերդ) գերմանական որբանոցի Տնօրէն՝ Վեր. Եոհաննէս էհման «կը խօսի, կ'երագէ, կը գովէ իր հայրենիքը, նոյնիսկ կ'աղօթէ անոր յաղթանակին համար...»²³:

Սակայն հարիւր տոկոսով պիտի չընդհանրացնել վերոնշեալ միսիոնարութիւններու եւ միսիոնարներու ապագային քարոզչութեան բնութագրումը: Առանձնապէս առաջին սերունդի միսիոնարներէն շատեր ու նաեւ աւելի ուշ եկողներէն կարելոր թիւ կը հաշուեն անոնք, որոնք Հայու մը չափ ու երբեմն աւելի Հայ եղած են, ու քանիներ՝ Յեղասպանութեան օրերու բռնագաղթի ճամբաներու վրայ ընկերակցած գաղթի կարաւաններուն:

Ապագայնացման քարոզչութեան գլխաւոր արդարացումներէն մէկը՝ Քրիստոնէութեան շնորհուած գերազգային ըլլալու հասկացողութիւնն է, որ զուրկ է որեւէ տրամաբանութենէ, եւ հեռու՝ Քրիստոնէութեան՝ աստուածաշնորհ բազմաբնոյթ ծառայութեան հրաւիրուած ըլլալու պատմական իրողութենէն: Այս իսկ պատճառով Գերազգայինը իր առաքելութիւնն ու ծառայութիւնը իրագործելու համար պիտի իջնէ Ազգայինին, որ կը նշանակէ՝ հասնի ազգին եւ ազգերուն:

Գերազգայինը ինքն իր մէջ կը կրէ Ազգայինը, ահա թէ ինչու անկարելի է Ազգայինը տարանջատել Գերազգայինէն: Եկեղեցիի հաւատքին ու վարդապետութեան Տէրը՝ Յիսուս, բնաւ չանտեսեց ու չմոռցաւ իր ազգը, անոր հողը, ժառանգութիւնը, աւանդութիւններն ու մշակոյթը, ու լեզուն՝ առանձնապէս:

²² Habib Badr, The Protestant Evangelical Community in the Middle East. Impact on Cultural and Social Developments, "International Review..." January, 2000, p. 65.

²³ Յարութիւն Փէքմէզեան, Մի Գուցէ Մոռնանք, «Կռունկ» շաբաթաթերթ, Ֆիլատելֆիա (Ա.Մ.Ն.), 30 Օգոստոս, 1957:

Եթէ ժողովուրդ մը իր աշխարհագրական սահմաններուն մէջ դարերու պատմութեամբ ապրած ու կազմաւորուած հաւաքականութիւն է՝ իր սեփական լեզուով, ասանդութիւններով, մշակոյթով, կրօնական եւ ընկերային վարդապետութիւններով, ուրեմն Ազգ է, որուն ընդունած ու որդեգրած Գերազգայինը անպայման պիտի զգենու տուեալ ժողովուրդին ազգայինը: Զկայ գերազգային վարդապետութիւն, ինչ բնոյթ ու հաւատամք ալ ունենայ ան, որ ազգի տիրապետութեան սահմաններուն մէջ կարենայ խուսափիլ ազգին ազգային ոգին ու երանգը կրելէ:

Հայ ժողովուրդի Մայր եկեղեցին եթէ մինչեւ իսկ ունեցաւ իր սայթաքումները, բնաւ չընկրկեցաւ ապազգայինի քարոզչութեան նկրտումներուն դիմաց: Հայ եկեղեցին, ազգային մշակոյթի ամուր հիմերուն յենած՝ շարունակեց իր հաւատքի առաքելութիւնն ու ազգային ծառայութիւնը: Հայ եկեղեցիի աննահանջ ջատագով, մեծավաստակ գիտնական, Սարգարապատեան ճակատի հերոս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Գարեգին Ա. Յովսէփեան, Հոկտեմբերը Մշակոյթի Ամիս հռչակելու մասին, 18 Յուլիսի 1946 թուին կը գրէ. «Ճշմարիտ է, մարդու մէջ կայ բնազդը սիրելու ազգը, հայրենիքը, լեզուն, եկեղեցին, բայց նա դառնում է գործ, անձնուիրութիւն, նիւթական ու բարոյական ամէնաբարձր զոհողութիւն, երբ բոլորում է այդ խորը ու պայծառ գիտակցութիւնից, երբ նա գիտէ թէ ազգային մշակոյթը հիմքն է, գեղեցկութիւնը եւ բարձունքը այն կենդանի եւ յարահուն հաւաքականութեանը, որ ազգութիւն է կոչուում, կամ հայրենիք, լայն հասկացութեամբ»²⁴: Եւ այդ «լայն հասկացութեան» մէջ՝ Գերազգայինն ու Եկեղեցին:

Հայց. Աւետարանական եկեղեցին, առանձնապէս Ա.Մ. Նահանգներու մէջ, նահանջի պատմութեան էջեր արձանագրեց, ու յաճախ մնաց դիտողի դերին մէջ, բարեբախտաբար, սակայն, շկորսնցուց իր հիմնադիր հայրերուն ազգային ոգին եւ առաքելութիւնը: Եկեղեցիին ամէնէն հաւատաւոր ու կշռադատ դէմքերէն մէկը՝ Վեր. Ա. Ա. Պետիկեան, որուն խօսքին մէջ նահանջին ակնարկութիւնը կայ, կ'ըսէ. «Մենք պարզապէս որպէս “եկեղեցի մը” աճելու չենք, այլ աճելու ենք որպէս Հայ եկեղեցի»²⁵: Ու պատմական ակնարկով կը ճշգորոշէ դիրքը. որպէս Հայաստանեաց Աւետարանական եկեղեցի «իբր թէ յառաջդիմելու համար բարեկարգուեցանք: Պարզ խօսինք եւ շիտակ խօսինք: Բարեկարգուելու համար յետադիմելու ենք հիմա: Ոչ թէ քայլ մը առաջ, որ ըսել է քայլ մը արեւմտայնականութիւն, այլ քայլ մը ետ, դէպի ազգայնամտութիւն»²⁶, որ կը նշանակէ՝ հաւատարմութիւն Հայաստանեայցին:

²⁴ Գարեգին Ա. Յովսէփեան, *Փաստաթուղթերու Եւ Նիւթերու Ժողովածու*, Բ. Հատոր, կազմեց Գոհար Աւագեան, Անթիլիաս, 2017, էջ 687:

²⁵ History of the Armenian Evangelical Churches of North and South America, U.S.A., 2018, p. 40.

²⁶ Ա.Ա. Պետիկեան, *Հայ Բողոքական Եկեղեցիին Բարեկարգութիւնը*, «Հայաստանի Կոչնակ», 2 Մայիսի, 1936, էջ 422:

Քսաներորդ Դարու Հայ քրիստոնեայ մտքի պայծառ ներկայացուցիչներէն մէկը, քրիստոնէական դաստիարակութեան բազմավաստակ մշակ, Հայ Աւետ. համայնքի եւ ազգային մակարդակի վրայ խոհուն Առաջնորդ՝ Վեր. Յովհաննէս Փ. Ահարոնեան, կը ճշդէ. «Հայաստանեայց Աւետարանական եկեղեցիին գոյապատճառը՝ ազգային, քաղաքացիական, միջ-եկեղեցական, համայնքային, ընկերային, կրթական գետնի վրայ, Քրիստոսի անունով ծառայութեան գոյապատճառներէն տարբեր առաքելութիւն չի կրնար ունենալ, եթէ եկեղեցի է, եւ եկեղեցի՝ կ'ուզէ մնալ»²⁷:

Ապա նաեւ կը հաստատէ. «Հայաստանեայց Աւետարանական եկեղեցին, իր դաստիարակչական-աւետարանչական առաքելութեամբ՝ ազգապահպանումը իր գլխաւոր մտահոգութիւնը նկատած է» (ընդգծումը մեր կողմէ, Ե.Հ.Ք.)²⁸:

Եթէ գերազգայինի վարդապետական տեսութեամբ Հայ եկեղեցին ապագա-գայնացնել նկրտող քարոզչութիւնը կ'ապրի իր յուսախաբութիւնը, Սփիւռքի մէջ, Հայ եկեղեցին, դատած իր տեղակայած աշխարհագրական սահմանագիծէն, կը դիմագրաւէ իր զաւակներուն ապագայնացման ողբերգութիւնը, ուր եկեղեցին, եթէ մինչեւ իսկ գործօն ազգակ է իր ծիրէն ներս որոշ տոկոսով սահմանափակելու աղէտը, դժբախտաբար, Սփիւռքեան բազմաբնոյթ իրողութեանց եւ իրադարձութեանց պատճառով ստեղծուած կարծր իրադրութեան դէմ անկարող է նահանջին դէմ առանձինն անսասան թումբ կանգնել: Սփիւռքեան Հայու մտայնութեամբ, աշխարհաքաղաքացիի յաւակնոտ սնապարծութեամբ, ծուլութեամբ ու ժլատութեամբ, ե՛ւ այլասիրութեամբ դէմ-յանդիման ենք անխուսափելիին: Դար մը առաջ բարձրացած էր ահագանգը. «Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ, կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք կը նահանջենք բանիւ եւ գործով, կամայ թէ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»²⁹:

Ու մեղա՛յ, մեղա՛յ Մաշտոցին, մեղա՛յ, մեղա՛յ Հայ եկեղեցիին:

Զգաստանալու պահն է:

ՓՐՈՑ. ԴՈԿՏ. ԵՐՈՒԱՆԴ Հ. ՔԱՍՈՒՆԻ

²⁷ Վեր. Յովհ. Փ. Ահարոնեան, *Եղիցին Կամք Քո*, Պէյրուք, 2003, էջ 152:

²⁸ Նոյնը, էջ 156:

²⁹ Շահան Շահնուր, *Նահանջը Առանց Երգի*, Փարիզ, 1929, էջ 173:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ

Հրամանաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, լոյս տեսաւ «Ժամագիրք Ատենի»ն, մեկենասութեամբ Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմին: Հատորը 270 մեծ էջերու վրայ երկու սիւնակներու էջադրումով կը պարունակէ Հայ եկեղեցւոյ 7 ժամերգութիւնները, հրաժարումն ու Ս. Պատարագը:

ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՉԱՐԵՅ ԱՐՔ. ԱՉՆԱԻՈՐԵԱՆ



Հոգեւոյ Տ. Զարեհ Արք. Ազնաւորեանի վախճանման 20-ամեակի առիթով, հրամանաւ Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեանի, լոյս տեսաւ Զարեհ Արք. Ազնաւորեանի «Պատասխան Հաւատացեալի Հարցումներուն» գործը, խմբագրութեամբ Հոգշ Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեանի: Հատորը իրականացած է մեկենասութեամբ Մոնթեպելլոյի (Քալիֆորնիա) Ս. Խաչ Մայր Տաճարի ծուխին:

Քսանմէկ բաժիններէ բաղկացած հատորը հարց-պատասխանի ձեւին տակ, կ'արծարծէ Ս. Երրորդութեան, Աստուածածնի, Աստուածաշունչի, Խաչի, Յարութեան, երկրորդ դատաստանի, եկեղեցւոյ, Հաւատոյ Հանգանակի, սուրբերու եւ սրբութեան, հրեշտակներու, սատանայի, մահուան, դրախտի ու դժոխքի, Յայտնութեան գիրքի, կաթողիկէ եկեղեցւոյ եւ աղանդաւորական շարժումներու վերաբերեալ նիւթեր:

Զարեհ Սրբազան Հօր կենսագրականէն ետք, հատորը կը բացուի Սրբազան Հօր երկու խօսքով, ուր ան կը քաջալերէ հաւատացեալները հարցումներ ուղղելու Հայոց կրօնքին եւ հաւատքին մասին՝ այնպէս ինչպէս մե-

Ժահարուստ մարդ մը Յիսուսին ուղղած էր յաւիտենական կեանքի մասին հարցում մը: Ան կը հաստատէ, որ Աստուած գիտութեան Աստուածն է. Տէրը մեր մտքին վրայ վարագոյր չի քաշեր, այլ կ'ուզէ, որ պատռենք զայն, կը գրէ Սրբազան Հայրը իր խօսքին մէջ ու աւարտին յոյս կը յայտնէ, որ այս աշխատանքով ան կարողացած է հարցումներուն լաւագոյն կերպով պատասխանել:

Ապա կը կարդանք խմբագիրին՝ Հայր Աւետիքին յառաջաբանը, ուր կը բացատրէ սոյն աշխատանքին նախադրեալները եւ կարգ մը նշումներ կը կատարէ ձեռնարկած աշխատանքին վերաբերեալ:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆԸ
ԱՅՑԵԼԵՑ ՀՈԳԵՒՈՐ ՏԻՐՈՋ**

Ուրբաթ, 13 Սեպտեմբեր 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս այցելեց Ռաֆայել Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տիրոջ: Եղբայրական սիրոյ ու գործակցական ոգիի արտայայտութեան առընթեր, յիշեալ այցելութեան նպատակն էր ողջունել Կարտինալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեանի մարմնոյն Վատիկանէն Լիբանան փոխադրութեան նախաձեռնութիւնը:



Հանդիպումը առիթ հանդիսացաւ անդրադարձ կատարելու Երջանկայիշատակ Հոգեւոր Տիրոջ ծառայութեան՝ թէ՛ իբրեւ Վատիկանի Հաւատոյ Տարածման Բաժանմունքի Նախագահ եւ թէ՛ որպէս Հայ Կաթողիկ եկեղեցւոյ Պատրիարք: Ապա, խօսակցութիւնը կեդրոնացաւ Լիբանանի եւ Սուրիոյ Հայութեան առնչուած հարցերուն եւ Հայաստանի կացութեան վրայ:

Հանդիպման ընթացքին, Նորին Սրբութեան կողքին ներկայ էին Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Ս. Շահէ Արք. Փանոսեան եւ Միաբան Հայրեր, իսկ Հոգեւոր Տիրոջ կողքին՝ Գերապայծառներ եւ Հոգեւոր Հայրեր:

ՃԳՆԱԺԱՄ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ-ԻՍԼԱՄ ՀՈԳԵԻՈՐ ԱՐՏԱԿԱՐԳ ՎԵՅԱԺՈՂՈՎ

Չորեքշաբթի, 16 Հոկտեմբեր 2024-ին, Մարտինիթ եկեղեցույ կեդրոնատեղի՝ Պքէրքէի մէջ գումարուեցաւ Քրիստոնեայ-Իսլամ Հոգեւոր արտակարգ վեհաժողով, որուն սկիզբը Մարտիններու Ռայի Պատրիարքը խօսք մը արտասանելով՝ յայտնեց, որ լիբանանեան տազնապը անհրաժեշտ է դիմագրաւել միասնակամ ճիգերով: Խօսք առին նաեւ ներկայ Հոգեւոր Պետերէն ոմանք, որոնք նոյնպէս ընդգծեցին միասնաբար դարմանելու Լիբանանի կրած ողբերգութիւնը:

Նշենք, որ վեհաժողովէն քանի մը օր առաջ, Մարտինիթ Պատրիարքը, որ նախաձեռնողը եղաւ յիշեալ հաւաքին, հեռաձայնային հաղորդակցութեամբ կապ հաստատեց Արամ Ա. Կաթողիկոսին հետ, որ օրերս հովուապետական այցելութեամբ կը գտնուի Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Հայոց Թեմ, եւ խորհրդակցեցաւ վեհաժողովին կողմէ հրապարակելի յայտարարութեան շուրջ:

Յայտնենք, որ վեհաժողովին Նորին Սրբութիւնը ներկայացուց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան:



Վեհաժողովի աւարտին հրապարակուեցաւ յայտարարութիւն մը, ուր ըսուած է, թէ իսրայէլեան բարբարոս յարձակումը կը թիրախաւորէ ամբողջ Լիբանանն ու բոլոր լիբանանցիներուն արժանապատուութիւնը, «եւ լիբանանցիները իրենց միասնականութեամբ, զօրակցութեամբ եւ իրենց հողին ու հայրենիքին կառչածութեամբ կրնան տոկալ ու ետ մղել թշնամին՝ շեշտելով, որ Լիբանանի մէջ լուծումները պիտի ըլլան ու պէտք է որ ըլլան միայն միասնական ազգային լուծումներու ճամբով, որոնք հիմնուած են լիբանանեան սահմանադրութեան, Թաէֆի համաձայնութեան, լիբանանեան պետութեան ու անոր միակ իշխանութեան, անոր ազատ որոշումներուն, հայրենիքի ու ազգային գերիշխանութեան պաշտպանութեան անոր պատասխանատու դերին եւ իր ժողովուրդին, անոր անվտանգութեան, կայունութեան ու բարգաւաճման երաշխաւորման կառչելուն վրայ»:

Ինչ կը վերաբերի հաղորդագրութեան, ապա վեհաժողովը նախ եւ առաջ կոչ ուղղեց՝ Մ.Ա.Կ.ի Ապահովութեան Խորհուրդը անմիջապէս հրաւիրելու ժողովի՝ զինադադարի հաստատման վճռական որոշում որդեգրելու եւ դադրեցնելու Լիբանանի դէմ գործուող ջարդը:

Երկրորդ՝ բոլոր լիբանանցիներուն կոչ ուղղեց՝ «փրկելու իրենց հայրենիքը, որովհետեւ ներկայ պահը ամուլ վէճի պահը չէ, պահանջներու եւ շահերու ապահովման պահը չէ: Ներկայ պահը փաստելու համար է մեր միասնական լիբանանցիներ ըլլալու կարողութիւնը եւ այս հայրենիքին պատկանելու արժանի ըլլալը: Ներկայ պահը փոխ-հասկացողութեան, համագործակցութեան եւ միախմբուելու պահն է, որովհետեւ լիբանանեան գոյացութիւնը վտանգներու եւ կորսուելու վտանգի ենթակայ է, որովհետեւ թշնամիին ախորժակները անսահման են, թէ՛ ժամանակի, թէ՛ վայրի առումով: Այժմ պահը Լիբանանը փրկելու համար զոհողութիւն կատարելու պահն է, զօրակցութեան պահն է, թեւ-թիկունք կանգնելու եւ միասնութեան պահն է: Պէտք է ամրապնդենք իրարու նկատմամբ վստահութիւնը եւ գործակցինք կառուցելու համար կարող ու արդար պետութիւնը, ամրապնդենք անոր հաստատութիւնները, որպէսզի լիբանանցի ժողովուրդի միասնականութիւնը մնայ ամէնէն ուժեղ զէնքը՝ պաշտպանելու Լիբանանը եւ հաստատելու անոր ազատութեան, անկախութեան ու գերիշխանութեան իրաւունքը»:

Երրորդ՝ բոլոր լիբանանցիներուն կոչ ուղղեց՝ կատարելու իրենց հայրենիքին նկատմամբ իրենց պարտականութիւնները, որոնց առաջինը սահմանադրական հաստատութիւններու վերակազմումն է, մասնաւորաբար խորհրդարանի անմիջապէս ձեռնարկելը՝ ընտրելու Հանրապետութեան Նախագահ մը, որ բոլոր լիբանանցիներուն վստահութիւնը կը վայելէ, եւ այդ մէկը կատարել, կառչելով սահմանադրութեան կէտերուն եւ «կարելի առաւելագոյն չափով փոխ-հասկացողութեամբ ու համաձայնութեամբ», լիբանանցիներու կամքով, Ազգային ուխտի ոգիով եւ ազգային շահերը արտաքին շահերէն բարձր նկատելով:

Չորրորդ՝ անմիջապէս ձեռնարկել ամբողջական գործադրութիւնը Մ.Ա.Կ.ի Ապահովութեան Խորհուրդի թիւ 1701 որոշումին, ներառեալ աջակցելով լիբանանեան բանակին, ամրապնդելով Լիբանանը պաշտպանելու անոր կարողութիւնը եւ ընդգծելով Լիթանի գետէն հարաւ ու լիբանանեան տարբեր շրջաններու մէջ անոր ընդարձակ տեղակայումը: Լիբանանեան կառավարութիւնն ալ պէտք է ամբողջովին տէր կանգնի իր պարտաւորութիւններուն եւ սահմանադրութեան համաձայն գործակցի խորհրդարանին հետ՝ արաբ եղբայրներու եւ աշխարհի տարածքին բազմաթիւ բարեկամներուն՝ Լիբանանի փրկութեան մասնակցութիւնը ապահովելու:

Հինգերորդ՝ ընդգծել լիբանանցիներուն միասնականութիւնն ու զիրար ընդունելու կարեւորութիւնը, մասնաւորաբար ներկայ դժուար փուլին: Ուստի պէտք է վերստին կազմեն մէկ ու միասնական խումբ, յօգուտ իրենց միացեալ ու Լիբանանի շահերուն, եւ այդ ալ լիբանանեան պետութեան պայմաններով եւ անոր հովանաւորութեամբ, ինչ որ կը նշանակէ, թէ պետութիւնը իր ձեռքը կ'առնէ ազգային որոշումը եւ կը պաշտպանէ ազգային գերիշխանութիւնն ու ժողովուրդին արժանապատուութիւնը, ինք կ'ըլլայ լիբանանեան բոլոր հողերուն վրայ իշխանութեան միակ տէրը:

Վեհաժողովը նաեւ շնորհակալութիւն յայտնեց արաբական եղբայրական պետութիւններուն ու Ֆինիկիին՝ ընդգծելով, որ արաբական շրջանին մէջ գըլխաւոր դատը Պաղեստինի արդար դատն է:



**ՀԱՅ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ
ԱՌՑԱՆՑ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵՑԻՆ
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ**

Հինգշաբթի, 17 Հոկտեմբեր 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս առցանց խորհրդակցական հանդիպում մը ունեցաւ Լիբանանի մէջ գործող Հայ քաղաքական երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներուն հետ: Նիստին մասնակցեցան Ս.Դ.Հ.Կ.էն՝ Վանիկ Տաքէսեան, Հ.Յ.Դ.էն՝ Յակոբ Բագրատունի եւ Ռ.Ա.Կ.էն՝ Տոբթ. Աւետիս Տաքէսեան: Հանդիպումին ներկայ էր նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համահայկական խորհրդաժողովները համակարգող՝ Շահան Գանտահարեան:

Նիստին հիմնական օրակարգը կը վերաբերէր Լիբանանի մէջ տիրող ճշգրտաժամային կացութեան: Յայտնենք, որ հովուապետական այցելութեամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Հայոց Թեմ գտնուող Նորին Սրբութիւնը խոր մտահոգութեամբ եւ ամէնօրեայ դրութեամբ կը հետեւի լիբանանեան իրադարձութիւններուն:

Քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչները Նորին Ս. Օծութեան զեկուցեցին քաղաքական, կազմակերպական եւ բարեսիրական տարուող աշխատանքներուն մասին: Զեկուցումներուն ներառուած էին պետական հանդիպումները, Պքէրքէի մէջ կայացած Հոգեւոր Պետերու վեհաժողովին արծարծուած հարցերը, հայահոծ թաղամասերու թէ Այնճարի մէջ գաղթականներու կացութիւնն ու անոնց նկատմամբ կատարուող օժանդակութեան աշխատանքները:

Այնուհետեւ քննարկումի կարգով արծարծուեցան տարածաշրջանային կացութիւնը, պատերազմական գործողութիւնները, անոնց ծանր հետեւանքները, միջազգային ընտանիքին վերաբերումը, Մ.Ա.Կ.ի թիւ 1701 որոշումի գործադրութեան ներկայ պայմանները, Տինժիլ-ի ոյժերուն դէմ Իսրայէլի կատարած յարձակումները եւ այս բոլորին մէջ ու մինչ այժմ գինադուլի անհաւանականութիւնը:

Նորին Ս. Օծութիւնը իր գոհունակութիւնը յայտնեց Հայ քաղաքական կուսակցութիւններու յաճախակի հանդիպումներուն եւ միացեալ խորհրդակցութիւններուն համար եւ շեշտեց լիբանանահայութեան միասնականութեան պահպանման անհրաժեշտութիւնը ու մանաւանդ յատուկ կերպով անդրադարձաւ նաեւ իբրեւ լիբանանահայեր՝ իրենց համաքաղաքացի գաղթականներուն օժանդակութիւն հասցնելու անհրաժեշտութեան:

«Յեղասպանութենէն վերապրած եւ լիբանանեան ասպնջականութեան արժանացած լիբանանահայութիւնը գիտէ՛ այսօր ընկերային-տնտեսական դրժուարութիւններու ենթարկուող իր համաքաղաքացիներուն ձեռք երկարել», հաստատեց Վեհափառ Հայրապետը եւ գնահատեց լիբանանահայ քաղաքական մարմիններուն այս ուղղութեամբ տարած աշխատանքը: Ան նաեւ խօսեցաւ Իսրայէլի սանձազերծած յարձակումներուն դիմաց Միացեալ Նահանգներու մէջ տիրող քաղաքական իրավիճակին եւ այս առումով Միացեալ Նահանգներու ծերակուտական դէմքերու հետ իր արծարծած հարցերուն մասին:

Նիստի աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս թելադրեց շարունակել քաղաքական կուսակցութիւններու աշխատանքային համատեղ նիստերու գումարումը՝ յորդորելով, որ նման խորհրդակցական նիստեր յառաջիկային եւս կայացուին:

ՏՕՆԱԿԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Կիրակի, 22 Սեպտեմբեր 2024-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինութեամբ, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին, կատարուեցաւ Հանրապետական Մաղթանք (գոհաբանական աղօթք)՝ Հայաստանի Հանրապետութեան վերանկախութեան 33-րդ տարեդարձին առիթով: Միաբան Հայրեր եւ հաւատացեալներ միասնաբար աղօթք վերառաքեցին առ Աստուած, որ պահպանէ Հայաստան Հայրենիքը, անառիկ պահէ անոր սահմանները եւ հզօր ու անսասան՝ Հայոց բանակը: Այս առիթով նաեւ կատարուեցաւ Հայաստանի դրօշի՝ եռագոյնի օրհնութիւն:

Գոհաբանական աղօթքէն ետք, պատարագիչ Հայր Սուրբը՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան, ընթերցեց Արամ Ա. Կաթողիկոսին Հայրապետական



Պատգամը՝ հրապարակուած Հայաստանի անկախութեան տօնին առիթով: Նորին Սրբութիւնը իր պատգամին մէջ յատկապէս ընդգծած է. «Մեր պատմութեան ընթացքին Հայաստանի անկախութեան համար պայքարեցանք, ստեղծագործեցինք, նոյնիսկ արիւն թափեցինք այն խոր գիտակցութեամբ, որ անկախութիւնը Աստուածատուր իրաւունք է եւ հետեւաբար, սրբազան արժէք է եւ անոր անվթար պահպանումը ու պաշտպանութիւնը պարտաւորութիւնն է իւրաքանչիւր հայու: ...Այսօր, երբ կը նշենք անկախութիւնը Հայաստանի, հարկ է անդրադառնալ, թէ ի՞նչ է մեր պարտաւորութիւնը ու իրաւունքը անոր նկատմամբ: Այսօր մանաւանդ, երբ կը նայինք անկախ Հայաստանին, կ'անդրադառնանք, որ ան ահաւոր տագնապներով է շրջապատուած, ներքին թէ արտաքին, հեռաւոր թէ մօտաւոր»: *Խօսելով ընդհանրապէս եկեղեցւոյ եւ ի մասնաւորի պատմութեան ընթացքին Հայ եկեղեցւոյ դերակատարութեան մասին մեր ազգի կեանքին մէջ, Նորին Սրբութիւնը ըսած է. «Եկեղեցին բոլոր ազգերու կեանքին մէջ միշտ եղած է անկախութեան կողմին՝ զայն նկատելով իր առաքելութեան էական տարածքներէն մէկը: Այսպէս եղած է մանաւանդ Հայ եկեղեցին մեր ազգի պատմութեան ընթացքին՝ գործնապէս արտայայտելով իր ամուր կեցուածքը այն բոլոր փորձերուն նկատմամբ, որոնք կրնային խաթարել Հայրենիքին անկախութիւնը: ...Մեր ժողովուրդին միասնականութիւնը համահայկական օրակարգի մը շուրջ՝ ոյժերու համախմբումով եւ մեր հաւաքական վճռականութեան ամրացումով աւելի քան հրամայական է մեր պատմութեան վճռադրոշմ այս հանգրուանին:*

Այս է պատգամը Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնին»:



ՀԱՅ ԴԱՏ**«ԿԻՒԽԿԻԱ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ»Ի
ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»-ի հերթական առցանց նիստը տեղի ունեցաւ Կիրակի, 8 Սեպտեմբեր 2024-ի երեկոյեան, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին:

Օրակարգին ներառուած էին Միջին Արեւելքի եւ Հարաւային Կովկասի վերջին իրադարձութիւնները, Կազախի պատերազմը, անոր զուգահեռ իրականի դիմագրաւած պատերազմի վտանգն ու այդ բոլորի ազդեցութիւնը միջին արեւելեան Հայ համայնքներուն վրայ: Յատուկ կէտով քննարկումներ կեդրոնացան ՔՈՓԶԳ-ի ընդառաջ միջազգային ատեաններու ու մասնակցող պետութիւններու մօտ տարուող աշխատանքներուն եւ յատկապէս Պաքուի բանտերուն մէջ պահուող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարութեան ու պատանդներուն ազատ արձակման նպատակով տարուող աշխատանքներուն վրայ:

Վեհափառ Հայրապետը պարզեց Վատիկանի եւ ապա Ժընեւի մէջ իր ունեցած հանդիպումներուն մասին տեղեկութիւնները: Հանդիպումները առիթ եղած են արծարծելու բանտարկեալներու ազատ արձակման պահանջները: Նորին Սրբութիւնը նաեւ իրազեկեց հարթակի անդամները Իրանի եւ Գանատայի դեսպաններուն այցելութիւններուն մասին եւ անոնց ընթացքին քննարկուած թէ՛ Հարաւային Կովկասի եւ թէ՛ Միջին Արեւելքի վերաբերող խնդիրները: Այս առումներով Արամ Ա. Կաթողիկոս մասնակիցներուն յայտնեց Հայազգայէջճանական հակամարտութեան եւ յատկապէս բանտարկեալներու ուղղութեամբ Վատիկանի մէջ տիրող իրավիճակին մասին:

Ժողովականները արձանագրեցին, որ այս տարուան Յունուարին Անթիլիասի մէջ կայացած թէ՛ հարթակի առկայ նիստին եւ թէ՛ Ապրիլին «Արցախի մէջ Ազրպէյճանի կիրառած ցեղասպանութիւնը» թեմայով գիտաժողովին բանաձեւուած էին աշխատանքային ուղենիշեր: Այս նիստերուն «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»-ի անդամներուն կողքին կը մասնակցէին միջազգային Քրէական Դատարանի Հիմնադիր Դատախազ՝ Լուի Մորէնօ Օքամփօ, Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց նախկին Նախարար եւ արցա-

խահայութեան իրաւունքները հետապնդող յանձնաժողովի աշխատանքները համակարգող՝ Վարդան Օսկանեան եւ Ընկերվար միջազգայնականի Փոխ Նախագահ՝ Մարիօ Նալպանտեան:

Յունուարի եւ Ապրիլի հանդիպման նիստերու ընթացքին բանաձեւուած առաջադրային կէտերը կ'արժարժուին Վեհափառ Հայրապետին հետ՝ տարբեր պետութիւններու դիւանագիտական ներկայացուցիչներու հանդիպումներուն եւ Արցախի Հայութեան իրաւունքներու վերականգնման համահայկական աշխատանքներու ընթացքին: Հետապնդուած հարցեր են Արցախի մէջ Պաքուի իրականացուցած ցեղասպանական քաղաքականութիւնը, Արցախի ժողովուրդի հաւաքական վերադարձի իրաւունքը, վերադարձը միջազգային անվտանգութեան գործիքակազմով երաշխաւորելը, ՔՈՓՁԳ-ի ընդառաջ Ազրբայէյճանի գործադրած տարբեր բնոյթի յանցագործութիւնները իրազեկելը, Արցախի առեւանգուած ղեկավարութեան, գերիներու, պատանդներու ազատ արձակում պահանջելը եւ հոգեւոր ու մշակութային ժառանգութեան պահպանման միջազգային կառույցներու մօտ աշխատանքը:

Նշենք, որ հերթական առցանց հանդիպման օրակարգի վերջին կէտով հաստատուեցաւ Յունուար եւ Ապրիլ 2024-ին Անթիլիասի մէջ յաջորդաբար տեղի ունեցած հարթակի լիազումար եւ «Արցախի մէջ Ազրպէյճանի ցեղասպանական քաղաքականութիւնը» թեմայով գիտաժողովի նիստերուն ներկայացուած զեկուցումներու հրատարակութեան խմբագրական կազմը: Հաւաքածոյին կը ներառուին վերը նշուած կէտերուն մասին պատմագիտական, իրաւագիտական, կրօնա-մշակութաբանական եւ քաղաքագիտական առանցքներով ներկայացուած զեկուցումները:



ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՈՒՂԱՓԱՌ ԵՒ ԱՐԵԻԼԵԱՆ ՈՒՂԱՓԱՌ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ**

16-17 Սեպտեմբեր 2024-ին, Եգիպտոսի Ս. Պիշոյ Վանքին մէջ, Ղպտի Ուղղափառ եկեղեցւոյ հիւրընկալութեամբ, գումարուեցաւ Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու ժողովը:

Վեհափառ Հայրապետին տնօրինութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ ժողովին մասնակցեցան՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեանն ու Գերշ. Տ. Մակար Արք. Աշգարեանը:

17 եկեղեցիներէ 40 հոգեւորական եւ աշխարհական աստուածաբաններ իրենց մասնակցութիւնը բերին այս ժողովին:

Ժողովը սկսաւ առաւօտեան ժամերգութեամբ, որուն աւարտին Ղպտի եկեղեցւոյ Պետ՝ Ն.Ս. Թառատրոս Բ. Պատրիարք բարի գալուստի պատգամ մը ուղղեց: Ապա, էմմանուէլ Մետրոպոլիտը կարդաց Ն.Ս. Բարթոլոմիո Ա. Տիեզերական Պատրիարքին ողջոյնի խօսքը:

Ժողովին նպատակն էր երկու Ուղղափառ եկեղեցական ընտանիքներու առաւել մերձեցման եւ ցանկալի միութեան աշխատանքներուն նոր մղում տալ՝ հիմք ընդունելով 1989-ի եւ 1990-ի համաձայնագիրերը, որոնց իրագործման մէջ գործօն դերակատարութիւն ունեցած էր Արամ Ա. Կաթողիկոս:



ԴՊՐԵՎԱՆՔ

ՀՈԳԵՄՏԱԻՈՐ ԿԵԱՆՔԸ ԴՊՐԵՎԱՆՔԵՆ ՆԵՐՍ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱԻԱՆԴԱԿԱՆ

ՌՈՒՊԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՄԻԱՑԱԻ

Ռուսի պատրաստութիւնը Դպրեվանքի ամենագեղեցիկ ականդութիւններէն մէկն է, որ տեղի կ'ունենայ ամէն տարի Սեպտեմբեր ամսուան ընթացքին: Ռուսը խաղողի հիւթով պատրաստուած ու եփուած անուշն է, որ Դպրեվանքին մէջ ընդհանրապէս որպէս նախաճաշ կը հրամցուի Միաբան Հայրերուն եւ դպրեվանեցիներուն:

Արդարեւ, Չորեքշաբթի, 11 Սեպտեմբեր 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի պարտէզին մէջ, այցելեց ռուսի պատրաստութեան վայրը, ուր Դպրեվանքի խումբ մը աշակերտներ լծուած էին աշխատանքի: Ան դիմաւորուեցաւ Ս. Աստուածածին Վանքի Վանահայր՝ Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեանի, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի, Տեսչութեան անդամներուն ու աշակերտներուն կողմէ: Անոնք տեղեակ պահեցին ցարդ իրենց կատարած աշխատանքին մասին, ստեղծեցին ճոխ մթնոլորտ՝ հայրենասիրական երգեր երգելով եւ ներկայացուցին ամրան շրջանին իրենց առօրեան:

Նորին Արքեպիսկոպոս Բարձր գնահատեց Վանահայր գլխավորութեամբ աշակերտութեան կողմէ տարուող աշխատանքը եւ այս առիթով անոնց խօսեցաւ կեանքին մէջ «ճակտի քրտինքով», արդար աշխատանքով իրենց ապագան կերտելու կարեւորութիւնը: Վեհափառ Հայրապետը նաեւ պատմեց իր աշակերտութեան տարիներու յուշերէն եւ ընդգծեց հաւաքական յիշողութեան եզակիութիւնն ու անհրաժեշտութիւնը: Աւարտին, Նորին Ս. Օծովութիւնը իր հայրական օրհնութիւնը փոխանցեց Տեսչութեան ու աշակերտութեան եւ ոյժ ու կորով մաղթեց բոլոր աշխատանքներու կատարման համար:

ԴՊՐԵՎԱՆՔԻ «ՈՌԻՊ»Ը

Մանկութեան օրերուն այցելութեան նախասիրած վայրերէս մէկը Դպրեվանքն էր: Հայրս, աշխատանքային առնչուածութեամբ, բայց՝ հոգիի եւ էութեան ամբողջական կապուածութեամբ, իր ազատ ժամերն ու արձակուրդի օրերը նոյնիսկ կը նախընտրէր Դպրեվանքին մէջ անցընել: Շաբթուան բոլոր օրերու դասաւանդումէն ետք, շաբաթավերջին՝ շաբաթ առաւօտներն ու կիրակի յետմիջօրէնները, Դպրեվանք այցելութեան իր ժամերն էին. եւ ես՝ փոքր տարիքէս անքակտելիօրէն հօրս կապուած, իւրաքանչիւր յարմար առիթի իրեն հետ Դպրեվանք կը բարձրանայի:

Մանուկ ուղեղիս եւ տակաւին միամիտ տրամաբանութեանս համար Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքը դրախտավայր էր. ի վերջոյ՝ անիկա ամէն բան ունէր դրախտ կոչուելու՝ կանաչազարդ բնութիւն, խաղողի այգիներ, լուռ ու հանդարտ մթնոլորտ, մաքուր օդ, եկեղեցի ու անդադրում աղօթք, խունկի հոտ, մոմի լոյս, հիասքանչ տեսարան, բարի մարդիկ, կարգապահ առօրեայ, համով խնձոր...

Աւելի ուշ, դպրոցական տարիներուս, երբ ծանօթացայ Մեծարենցի «Կիրակամուտք»ին, պատանի ուղեղիս համար անվարանօրէն յստակ էր եւ անառարկելի, թէ բանաստեղծը անկարելի էր, որ այդ տողերը Ս. Աստուածածին մատուռէն տարբեր այլ եկեղեցոյ մը մասին գրած ըլլար: Այս մտածումս եւ համոզումս նոյնիսկ համարձակած էի արտայայտել Հայոց լեզուի ուսուցիչիս՝ արժանանալով անոր կուշտ ու կուռ խնդուքին:

Դպրեվանքի այգին յարկ-յարկ դասաւորուած էր. անոր ծակն ու ծուկը գիտէի, հոնկէ մարգարտածաղիկ եւ վայրի կակաչ կը քաղէի ու փունջ կը կազմէի: Բակին մէջ հեծանիւ կը քշէի, երբեմն տղոց գնդակի եւ աչքսփուկի խաղերուն կը մասնակցէի:

Դասարաններու յարկը լաւ կը ճանչնայի. արձակուրդի օրերուն պարապ դասարաններու ազատ գրատախտակները իմ «ուսուցիչ-աշակերտ» խաղիս թատերաբեմը կը հանդիսանային, ուր պարապ աթոռներուն վրայ աշակերտներ երեւակայելով՝ երկա՛ր ժամեր «դաս» կը բացատրէի. այդ օրերուն ամբողջովին անգիտակ էի, որ այդ մէկը ինծի համար պատուաբեր իրականութիւն պիտի դառնար ապագային, երբ Դպրեվանքի ուսուցիչ դառնալու պատիւն ու պատասխանատուութիւնը պիտի ստանձնէի:

Դպրեվանքեան կեանքին մէջ իւրաջատուկ տեղ կը գրաւէր ռուպի պատրաստութեան շաբաթը, որուն իւրաքանչիւր օրը քէֆ էր ինծի համար: Այդ շաբթուան ընթացքին, ի տարբերութիւն այլ այցելութիւններու, կարելի էր ամէն օր Դպրեվանք բարձրանալ, նոյնիսկ գիշերը ու հոն մնալ մինչեւ ուշ

ժամեր: Հօրս խանդավառութիւնը այս առիթով նման էր բոլոր ռուպ պատրաստողներուն տրամադրութեան, ուրախութեան նոյն կշռոյթով, կատակներու եւ երգերու տեղատարափով, աշխատանքի բծախնդիր ընթացքով ռուպի տարեկան պաշարը կը պատրաստուէր:

Աշակերտներ, Հսկիչներ, Տեսուչներ, Միաբաններ եւ Կաթողիկոս՝ ռուպի արարողութեան մասնակից էին եւ անոր պատրաստութեան գործին լծակից: Ամէն անգամ ալ ռուպը համտեսելը եւ դափնիի տերեւով «փրփուր»ը ճաշակելը կը վերածուէին հաճելի ծէսի մը, որուն հաւատարիմ դիտարկողն էի՝ միշտ նոյն հետաքրքրութեամբ:

Իսկ պատրաստուած ռուպն ալ առատօրէն կը բաժնուէր բոլորին. անիկա մեր տան ամէնօրեայ հացի սեղանին անբաժան մէկ մասնիկն էր եւ երբեմն հօրս նախաճաշի կամ ընթրիքի միակ ուտելիքը, ճիշդ Դպրեվանքի իր աշակերտութեան օրերուն նման, որոնց մասին այնքա՛ն երախտագիտութեամբ, հաւատարմութեամբ, սիրով եւ ակնածանքով պատմեր էր միշտ:

Ներկայիս ռուպի պատրաստութիւնը համեմատաբար աւելի հեշտ դարձած է. խաղողը աղացող մեքենան փոխարինած է ոտքի ճզմող հարուածներու գործը: Բայց Դպրեվանքին մէջ ռուպի պատրաստութեան թէ՛ այլ ժամանակներու ընթացքին սրտերն ու հոգիները երբեք չեն մեքենայականացած:

Գործիքները, մեթոտները տարբեր են՝ ժամանակակից եւ նորարար, բայց ոգին ու մթնոլորտը՝ նո՛յնը, անփոփոխ: Տարիներ անցած են այդ օրերէն, շատ մարդ ու շատ բան անվերադարձ մեկնած են արդէն. բայց Դպրեվանքը տակաւին կանգուն է ու գործուն: Ս. Աստուածածին Վանքը տակաւին դրախտավայր է. Դպրեվանքի պատերէն արձագանգող աղօթքն ու հոն կազմաւորուող մթնոլորտը տակաւին տարածուն են բոլորիս վրայ. եկեղեցին ու ազգը իբրեւ բարձրագոյն արժէքներ դաւանող սկզբունքները տակաւին իշխող են եւ առաջնորդող:

Օրին, պատասխանելով հարցումիս՝ թէ ի՞նչ է ռուպը, հայրս ըսեր էր, որ այգիին բարիքը՝ խաղողի բերքն է, խաղողին բարիքը՝ ռուպը, իսկ փրփուրը՝ ռուպին համով ըլլալու փաստը: Իսկ հիմա, հօրս տուած բացատրութեան համահունչ, կարելի է անվարանօրէն հաստատել, որ մեր ժողովուրդի կեանքի անփոխարինելի բարիքներէն մէկը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն է, անոր բարիքներէն մեծագոյնը՝ Դպրեվանքը, իսկ անոր գործին ապացոյցը՝ կիրթ ու ազնիւ աշխատանքի խանդով տոգորուած, հոգեմտաւոր առաքելութեամբ փրփրացող հոգիներով դպրեվանեցիները. այլ խօսքով՝ մեր հաւաքական կեանքը քաղցրացնող Դպրեվանքի «ռուպ»ը:

ՇԱՂԻԿ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ-ԽԻԻՏԱՎԷՐՏԵԱՆ

(Ուսուցիչ)

ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Շաբաթ, 5 Հոկտեմբեր 2024-ին, Դպրեվանքի «Բրաբրոն Տումանեան» հանդիսասրահին մէջ, Դպրեվանքի 2024-25 ուսումնական տարեմուտի սեմին, նախագահութեամբ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանին, տեղի ունեցաւ ուսուցչական ժողով: Տեսուչ Հայր Սուրբը ողջունելէ ետք ուսուցչական կազմը, անդրադարձաւ Դպրեվանքի հոգեմտաւոր դաստիարակութեան առաքելութեան կարեւորութեան եւ իր խօսքին մէջ ըսաւ. «Բոլորս քաջատեղեակ ենք Լիբանանի մէջ տիրող անկայուն կացութեան: Կ'աղօթենք, որ Ամենակալին օրհնութեամբ խաղաղ եւ անփորձանք տարեշրջան մը ունենանք, որպէսզի բծախնդրօրէն լծուինք վերանորոգ հաւատքով եւ ուժով շարունակելու մեր հոգեմտաւոր առաքելութիւնը»:

Հոգշ. Հայր Սուրբին խօսքէն ետք, տեղի ունեցաւ դասախօսութիւն մը, որուն նպատակն էր Դպրեվանքի ուսումնական աշխատանքները վերաթարմացնել եւ նոր ծրագիրներ մշակել դպրեվանքի որակաւոր պատրաստութեան համար: Դասախօսութիւնը ներկայացուց՝ Դոկտ. Թալին Մարրլեան, նիւթ ունենալով՝ «Ուսուցման նոր մօտեցումներ եւ մեթոտներ»:

Այս առիթով յայտնենք, որ Վեհափառ Հայրապետին տնօրինումով, Տեսչութեան մաս կը կազմեն՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան, Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան, Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան եւ Տեսչական կազմի օգնականներ՝ Բրշ. Երուանդ Սրկ. Եղիայեան եւ Բրշ. Յակոբ Սրկ. Ճուլֆայեան:

ԴՊՐԵՎԱՆՔԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԻՐ 2024-25

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆԸ

Ամէն տարի, աւանդութեան համաձայն, Սրբոց Թարգմանչաց տօնին առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը կը մեկնարկէ իր ուսումնական-կրթական տարեշրջանը: Վերամուտի առիթով կը մատուցուի Ս. եւ Անմահ Պատարագ՝ Դպրեվանքի Տեսուչին կողմէ եւ կը կատարուի հանդիսաւոր բացման հանդիսութիւն՝ սաներուն կատարողութեամբ:

Առ այդ, Երկուշաբթի, 14 Հոկտեմբեր 2024-ին, Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինութեամբ, Դպրեվանքի «Բրաբրոն Տումանեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Դպրեվանքի 94-րդ տարեշրջանի բացման հանդիսութիւնը՝ ներկայութեամբ Միաբան Հայրերու, Ուսուցչաց կազմին, Տիկնաց յանձնախումբին եւ Դպրեվանքի բարեկամներուն ու բարերարներուն:

Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ դիտել տուաւ, որ հակառակ Լիբանանի դժնդակ պայմաններուն, այս նուիրական հաստատութիւնը կը շարունակէ իր սրբազան



առաքելութիւնը: Յիշելով Կաթողիկոսութեան Անթիլիաս հաստատուելու ծանր օրերը, ան մէջբերեց Սահակ Կաթողիկոս Խապայեանի 1930 թուակիր նամակը՝ յղուած Միացեալ Նահանգներու մէջ ծառայող Շահէ Արք. Գասպարեանին, զոր հրաւիրելով տեսչութեան պաշտօնին, Կաթողիկոսը կը գրէ. «Մեր նպատակը եւ ծրագիրը ծանօթ են, ինչպէս ձեզ, նոյնպէս մեր բարեկամներուն, այն՝ Հայաստանեայց Եկեղեցոյ ժողովրդական ոգոյն համաձայն պատրաստել ուսեալ ֆահանսներ եւ ուսուցիչներ, առանց որոնց՝ մարտիրոս Եկեղեցին, որ դարերու անհնաւորին տառապանքներու եւ խաչակրութեանց մէջ հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ ներշնչարանը եղաւ, ի վտանգի է գաղթավայրերու մէջ» (Բ. Եղիայեան, էջ 344-345). ուստի, Հայր Պարոյր այս խօսքով վերանորոգեց Հայ եկեղեցոյ եւ Դպրեվանքին ծառայութեան ուխտը: Իբրեւ նորութիւն, ան յայտնեց, որ այս տարեշրջանին եւ առաջին անգամ ըլլալով Դպրեվանքի մեծ ընտանիքին, միացած են Արցախէն ուսանողներ, ինչպէս նաեւ Սփիւռքի տարբեր գաղութներէն եւ Հայրենիքէն ուսանողներու կողքին, Վեհափառ Հայրապետին բարձր տնօրինութեամբ, այս տարի Դպրեվանքը օժտուած է համալսարանաւարտ ուսանողներու յատուկ ծրագիրով մը, որուն թիրախն է կղերականի կոչում ունեցող համալսարանաւարտ երիտասարդին կազմաւորումը: Տեսուչ Հայր սուրբը յիշեցուց նաեւ, որ թէեւ Նորին Սրբութիւնը այս օրերուն հովուապետական այցելութեամբ կը գտնուի Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Հայոց Թեմ, սակայն ան ամէնօրեայ դրութեամբ կապ կը հաստատէ Դպրեվանքի Տեսչութեան հետ եւ կը հետեւի վերամուտի աշխատանքներուն՝ իր օրհնութիւնները փոխանցելով:

Տեսուչ Հայր Սուրբին խօսքէն ետք, յանուն Նորին Սրբութեան, խօսք առաւ Դպրեվանքի նախկին տեսուչներէն եւ ներկայիս «Կիլիկիա» մատենադարանի եւ հնատիպերու եւ ձեռագրերու բաժանմունքի Վարիշ՝ Գերշ. Տ. Շահան

Արք. Սարգիսեան: Ան ուրախութիւն յայտնեց ի տես նոր տարեշրջանի բացման եւ քանի մը կէտերով ամփոփեց օրուան պատգամը: Մէջբերելով Թարգմանչաց սերունդի նուիրուած շարականին մէջ գրուած «գիր կենդանին հաստատեցինք» եւ «սուրբ Մեսրոպի մաքուր արգանդին մէջ նկարագրուեցաւ» տողերը, ան սաները հրաւիրեց «նկարագիր» բառի հոլովոյթին մասին մտածելու, մանաւանդ ներկայ դարու «նկարագիր» բառին բուն իմաստին կորստելուն լոյսին տակ: Սրբազան Հայրը ըսաւ, որ Աստուած մեզ ստեղծած է իր պատկերին ու նկարագիրին համաձայն, ուստի մենք կը ծնինք նկարագրով մը. կը կրթուինք, կը դաստիարակուինք եւ կը պատրաստուինք որպէս մարդ՝ կազմելով մեր նկարագիրը, որ ենթակայ է յարատեւ կառուցուելու: Դպրեվանքը այն քուրան է, ուր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յատուկ նկարագիր մը կը տրուի սաներուն՝ անոր ամէնէն կարեւորը ըլլալով ազնուութիւնը, հաստատեց Շահան Արք. եւ մաղթեց, որ Դպրեվանքի 94-րդ տարեշրջանին սաները հաւատարիմ ըլլան իրենց նկարագրի կերտման, Աստուծոյ պատկերին նմանութեան եւ անոր կենդանի գիրին:

Հուսկ, Սրբազան Հայրը սաներուն պատուիրեց ուշադրութիւն դարձնել հետեւեալ երեք կարեւոր նկարագիրներուն՝ աղօթողի, ընթերցողի եւ աշխատողի՝ ընդգծելով անոնց միաձուլումը սիրոյ հետ, որովհետեւ առանց սիրոյ նշանակութիւն չեն ունենար անոնք: «Աղօթասէր ըլլալ, ընթերցասէր ըլլալ, աշխատասէր ըլլալ, նոր նկարագիր կերտել. այս է իմ մաղթանքս Դպրեվանքի վերամուտին առթիւ: Վստահաբար, Վեհափառ Հայրապետին հոգին կը ցնծայ իր առաքելութեան ընթացքին, երբ կը տեսնէ, կը լսէ, կը զեկուցուի, թէ Դպրեվանքի այս առաքելութիւնը կը շարունակուի 94-րդ տարուան ընթացքին», յայտնեց Շահան Սրբազան Հայրը ու վերջապէս, շնորհաւորելով բոլորը՝ Աստուծոյ խնդրեց, որ անոր շնորհքը եւ իմաստութիւնը իջեցնէ սաներուն վրայ, որպէսզի կարենան դպրեվանքեան, Հայու ու աշխատասէր մարդու նկարագրով յաջողութիւններ արձանագրել:

Յայտագիրը կ'ընդգրկէր նաեւ գեղարուեստական բաժին, որուն ընթացքին Դպրեվանքի «Արմաշ» երգչախումբը ներկայացուց փունջ մը շարականներ ու ազգային երգեր, ինչպէս նաեւ տղոց կողմէ եղան Աստուածաշնչական ընթերցումներ եւ արտասանութիւն:

Յայտնենք, որ Կիրակի, 13 Հոկտեմբեր 2024-ին, Սրբոց Թարգմանչաց տօնին լոյսին տակ եւ Դպրեվանքի 94-րդ վերամուտին առիթով, Անթիլիասի Մայրավանքի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագին էր Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան: Ան իր քարոզին մէջ անդրադարձաւ Դպրեվանքին եզակի դերակատարութեան ու առաքելութեան՝ ընդհանրապէս Հայ եկեղեցւոյ ու ժողովուրդին եւ յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կեանքին մէջ:

**«ԱՌԱՆՑ ԴՊՐԵՎԱԼՔԻ, ԿԱՐԵԼԻ ՉԷ ՊԱՏԿԵՐԱՑՆԵԼ
ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՊԱԳԱՆ ԵՒ ՍՓԻՌՔԱՅԱՅ
ՄԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ»**

Աշխարհասփիւռ Հայութեան հիմնական փարոսներն ու հոգեւոր, ազգային ու մշակութային դիմագիծի պահպանման կռուանները կը հանդիսանան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ գործող եկեղեցիներն ու անոնց ծառայութեան լծուած հոգեւորականները, որոնք ներկայ են ամէնուրեք, պատրաստ՝ ամէն ձեւով ժողովուրդին ծառայելու, հոգեւոր սնունդ հայթայթելու ու ապաւէն դառնալու: Ժողովուրդէն ծնած ու ժողովուրդին ծառայութեան լծուած այս նուիրեալներուն կազմաւորման ու պատրաստութեան քուրան կը հանդիսանայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը, ուր սերունդներ կը կոփուին ու կը թրծուին հոգեւոր, ազգային ու մշակութային շունչով եւ ոգիով, որպէսզի իրենց ուսումնական շրջանը աւարտելով՝ կրկին ուղղուին դէպի աշխարհասփիւռ Հայութիւն ու ծառայեն անոր՝ անսակարկ նուիրումով եւ կուռ հաւատքով:

Այս իւրայատուկ կեդրոնին, մարդ կազմաւորելու անոր առաքելութեան, հայանուէր աշխատանքներուն եւ գործունէութեան տարբեր բնագաւառներուն վրայ լուսարձակ սփռելու նպատակով, «Ազգակ» հարցազրոյց մը կատարեց Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանին հետ, զոր ամբողջութեամբ այստեղ կը գետեղենք.-

«ԱԶԴԱԿ».- Դպրեվանքը ստեղծուած է յատուկ առաքելութեամբ եւ նպատակով: Ընդհանուր գիծերու մէջ խօսինք անոր ծննդոցին եւ նման կառոյց մը ստեղծելու անհրաժեշտութեան մասին, ժամանակի թաւալումով եւ պայմաններու փոփոխութեամբ անոր կեանքին մէջ եւս արձանագրուած փոփոխութիւններուն մասին:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷԶԵԱՆ.- Դպրեվանքը հիմնադրուած է Անթիլիասի մէջ, 1930-ին, Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսի ջանքերով: Երբ Երջանկայիշատակ Հայրապետը 1915-ի Ցեղասպանութենէն ճողոպրած եւ գաղթական Հայ ժողովուրդին տէր դառնալու լուծը իր վրայ առած էր, ինչպէս նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռը վերահիմնելու աշխատանքին լծուած էր, կը ձեռնարկէ նաեւ հիմնադրութեան Դպրեվանքի մը, որպէսզի հոն պատրաստուող հոգեւորականներն ու ուսուցիչները գաղթական ժողովուրդը ոտքի հանեն: Ինքնաբերաբար, մտքէ վեր է, թէ ինչպէ՛ս այդ ընկճուելիք վիճակին մէջ Երջանկայիշատակ Հայրապետը կառուցելու եւ վերականգնելու աշխատանքը տարած է՝ հակառակ ծերունագարդ ըլլալուն: Տարածքի իմաստով, Անթիլ-

իասի հողամասը կը խնդրէ «Նիր իսթ ռիլիֆ» հիմնարկէն (Near East Relief Foundation), եւ իր գրած պատմական «Կտակ»-ին ի պատասխան՝ բարերարներ եւ հաստատութիւններ նիւթա-բարոյական աջակցութիւն կը ցուցաբերեն: Կրթական աշխատանքին համար Լիբանան կը հրաւիրէ Բաբգէն Ա. Կիւլէսէրեան Աթոռակից Կաթողիկոսը (որ եպիսկոպոս էր եւ պիտի ստանձնէր Կաթողիկոսի պաշտօնը իր վախճանումէն ետք) եւ Շահէ Արք. Գասպարեանը՝ Միացեալ Նահանգներէն, որպէսզի Տեսուչի պաշտօնը ստանձնէ: Դպրեվանքը ո՛չ միայն պիտի ապահովէր եկեղեցւոյ առաքելութեան շարունակութիւնը Միջին Արեւելքի մէջ, այլ նաեւ մարդուժ պիտի հայթայթէր Սփիւռքը կազմակերպելու համար: Աւելի ուշ՝ 1983 թուականին, Դպրեվանքը փոխադրուեցաւ Պիքֆայայի ամառանոցը, որ տարուէ-տարի շէնցաւ եւ դարձաւ մեծ համալիր՝ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին տնօրինումով: Առաքելութիւնը եւ առաքելութեան նպատակը կը մնայ նոյնը, ա՛լ աւելի զարգացումներով, սակայն, ինչպէս նշեցի, վայրը փոփոխութեան ենթարկուեցաւ:

«ԱԶԴԱԿ».- Դպրեվանք յաճախողները կրթական-ուսումնական ի՞նչ ծրագիրի կը հետեւին, բնականաբար շեշտը կրօնական-հոգեւորին վրայ կը դրուի, սակայն տղաքը նաեւ այլ նիւթեր կը ստանան:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՋԵԱՆ.- Դպրեվանքը ունի հիմնական երկու բաժին՝ Ժառանգաւորաց եւ Ընծայարան: Առաջին բաժինին մէջ, որ չորս կամ հինգ տարիներ կ'ընդգրկէ, հայագիտական եւ եկեղեցական նիւթերու հիմքը կը դրուի: Անոնց կողքին, անոնք նաեւ կը սորվին երաժշտութիւն, թուաբանութիւն, գիտութիւն, աշխարհագրութիւն, համակարգիչ եւ ընդհանուր գիտութիւն: Իսկ Ընծայարանի բաժինին մէջ, ուսանողները աւելիով կը մասնագիտանան հայագիտական եւ աստուածաբանական նիւթերուն մէջ, ներառեալ՝ հոգեբանութիւն, մանկավարժութիւն, ընկերագիտութիւն, իմաստասիրութիւն, կրօններու գիտութիւն, եւ այլն...: Ընծայարանի սաները նաեւ կ'ունենան այցելու դասախօսներ, որոնց միջոցաւ ուսանողներ իրենց մակարդակին համապատասխան նիւթերու կը ծանօթանան եւ կը զարգանան: Իսկ Ուրբաթ երեկոները, որ յատկացուած է արտադասարանային յայտագիրներու, զանազան նիւթերու մասնագէտ դասախօսներ կը հրաւիրուին, որպէսզի դպրեվանեցիները ծանօթանան նաեւ հայագիտական եւ կրօնական նիւթերէ դուրս գիտութիւններու եւ նորութիւններու:

«ԱԶԴԱԿ».- Դպրեվանք աւարտող շրջանաւարտները ինչպէ՞ս կը շարունակեն իրենց ուղին: Կրնա՞ք ընդհանուր պատկեր մը տալ:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՋԵԱՆ.- Դպրեվանքէն շրջանաւարտը իր դիմաց ունի հիմնական երեք ուղի՝ կուսակրօն քահանայութիւն (այսինքն՝ ոչ ամուսնացեալ եկեղեցական), ամուսնացեալ քահանայութիւն եւ իբրեւ աշխարհական

ուսուցիչ կամ ծառայող՝ մեր ազգային եւ եկեղեցական հաստատութիւններէն ներս: Եթէ շրջանաւարտը կուսակրօնութեան կոչումը ունի, Տեսչութեան ճամբով կը դիմէ Վեհափառ Հայրապետին, որպէսզի ըստ յարմարւոյն, ընդունուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութենէն ներս, իսկ եթէ ամուսնացեալ քահանայութեան, ապա պէտք է դիմէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերէն մէկուն, որպէսզի ամուսնանալէ ետք ձեռնադրուի իբրեւ ամուսնացեալ քահանայ նոյն թեմին մէջ, այլ խօսքով՝ Լիբանանէն սկսեալ մինչեւ Միացեալ Նահանգներ: Այսօր մեր կրթական հաստատութիւնները եւ Ազգ. Առաջնորդարանները կարիքը ունին Հայերէնի գիտակ եւ ազգային շունչով պատրաստուած ուսուցիչներու եւ ղեկավարներու, ուստի աշխարհական մնալ փափաքողները իրենց ասպարէզը կը գտնեն այնտեղ: Այսօր մեր շրջանաւարտները զանազան թեմերու մէջ, Սփիւռքի գաղթօճախներու մէջ իրենց ծառայութիւնը կը բերեն՝ հպարտութիւն պատճառելով Դպրեվանքին:

«ԱԶԴԱԿ».- Այս տարուան նորութիւններէն կարելի է նկատել արցախցի մեր հայորդիներուն ներկայութիւնը Դպրեվանքի մէջ, ինչ որ աննախընթաց երեւոյթ է: Խօսինք այս նախաձեռնութեան մասին:

ՊԱՐՈՅԻՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՋԵԱՆ.- Արցախի մեր հայրենակիցներու՝ իրենց հողերէն բռնի տեղահանութենէն ետք, Արամ Ա. Վեհափառ Հայրապետի մնայուն մտահոգութիւնն էր Արցախահայութիւնը՝ միշտ մտածելով, թէ ինչպէ՞ս կրնայ ձեռք երկարել անոնց: Տարբեր մակարդակներու վրայ Արցախահայութեան օժանդակելու ծրագիրին մէջ, Նորին Ս. Օծութիւնը նաեւ ուզեց Դպրեվանքը տեսնել նոյն աշխատանքին մէջ: Հետեւաբար, ան թելադրեց, որ եթէ կան արցախցի ուսանողներ, որոնք կը փափաքին իրենց ուսումը Դպրեվանքի մէջ շարունակել, անոնց աջակցութիւն ցուցաբերենք: Այդ հրաւերին ընդառաջեցին շատեր, սակայն Լիբանանի կացութիւնը չօգնեց, որ բոլոր փափաքողները քայլ առնեն Դպրեվանք գալու: Սակայն, հակառակ այս վիճակին, չորս արցախցի ընտանիքներ իրենց զաւակները վստահեցան Դպրեվանքին, որոնց նաեւ միացաւ Հայաստանի Մասիս շրջանէն պատանի մը եւս: Այս մէկը թէեւ աննախընթաց երեւոյթ մըն է Դպրեվանքին մէջ՝ ցոյց տալու համար Դպրեվանքի համազգային առաքելութեան տարողութիւնը, բայց նաեւ պէտք է նշել, որ Կիլիկիոյ Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանը արցախցի եղած է:

«ԱԶԴԱԿ».- Գիտենք, որ Դպրեվանքէն շրջանաւարտներ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ բարձրագոյն կրթութեան հետեւելու ուղիով կ'ընթանան եւ անոնք նոյնիսկ յաճախ օտար երկիրներ կը մեկնին իրենց համալսարանական ուսումը ստանալու: Խօսինք Դպրեվանքի սաներուն նկատմամբ ցուցաբերուած այս մօտեցումին մասին:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՋԵԱՆ.- Արամ Ա. Կաթողիկոս իր իսկ կեանքի փորձառութենէն եւ վաստակէն մեկնած՝ միշտ կը քաջալերէ, որ Միաբան Հայրերը իրենց ուսման ճանապարհը շնորհատեն: Յատկապէս, անոր շնորհիւ, մեր Կաթողիկոսութեան շուրջ գոյութիւն ունեցող միջազգային կապերը վաստակաշատ համալսարաններու հետ բազմաթիւ են: Պէտք է նաեւ նշել, որ Վեհափառ Հօր ուսման քաջալերանքին մէջ միայն աստուածաբանական նիւթերը չեն, այլ նաեւ՝ զանազան նիւթեր, որոնք կրնան նպաստել մեր առաքելութեան: Հետեւաբար, Դպրեվանքի շրջանաւարտները իրենց դիմաց գեղեցիկ առիթ մը ունին ուսանելու աշխարհահռչակ համալսարաններուն մէջ: Իբրեւ արդիւնք՝ այսօր նկատառելի է թիւը Դպրեվանքէն շրջանաւարտ կուսակիօն թէ՛ մասնագէտ քահանաներուն, ինչպէս նաեւ՝ աշխարհականներուն, որոնք օտար համալսարաններէն վկայուած են: Դպրեվանքին մէջ միշտ կը շեշտենք, որ անոնք, երբ աւարտեն Դպրեվանքը, պիտի չդադրին աշակերտ ըլլալէ եւ ձեռք պիտի ձգեն բարձրագոյն վկայականներ՝ ի շահ մեր եկեղեցւոյ եւ ազգին:

«ԱԶԴԱԿ».- Արդեօք Դպրեվանք մտնելու տարիք մը կա՞յ. ընդունուած տարիքը շրջանցած անձ մը եթէ զգայ, որ իր մէջ այս կոչումը ունի, առիթ կ'ունենա՞յ Դպրեվանքին միանալու:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՋԵԱՆ.- Դպրեվանքի ընդունման տարիքը 12 տարեկան է: Ոեւէ պատանի, որ բոլորած է 12-ը, կրնայ դիմել Դպրեվանք եւ իր ուսումն ու կրթութիւնը շարունակել մեր հաստատութեան մէջ: Բնականաբար այդ տարիքին եկեղեցական կոչում զգալը կանուխ է, սակայն տարիներու ընթացքին, մինչեւ աւարտելու տարիքը, իր մէջ կը սկսի պարզուիլ, թէ ունի՞ եկեղեցական դառնալու կոչում: Նաեւ կ'ունենանք երիտասարդներ, որոնք արդէն իսկ 20 տարիքը անց են եւ կը զգան եկեղեցական դառնալու կոչումը, կրնան նոյնպէս դիմել Դպրեվանք: Այս առումով, այս տարի, որովհետեւ ունինք 20 տարիքը անց թեկնածուներ, Դպրեվանքին մէջ ունեցանք համալսարանաւարտ ուսանողներու յատուկ ծրագիր մը: Այս մէկը կ'օգնէ արդէն իսկ ուսանած երիտասարդներուն, որպէսզի իրենց եկեղեցական կոչումը կեանքի վերածեն:

«ԱԶԴԱԿ».- Դպրեվանքը նաեւ երկար տարիներ իսկական տուն կ'ըլլայ հոն յաճախողներուն. ի՞նչ մթնոլորտ կը տիրէ ընդհանրապէս, դպրեվանեցիները իրենց ընթացիկ դասերէն դուրս ի՞նչ աշխատանքներ կ'ունենան, մանաւանդ որ անոնք ապագային պիտի վերադառնան իրենց ժողովուրդի ծառայութեան:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՋԵԱՆ.- Ինչպէս նշեցիք, Դպրեվանքը տուն է: Դպրեվանքի մէջ ընտանեկան մթնոլորտ կը տիրէ: Դպրեվանեցիները իրարու հետ կ'ապրին, կ'ուսանին, կը խաղան, կը զուարճանան եւ կ'աշխատին միասին ու միատեղ: Զկայ անձ մը, որ նոյնիսկ մէկ տարիով Դպրեվանքէն անցած է եւ անկէ որեւէ դրական ազդեցութիւն եւ յիշատակներ չկրէ: Նոյնիսկ կան եւ

արդէն իսկ մեծ հայրիկ դարձած նախկին դպրեվանեցիներ, որոնց ներկայութեան երբ Դպրեվանքի նիւթը բացուի, հաճոյքով կը յիշեն երբեմնի դժուար, սակայն միշտ յիշատակներով լեցուն դպրեվանքեան տարիները: Այսօր աւելիով Դպրեվանքը տուն դարձած է, ուր ամէն իմաստով հոգատարութիւն կը ցուցաբերուի: Բժշկական, հոգեբանական, ընկերային, արտադասարանային, նոյնիսկ իր սաներուն առօրեայ կարիքները Դպրեվանքը կը հոգայ: Ունինք մարզասրահ եւ խաղասրահ, որոնք օժտուած են արդիական խաղերով եւ գործիքներով: Ունինք Դպրեվանքի Տիկնաց խորհուրդ, որ զանազան ձեւերով մեզի կ'աջակցի: Միջնորդտն ու իրենց տրուած խրատները ինքնաբերաբար բոլոր դպրեվանեցիները եղբայրական սիրով կը շաղկապէ:

«ԱԶԴԱԿ».- Ի՞նչ խօսք, պատգամ կամ կոչ ունիք մեր ընթերցողներուն:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՋԵԱՆ.- Դպրեվանքը սփիւռքեան այնպիսի կեդրոն մըն է, որ պէտք է մնայուն ներկայութիւն դառնայ մեր աղօթքներուն, մտածումներուն, աշխատանքներուն եւ քարոզչութիւններուն մէջ: Առանց Դպրեվանքի՝ կարելի չէ պատկերացնել մեր եկեղեցւոյ ապագան, նոյնիսկ՝ գաղութներու պահպանման վիճակը, մանաւանդ սփիւռքեան կեանքին մէջ: Այսօր ամէն տեղ հոգեւորական եւ աշխարհական մարդուժի կարիքը կայ: Դպրեվանքը այդ նպատակին եւ առաքելութեան լծուած է: Որքան մեր առաքելութեան նպաստող մեծաթիւ մարդիկ ըլլան Դպրեվանքի շուրջ, այնքան աւելի օգնած կ'ըլլանք, որ Դպրեվանքը իր առաքելութիւնը շարունակէ: Դպրեվանքի մասին պէտք է քարոզչութիւն տարուի, որպէսզի երիտասարդներ քաջալերուին Դպրեվանք յաճախելու եւ ապագայ ծառայող դառնալու: Դպրեվանքը կարիքը ունի նաեւ նիւթաբարոյական աջակցութիւն ցուցաբերող հայորդիներու, որպէսզի Դպրեվանքին մէջ ուսանողները նուիրուին միայն իրենց կազմաւորման եւ կրթութեան ծրագիրին: Աւելի քան 94 տարիներու վաստակը կը վկայէ, որ այս հաստատութեան հանդէպ ցուցաբերուած ամէն տեսակի խնամք, քաջալերանք եւ նուիրում իր արժէքը կը գտնէ համազգային մակարդակի վրայ: Զեր վարձքը կատար եւ շնորհակալ ենք, որ ձեր հարթակը տրամադրեցիք մեր սիրելի Դպրեվանքին:

Հարցազրոյցը վարեց
ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ» ՄԱՅՐ ՏԱՃԱՐԷՆ ՆԵՐՍ**

Հովանավորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը 25 տարիներէ ի վեր, ամէն Նրեքշաբթի, առաւօտեան ժամը 10:00-11:00, Կաթողիկոսարանի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարէն ներս կը կատարէ Հոգեւոր Լսարան, ուր Միաբան Հայրերու կողմէ սաղմոսասացութեամբ, շարականի ուսուցումներով, աղօթքներով ու մանաւանդ կրօնական խորհրդածութիւններով, մեր ժողովուրդի զաւակներուն կը ջամբուին հոգեւոր մատակարարում:

Առ այդ, Հոկտեմբեր ամսուայ ընթացքին, կատարուած են հետեւեալ հոգեւոր խորհրդածութիւնները.-

ա) 1 Հոկտեմբեր 2024-ին, Բաժանմունքի Վարիչ՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան բացումը կատարեց 2024-25 տարեշրջանի Հոգեւոր Լսարանին:

բ) 8 Հոկտեմբեր 2024-ին, Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան խօսեցաւ «Արտաքին նեղութիւններ եւ ներքին խաղաղութիւն» նիւթին մասին:

գ) 15 Հոկտեմբեր 2024-ին, Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալգլըճեան խօսեցաւ «Աններելի մեղք՝ Ս. Հոգիին դէմ» նիւթին մասին:

դ) 22 Հոկտեմբեր 2024-ին, Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուալերթանեան խօսեցաւ «ԶԱՍՏՈՒՄ ԵՒ ՆՆՈՒՄ ԿՐԻՍՏՈՍՈՒՄ ԿՐԻՍՏՈՍՈՒՄ ԿՐԻՍՏՈՍՈՒՄ ԿՐԻՍՏՈՍՈՒՄ» նիւթին մասին:

ե) 29 Հոկտեմբեր 2024-ին, Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան խօսեցաւ «Ստեղծագործութիւնը եկեղեցւոյ հայրերու դիտանկիւնէն» նիւթին մասին:

**ՀՈԳԵՍՏԱԲՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝
«ՀԱՒԱՏՔ ԵՒ ԿԵԱՆՔ» ՅԱՅՏԱԳՐԻ ԸՆԴՄԵՉԷՆ**

Հովանավորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը

քը, համագործակցութեամբ Լիբանանի «Վանայ Ձայն» ռատիոկայանին, ժողովուրդին կը մատուցէ հոգեւոր, բարոյախօսական եւ դաստիարակչական յայտագիր մը՝ «Հաւատք եւ Կեանք» խորագրով, որ տեղի կ'ունենայ ամէն Հինգշաբթի, երեկոյեան ժամը 7:00-8:00, ուղիղ սփռումով:

Առ այդ, Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսներու ընթացքին, Միաբան Հայրերու կողմէ կատարուեցան հետեւեալ խորհրդածութիւնները.-

ա) 5 Սեպտեմբեր 2024-ին, Հոգշ. Տ. Անդրանիկ Վրդ. Քիւրիւմեան խօսեցաւ «Կրօնքը եւ Աստուածաշունչը» նիւթին մասին:

բ) 12 Սեպտեմբեր 2024-ին, Արժ. Տ. Գարեգին Քհնյ. Պետուրեան խօսեցաւ «Եկեղեցին՝ Քրիստոսի Մարմինը եւ Առաքելութիւնը» նիւթին մասին:

գ) 19 Սեպտեմբեր 2024-ին, Հոգշ. Տ. Արմէն Աբղ. Գալայճեան խօսեցաւ «Քրիստոնեայ ընտանիքին հասկացողութիւնը» նիւթին մասին:

դ) 3 Հոկտեմբեր 2024-ին, Գերպ. Տ. Անանիա Մ. Վրդ. Գուճանեան խօսեցաւ «Ծուլութեամբ չապրիլ» նիւթին մասին:

ե) 10 Հոկտեմբեր 2024-ին, Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան խօսեցաւ «Եկեղեցական Կոչումը» նիւթին մասին:

զ) 17 Հոկտեմբեր 2024-ին, Բրշ. Նշան Սրկ. Անտրեան խօսեցաւ «Յօթը Առաքինութիւնները» նիւթին մասին:

է) 31 Հոկտեմբեր 2024-ին, Արժ. Տ. Տաթեւ Ա. Քհնյ. Միքայէլեան խօսեցաւ «Ազանդաւորական շարժումներ եւ Համաշխարհայնացում» նիւթին մասին:

ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՍԷՉ

Լիբանանի Հայ Գաղութի կեանքէն ներս գործող հոգեւոր, ընկերային, մշակութային եւ բարեսիրական հաստատութիւններ, զանազան ծրագիրներ եւ ձեռնարկներ իրագործեցին եւ համագործակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, Միաբան հայրեր հիւրընկալեցին:

Միաբան Հայրերը յիշեալ ձեռնարկներու ընդմէջէն, եկեղեցւոյ առաքելութիւնը տարին ժողովուրդին մէջ, իրենց ներկայութեամբ եղան ժողովուրդին հետ եւ իբրեւ Հայ եկեղեցւոյ նուիրեալ սպասաւորներ՝ իրենց ծառայութիւնը մատուցին ժողովուրդին:

Այս առիթով, Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսներու ընթացքին, անոնք պատգամներով, քարոզախօսութեամբ ու դասախօսութիւններով իրենց մասնակցութիւնը բերին վերոյիշեալ ձեռնարկներուն.-

ա) Կիրակի, 8 Սեպտեմբեր 2024-ի երեկոյեան ժամը 5:00-ին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցասէր Հոգեւոր Միութեան, «Նանէճեան» Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Բրշ. Նշան Սրկ. Անտըրեան, նիւթ ունենալով՝ «Սիրենք զիրար՝ ինչպէս որ Քրիստոս սիրեց մեզ»:

բ) Կիրակի, 22 Սեպտեմբեր 2024-ի առաւօտեան ժամը 10:00-ին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցասէր Հոգեւոր Միութեան, տեղի ունեցաւ միօրեայ համագումար: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան, նիւթ ունենալով՝ «Մարդուն ապաշխարութիւնը, Աստուծոյ ողորմութիւնը»:

գ) Կիրակի, 6 Հոկտեմբեր 2024-ի երեկոյեան ժամը 5:00-ին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցասէր Հոգեւոր Միութեան, «Նանէճեան» Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան, նիւթ ունենալով՝ «Գերագոյն պատուիրանը՝ Սէրն է»:



ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

**ԳԱՆՍԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ՝
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԻՐԸ**

Երեքշաբթի, 3 Սեպտեմբեր 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մեջ ընդունեց Լիբանանի մօտ Գանատայի Դեսպան Սթեֆանի Սըքթալըմը:

Հանդիպումը առիթ եղավ ընդհանուր գիծերով անդրադարձ կատարելու Կազայի պատերազմին, Լիբանանի նախագահական ընտրության, Հայաստանի ու Գանատայի յարաբերության, Գանատայի Հայ համայնքին եւ Ազըրպեյճանի մեջ տեղի ունենալիք կենտրոնի նուիրում համագումարին:

Դեսպանը ընթրիքի հիւրը եղավ Նորին Սրբութեան:

**ՖՐԵՉՆՈՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ
ՆՈՐՅՈՒՐԸ ԺԱՄԱՆԵՑ ԼԻԲԱՆԱՆ
ԵՒ ՍՏԱՅԱԻ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ**

Հովանաւորութեամբ եւ օրհնութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին, Լիբանանի ժամանեցին Ամերիկայի Միացեալ Նահանգներէն՝ Ֆրեզնոյի բժշկական առաքելութեան խորհուրդի բժիշկները, գլխաւորութեամբ Ֆրեզնոյի մեջ Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոս եւ խորհուրդի Նախագահ Պերճ Արգարեանի:

Արդարեւ, Երեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2024-ի առաւօտուն, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մեջ, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց վերո-

յիշեալ խորհուրդի բժիշկները: Խորհուրդի նախագահը Վեհափառ Հայրապետին յայտնեց իր եւ բժիշկներուն որդիական երախտագիտութիւնը, որ անգամ մը եւս իրենց առիթ ընձեռնուեցաւ ըլլալու Լիբանանի մեջ՝ Նորին Ս. Օծութեան հովանիին ներքեւ: Այս առիթով Արգարեան Նորին Սրբութեան ներկայացուց ընդհանրապէս Ֆրեզնոյի բժշկական առաքելութեան խորհուրդին եւ մասնաւորաբար լիբանանահայութեան մատուցելիք ծառայութեան ծրագիրները:

Ապա, իր օրհնութեան խօսքը արտասանեց Վեհափառ Հայրապետը: Առաջին հերթին, ան բարձր գնահատեց նման աշխատանքի մը նախաձեռնութիւնը եւ նախաձեռնութեան գործնապէս նեցուկ կանգնող խումբ մը կամաւոր Հայ թէ օտար բժիշկները: Ան ըսաւ, որ այս աշխատանքը պարզապէս կամաւոր ծառայութիւն մը չէ՝ ուղղուած մեր ժողովուրդին, այլ սրբազան ու անշահախնդիր առաքելութիւն է: Ձեր կատարածը, բառին ամբողջական իմաստով, ծառայութիւն է: Ինչպէս Քրիստոս աշխարհ գալով՝ եղաւ կարիքաւորին ու հիւանդին կողքին, դուք եւս, իբրեւ բժիշկ-առաքեալներ, եկած էք ըլլալու լիբանանահայ մեր ժողովուրդի գաւակներուն հետ եւ կանգնելու անոնց կարիքներուն կողքին, երբ երկիրը կը դիմագրաւէ ընկերային, տնտեսական ու բժշկագիտական լուրջ մարտահրաւերներ ու դժուարութիւններ, ընդգծեց Նորին Ս. Օծութիւնը:

Իր խօսքի աւարտին, Վեհափառ

Հայրապետը անգամ մը եւս իր գնահատանքը յայտնեց եւ հայրական ու Հայրապետական օրհնութիւնը տուաւ բժիշկներուն՝ անոնց մաղթելով բարի ու յաջող ծառայական առաքելութիւն:

Յայտնենք, որ Ֆրեզնոյի բժշկական առաքելութեան խորհուրդը տասը օրերու ընթացքին գտնուեցան տարբեր շրջաններու զանազան ընկերա-բժշկական կեդրոններ եւ օգտակար հանդիսացան մեր ժողովուրդի զաւակներուն:

**ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՔ՝
Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Երեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2024-ին, վանաբնակ Միաբան Հայրերու հաւաք մը կայացաւ, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Վեհարանի դահլիճին մէջ, գլխաւորութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին:

Հաւաքի ընթացքին, Վեհափառ Հայրապետը իր ուրախութիւնը յայտնեց ի տես Մայրավանքին թէ թեմերուն մէջ Միաբան Հայրերուն տարած աշխատանքներուն եւ մանաւանդ անոնց ունեցած հաւատարմութեան՝ թէ՛ իրենց ստանձնած պատասխանատու պաշտօններուն եւ թէ՛ մեր Ս. Աթոռին ու

անոր առաքելութեան նկատմամբ: Այս առիթով ան շեշտեց հաւատարմութիւնը մեր կեանքին ու առաքելութեան առանցքը դարձնելու հրամայականը: Իր խօսքին մէջ, Նորին Սրբութիւնը յատկապէս ընդգծեց հաւատարմութեամբ մեր ծառայութիւնը իրագործելու սրբազան առաքինութիւնը: Այս առիթով ան ըսաւ, թէ առանց հաւատարմութեան մեր ծառայութիւնը կը պարպուի իր իմաստէն եւ Աստուծոյ ու մեր ժողովուրդին ուղղուած ծառայութիւնը կը դառնայ առօրեայ գործընթացքի: Ուստի, մեր առաքելութիւնը հաւատարմութեամբ իրագործելը առաջնահերթ կարեւորութիւն կը ներկայացնէ Կիլիկեան Ուխտի Միաբանութեան ծառայական կեանքին մէջ

Ապա, Նորին Ս. Օծութիւնը ընդհանուր գիծերով պարզեց յատկապէս Հայ կեանքը յուզող խնդիրներն ու մարտահրաւերները եւ անոնց նկատմամբ մեր Ս. Աթոռին դիրքորոշումներն ու կեցուածքները: Այս առիթով ան նաեւ անդրադարձաւ Միաբան Հայրերու վանական պատասխանատուութեանց եւ խօսեցաւ յառաջիկային իրագործելի ծրագիրներուն ու աշխատանքներուն մասին:



**ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ
Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ**

ԿԻՐԱԿԻ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024: Գ. ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈՒԽՄԱՆ: ՏՕՆ ԳԻՒՏԻ ԳՕՏԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան, իսկ Պիքֆայայի Ս. Աստուածածին Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:

ԿԻՐԱԿԻ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024: Դ. ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈՒԽՄԱՆ: ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ Դ ՅԱՆՆԱՅԷ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Յովհաննէս Ծ. Վրդ. Սաղտըճեան, իսկ Պիքֆայայի Ս. Աստուածածին Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

ԿԻՐԱԿԻ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024: ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուլեթեանեան, իսկ Պիքֆայայի Ս. Աստուածածին Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեան:

ԿԻՐԱԿԻ, 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024: Բ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան եւ ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին Հայրապետական Պատգամը, նուիրուած՝ Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 33-րդ ամեակին առթիւ, իսկ Պիքֆայայի Ս. Աստուածածին Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան:

ԿԻՐԱԿԻ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024: Գ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻՆ: ՏՕՆ ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալլըճեան, իսկ Պիքֆայայի Ս. Աստ-

ուածածին Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան:

ԿԻՐԱԿԻ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024: Դ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

ԿԻՐԱԿԻ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024: Ե. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:

ԿԻՐԱԿԻ, 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024: Զ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան:

ԿԻՐԱԿԻ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024: Է. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան:

